



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2211

195

Гимназија  
Угрин  
600.

84  
Z-66

Радиони  
1887

2011

84

ԱՎ

-66

ՎԻԿՏՈՐ ՀԻՒԶՈ

243



ՄԱՀԱՊԱՐՏԻ

ՎԵՐՋԻՐԻ ՕԲԵ

51009

2003

Թ. Ա. Գ. Ա. Խ. Ե. Տ.

195

ԱՀԵՔՍԱՆԴՐ ԱԲԵԼՅԱ

243



ԹԻՖԼԻՍ  
ՅՈՎԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՏՊԱՐԱՆ  
ՕՐԵԼԵԱՆ ՓՈՂՈՎ, Տ. 1/2

1887

19

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Վիկտօր Հիւգօի այս գրքովիր մեր առջեցացումէ սարսափելի հոգեկա՞ն շանջանքների այն հոդը, որի մէջ անընդհատ տուչովիտ մէ մահապարտը մինչև զիվօտին բարձրանալու րոպէն։ Այն հատու գաճնակը, որ վայրկենաբար լնկումէ յանցաւորի պարանոցի վերայ, կամ այն մնագութ՝ պարանը, որ սեղմում է նրա կոկորդը, չնչափ սարսափ չէ ազգում մարդու վերայ, որչափ այս հոգեկան ողբերգութիւնը, որ բառատեղծ-հոգեբանը իւր թափանցող հանճարով բուրս է բերել։ Եթէ մի ոք, որ ելրէք մի ըոպէ իւր կեանքում չէ մտածել այն զոհերի մասին, որանց գլխին մարդկային արգարարագատութիւնը ժամանակ առ ժամանակ կատարումէ նոր անողոք վճիռը, կարդայ այս գրքովիր—նրա սիրտը լցուելու է անբաւ ատելութեամբ դէպի մա՛ ւան պատիժը։

ԹԱՐԳՄԱՆԻՉ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԸ

## ՄԱՀԱՊԱՐՏԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԸ

Այս գրքի ծագումը կարելի է բացադրել երկու կերպով:—Գուցէ գտնուած լինի դեղնած և անհստասար թղթերի մի կապոց, որոնց վերայ միմեանց յետեւից արձանազրված լինէին թշուառի մտքելը, բայց և գուցէ պատահել է մի մարդ, երազող, զիտութեան օգտի համար բնութիւնը գիտող, փիլիսոփայ, երևի, բանաստեղծ, որի մէջ այդ միտքը փոխվել է քմահաճութեան, երևակայութեան, որ վերցը է նրան, կամ, աւելի լաւ ասած, անձնատուր է եղել նրան, և ալլապէս չէ կարողացել ազատվել նրանից, եթէ ոչ ՚ի զիր արկանելով նրան:

Թո՞ղ այդ երկու բացադրութիւններից ընթերցողը ընտրի այն, որը իրան զիւր կ'գայ:

Ա.

Բիսեթը \*)

Գատապարտուած եմ մահուան: Աշա հինգ  
շաբաթ է, որ ես ապրում եմ այդ մտքի հետ,  
միշտ նրա հետ միայնակ, միշտ նրա ներկայու-  
թիւնից սառնութեամբ շրջապատուած, միշտ  
նրա ծանրութեան տակ կորացած: Երբեմն,—  
որովհետև ինձ թւում է, որ այն ժամանակից  
անցել են տարիներ և ոչ շաբաթներ,—ես մարդ  
էի, որպէս մարդ: Օրերը, ժամերը, րոպէները  
ունեին իրանց որոշեալ իմաստը. լիմ մատաղ և  
հարուստ ոգին լի էր երեակայութիւններով: Նա  
սիրում էր արծարծել նրանց անկապ և ան-  
վերջ իմ առջեւ, նկարելով կեանքի նիշար և  
կոշտ հիւսուածքի վերայ անսպառելի զրուագ-  
ներ: Այդ բոլորը մանկահասակ զեղեցկուհիներ  
էին, եպիսկոպոսական փալլուն մանդիաներ,  
տարած կուխներ, լուսով և աղմուկով լեցուն  
թատրոններ, և յետոյ՝ զարձեալ զեղեցկուհիներ,  
շաղանակենիների լայն գրկոց ներքոյ, և մութը

\*.) Փորիզում մի յայտնի բանդ:

գլշերով զբօսանքներ: Երեակայութեանս մէջ  
միշտ մի տեսակ տօն էր, ես կարողանում էի մտա-  
ծել, ինչի վերայ էլ որ կամենալի. ես ազատ էի:

Այժմ ես կամազրկութեան մէջ եմ: Իմ  
մարմինը կաշկանդուած է բանդում, խելքս գե-  
րի է մի մտքի, սոսկալի, գաժան, արիւնալի,  
անողոք մտքի: Մի գաղափար միայն ու-  
նեմ, մի համոզմունք, մի անսուտ ճշմարտու-  
թիւն:—Գատապարտուած եմ մահուան:

Ինչ որ էլ անում եմ, նա միշտ այստեղ է,  
այդ դժոխալին միտքը կանգնած է ինձ մօտ,  
ինչպէս մի արճճեալ ուրուական, միայնակ,  
խանդոտ, ամեն մի զուարճութիւն մղող, կանգ-  
նած է դէմ յանդիման ինձ, անբաղդիս, հետ,  
և ինձ ձգձգում է սառցալին ձեռներով, երբ  
ես կամենում եմ զլուկս թեքել, կամ աչքերս  
խփել: Նա զանազան կերպարանքներով զարտա-  
մես է լինում ամենուրեք, ուր խելքս կը կամե-  
նար խուսափել նորանից. ինչպէս մի զարհուրելի  
աղաղակ, միախառնվում է այն ամեն խօսքերի  
հետ, որոնցով դիմում են դէպի ինձ, կազում է ինձ  
հետ միասին բանգիս զգուելի վանդակներին, չէ  
անջատվում ինձանից, երբ ես արթուն եմ, հըս-  
կում է իմ ցնցողական քունը, և երազում դա-  
նակի կերպարանքով երեւում է ինձ:

Զարթնելով, ես վեր եմ թուզում, հալածուած նրանից, և մխիթարում եմ ինձ, որ այդ միայն երազ էր: Եւ ինչ: Դեռ իմ ծանրացած կոպերս այնքան բացուած չեն լինում, այդ օր հասական, սարսափելի իրականութեան վերադրված միտքը տեսնելու համար,—որը ինձ շըրջապատում է յատակի քրտնած և կեղոտտ սաւլերի վերայ, գիշերային կանթեղի գունատ ճառագայթի վերայ, իմ կոշտ կտաւեալ խալաթի գործուածքի վերայ, պահապանի մութկերպարանքի վերայ, որի պայտուակը փայտում է բանդի վանդակների արանքներից,—երբ արդէն ինձ թուում է, որպէս թէ մի ինչ-որ ձայն շշնչում է ականջիս.—Պատապարտուած ես մահուան:

Ա.

Օգոստոսեան մի գեղեցիկ առաւօտ էր:

Արդէն երեք օր էր, որ իմ դատը սկսվել էր. երեք օր էր, անունո ու ոճրագործութիւնս ամեն առաւօտ ժողովում էին հանդիսականների ամրող խմբեր, որ տեղաւորվում էին դատաստանական դահլիճի նստարանների վերայ, ինչպէս ուրուրներ՝ դիակի շուրջը, երեք

օր էր, ինչ այդ դատաւորների, վկաների, փաստաբանների, արքայական դատախազների ֆանտասմագորիան ներս ու դուրս էր տնում և անցնում էր իմ մօտով, երբեմն կոպիտ, երբեմն արիւնալի, բայց միշտ մուալ և սարսափելի: Առաջին երկու դիշերները անհանգստութիւնից և սարսափից աչքերս չեմ խփել, երբորդ գիշերը ես քնեցի լողնութիւնից և տիրութիւնից: Կէս գիշերին, երբ երգուեալները իմ ոճրագործութիւնը դատում էին, ես նրանց թողի: Ինձ կրկին բերին իմ բանդի յարդի մօտ, և ես հենց այդտեղ էլ քնեցի խոր քնով, մոռացութեան քնով: Ճատ օրերից յետոյ, այս էին իմ առաջի հանգիստ ժամերս:

Ես դեռ ընկղմած էի խոր քնի մէջ, երբ ինձ զարթեցրին: Այս անգամ բաւական չէր բանգապահի ոլայտած, ծանր կոշիկների թրիկթիկոցը, նրա մի կապոց բանալիների զրնգոցը և փականքների վայրենի կրճտումը՝ ինձ մահաքընից զարթեցնելու համար, հարկաւորվեց նրա կոպիտ ձայնը՝ ականջիս մէջ, և նրա կոշտ ձեռը՝ ուսիս վերայ:—Դէ, զարթնեցէք: Ես բացարի աչքերս և վախեցած նստեցի մահճակալիս վերայ: Այդ բոպէին ես տեսալ բանդիս նեղ և բարձր պատուհանից դրացի միջանցքի առաստաղի (միակ երկնքի, որ ես կարողա-

նում էի տեսնել) այն տեղին արտափայլը, որի մէջ բանդի մթութեան սովորած աչքերը այնպէս լաւ կարողանում են ճանաչել արեգակին: Սիրում եմ արեգակը:

— Լաւ եղանակ է,—ասացի ես պահապանին: Բովէաչափ նա լռեց, կարծես, տարակուսելով, արժէ արգեօք որա համար բառեր շրուայլել, յետոյ մի տեսակ ուժով մըմրթաց.— Թերևս և այսպէս է:

Ես անշարժ նստել էի մահճակալի վերայ կիսաքուն, ժպառուն և անթարթ նայում էի առաստաղի ճաճանչափայլ, խաղաղ և ոսկեզոյն արտափայլման:

— Հիանալի օր է,—կրկնեցի եօ:

— Արդպէս լինելը այդպէս է,—պատասխանեց բանդապահը,—բայց ձեզ սպասում են:

Այդ մի քանի բառերը, իբրև միջատի թըռուէքը արգելող մի թել, բռնի գլորեցին ինձ իրականութեան մէջ: Յանկարծ ես, որպէս կայծակի փայլի մէջ, տեսայ քրէաղատների մոայլ դահլիճը, դատաւորների կիսաշրջանը—կարմիր ու արինալի շորերով,—անմիտ դէմքերով երեք շարք վկաներին, իմ նստարանի երկու ծայրերից՝ երկու ժանդարմներին և ամբոխի ստուերում եռացող սե, ալետատան շորերը և գլուխները,

*Արք*  
տասներկու երգուեալների ինձ վերայ յառած անթարթ հայացքները, որ արթուն էին այն ժամանակ, երբ ես քնում էի:

Ես վեր կացայ, իմ ատամները չըխչխկում էին, ձեռներս դոդոզում և չէին կարողանում զտնել շորերս, ոտնենքումս թուլութիւն կար: Հէնց առաջին քայլերում ես աալթաքեցի, ինչպէս ուժից վեր ծանրաբեռնուած ըեռնակիր: Այսուամենայնիւ, ես բանդապահի ետևից քարշ եկայ:

Երկու ժանդարմներ սպասում էին ինձ խցիս սեամում: Կրկին ինձ կապեցին շղթաներով: Նրանց մէջ կար մի դժուարիմատ փականք, որը նրանք կողպեցին: Ես չընդդիմացաւ: Նրանք հազցնում էին մի մեքենայ միւսի վերայ:

Մինք անցանք ներքին բակը: Վռաւօտեան օդը կենդանացրեց ինձ: Ես բարձրացրի գլուխս: Երկինքը պարզ էր, և արեգակի ջերմ ճառագայթները, երկար ծխնելողներով ընդհատուած, գծագրում էին բանդի բարձր և մոայլ պատերի գագաթների վերայ լուսի մեծ անկիւններ: Եղանակը իսկուպէս շատ հիանալի էր:

Մինք բարձրացանք զոլորակ և պտուտակածե սանդուխքով, անցանք առաջին միջանցքը, յետոյ երկրորդը, յետոյ երրորդը, յետոյ բացուեց մեր առջե մի ցածր գուռն: Տաք օդը և ձայնե-

*Վահագոյ*

րի շշնչոցը շշմացրին ինձ: Այդ ամբոխի շնչառութիւնն էր՝ քրէաղատների դահլճում: Ես ներս մտայ:

Ես յայտնուելիս՝ բարձրացաւ գէնքերի և ձայների աղօւկը: Խստարանները որսումամբ շարժեցին, միջնորմները ճոճուացին, և այն ժամանակ, երբ ես անցնում էի երկար դահլիճով, երկու շարք զինուորների միջով, ինձ թւում էր, որ ես մի կենտրօն եմ, դէպի որը ձգտվում են այն թելերը, որտնք շարժում են այդ բոլոր հետաքրքրուող և թեքվող երեսները:

Այդ բոպէին ես նկատեցի, որ առանց շըդթաների եմ, բայց չեմ կարողանում մտաբերել, թէ որտեղ և երբ նրանցից ազատուեցի:

Յանկարծ տիրեց խորին լուռթիւն: Ես հասայ մինչև իմ տեղի: Նոյն իսկ բոպէին, երբ ամբոխի մէջ դադարեց քառոր, նա ընդհատվեց նոյնպէս և իմ մտքերի մէջ: Յանկարծ պարզ հասկացայ այն, ինչ-որ մինչև այժմ անքական էր. հասկացայ, որ հասել է վճռական բոպէն, և ես կանգնած եմ այստեղ՝ դտտավը ճիռու լսելու համար:

Անհտուաննելի բան: Այդ միտքը այժմ բոլորին ինձ չը սարսափեցրեց: Գիտուհանները բացուած էին, և օղը, քաղաքալին ձայների

հետ միախառն, ներս էր մտնում վողոցից, գահ-լիճը հարսնատան նման փալում էր, արեգակի ուրախ ճառագայթները տեղ-տեղ գծագրում էին շրջանակների լուսաւոր քառանկիւնիներ՝ յատակի վերայ—երկարածե, ոեղանների վերայ—ծուռ և պատերի անկիւնների վերայ—բեկուած, իսկ պատուհանների մօտ փալող լոյսի խուրձերի մէջ իւրաքանչլւոր մի ճառագայթը ձեւակերպում էր ոսկեփոշու մեծ մեծ հատուածակողմեր (prisme):

Գիտաւորները դահլճի խորքում նայում էին ինքնագոհ կերպով, երևի ուրախութիւնից, որ շտտով կաւարտեն: Խախագահի երեսը, մեղմ, լուսաւորված մի ապակու անդրագարձ լուսով, առանձնապէս բարի և հեղ էր, երիտասարդ գտտակիցը, համարեա, ուրախ-ուրախ շօշափելով իւր ծալէծալ օձիքը, խօսակցում էր մի ինչոր վարդագոյն գլխարկաւոր մանկահասակ կնոջ հետ, որ նստած էր նրա յետեւում, անտարակոյա, ըստ խնամատարութեան:

Միայն երդուեալներն էին երեւում գունաթափ և տանջփած, բայց այդ, երևի, լոյնութիւնից և գիշերվայ անքնութիւնից էր:

Մի քանիսը նրանցից յօրանջում էին: Աչ մի բան նրանց մէջ չէր արտակարում, թէ այդ մար-

զիկ մահուան դատավճիռ էն կարդացել. այդ բուրժուական բարի երեսների վերայ ես կարդում էի միմիայն կուշտ քնելու մեծ ցանկութիւն:

Աւզիդ իմ առջեխս պատուհանը բոլորովին բաց էր: Ես լսում էի, ինչպէս ափում ծաղկավաճառները ծիծաղրում էին. իսկ պատուհանի ստորին պոռշի ծալրում մի ինչ-որ գեղեցիկ գեղնագոյն խոտիկ, երկու սալերի արանքում բռնած և արեգակի ճառագայթով ամբողջապէս պատուած, խաղում էր քամու հետ:

Արդ, ինչպէս կարող էր այդպիսի շնորհալի զգացմունքների մէջ ծագել օրհասական միտք: Ճրջապատուած օդով և արեգակի լուսով, ես ուրիշ ոչինչ բանի համար չէի կարող մտածել, եթէ ոչ ազատութեան համար. յոյսը փայլեց իմ մէջ այնպէս, ինչպէս ցերեկը փայլում էր շուրջո, և ես լսուահարար սպասում էի դատավճիս, ինչպէս որ սպասում են ազատութեան և կեանքի:

Այն ինչ եկաւ իմ փաստաբանը: Նրան սպասում էին: Երկում էր, որ նա հէնց նոր էր փառաւոր և ախորժակով նախաճաշել: Հասնելով տեղը, նա՝ ժպիտը երեսին՝ թեքվեց դէպի ինձ: — Ես յոյս ունեմ, — ասաց նա: — Ճշմարիտ, — պատասխանեցի ես, թեթևացած և նոյնպէս

ժպտալով: — Այն, — սկսեց նա նորից. — ես դեռ ոչինչ չիտեմ նրանց վճռի մասին, բայց հաւանօրէն է, որ նրանք հեռացնեն պաշտպանութիւնը և այն ժամանակ միայն առ միշտ տաժանակիր աշխատանաց դատապարտեն: — Ի՞նչ էք ասում, ողործած տէր, — հակաճառեցի ես զայրացմածը, — մահը հազար անգամ լաւագոյն է:

Այն, մահ. իսկ լետով, — շշնչում էր ինձ մի լինչ-որ ներքին ձայն, — ինչով եմ վտանգում ինձ, այդ ասելով: Ե՞րբ է տեսնվել, որ դատավճիռը կարդացվի ոչ կէս գիշերին, ոչ ջաների լուսով, ու ու մռայլ դահլիճում, մի որ և է ցուրտ, անձրեւալին ձմեռուայ գիշեր: Բայց օգոստոսին, առաւօտեան ութ ժամին, մի այդպիսի գեղեցիկ օր և այդպիսի բարի երգուեալներից... անկարելի է: Եւ իմ աչքերը նորից սկսեցին զբաղվել արեգակի տակ զտնուող գեղեցիկ դեղին ծագկով:

Յանկարծ նախագահը, որ սպասում էր միայն փաստաբանին, հրաւիրեց ինձ վերկենալ: Գինուորները պահապանական դիրք ընդունեցին, որպէս էլէքտրական ոյժից ցնցուած, ամբողջ դահլիճը յանկարծակի ոտքի կանգնեց: Մի ինչ-որ աննշան կերպարանք, որ նստած էր դատապետից ցած՝ սեղանի մօտ, (կարծեմ այդ ժար-

գը գրէֆեօն էր \*) սկսեց խօսել և կարդաց դատավճիռը, որ ճառել էին երդուեալները իմ բացակալութեամբ: Սառն քրատինքը դուրս հոսեց իմ բոլոր անդամներից: Ես յենուեցի պատին, որ չընկնեմ:

— Փաստաբան, չունիք դուք արդեօք ոչ ինչ ասելիք պատժի կիրառութեան վերաբերմամբ,— հարցրեց նախագահը:

« Ես, կարծեմ, այստեղ շատ բան կասէի, բայց միտո ոչինչ չեկաւ: Լեզուս կպել էր կոկորդիս:

Պաշտպանը վերկացաւ:

Ես իմացաւ, որ նա աշտանելու է երդուեալների վճիռը մեղմացնելու փոխանակ նրանց նշանակած տուգանքի, մի ուրիշը երևան հանել, նոյն իսկ այն, որը շատ վաղ չէր որ իմ հոգին այնպէս խռովեց:

Երեւում է զալույթը ինձանում սաստիկ զօրեղ է եղել, որ դուրս է անցել մտքերիս տիրող հազարաւոր զդալութիւնների միջից: Ես կամենում էի բարձրածայն կրկնել նրան այն, ինչոր արգէն ասել էի.— Մահը հազար անդամ բարագոյն է: Բայց ես շնչարդելուեցի, և միայն կարողացաւ կոպտութեամբ նրա ձեռից

\* ) Պատաւորի քարտուղարը:

բռնելով, կանգ առնել տալ և ցնցողական ուժով գոչել.— Ո՞չ:

Աւագ դատախազը ընդդիմախօսեց փաստաբանին, իսկ ես նրան ականջ էի գնում անմիտ բաւականութեամբ: Յետով դատաւորները դուրս եկան, ապա նորից ներս մտան, և նախագահը կարդաց ինձ վճիռը:

— Դատապարտուած է մահուան,— առաջ ամբոխը: Եւ այն ժամանակ, երբ ինձ տանում էին, ամբողջ այդ ժողովուրդը զիմեց իմ ետևից, խորտակված շինութեան դրդմամբ: Իսկ ես... ես գնում էի ցնորված. Հարբած: Իմ մէջ կատարուեց մի յեղափոխութիւն: Մինչ մահավճիռը, ես զգում էի, որ շնչում եմ, ապրում եմ և սարսուում եմ այն շրջանում, ինչպէս և ուրիշ մարդիկ, իսկ այժմ... այժմ ես պարզ նկատեցի իմ և աշխարհի մէջ մի ինչ-որ ցանկապատ: Այլ ես ոչինչ ինձ չէր երեւում այնպէս, ինչպէս առաջ: Լայն և լուսաւոր պատուհանները, պայծառ արեգակը, վճիռ երկինքը, գեղեցիկ ծաղիկը,— ամենը դարձել էր սպիտակ և դժոյն, ամեն ինչ ընդունել էր պատանի գոյն: Իմ ճանապարհի վերայ խովող մարդկանց, կանանց և երեխաների մէջ, յանկարծ ոկսեց ինձ երեւալ մի ինչ-որ ուրուական:

Վանդակապատ պատուհաններով՝

ՀԱՅՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
ԿՈՂՈՎԱԿԱՆ ՊՈԽԱԿԱՆ  
7/11.1922  
ՀԱՅՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

կեղտուտ կառքը սպասում էր ինձ սանդուխքի մօտ: Մտնելով նրա մէջ, ես պատահմամբ նայեցի հրապարակի վերայ: — Մահուան գատապարտուածը, — գոչում էին անցորդները, վազելով դէպի կառքը: Մառախուղի միջից, որ այժմ ծածկել էր ինձ համար բոլոր առարկաները, ես նկատեցի երկու մատաղահաս օրիորդներ, որոնք անյադ աչքերով հետևում էին ինձ: — Փառաւոր է, — ասաց կրտսերը, ծափ տալով. — կը տեսնենք վեց շաբաթից յետոյ:

XXX.

Դատապարտուած եմ մահուան . . . Դէհ, ինչ անենք: Յիշում եմ, ես կարդացել եմ մի ինչ-որ զրուում, որի մէջ միայն լաւն այն էր, թէ բոլոր մարդիկ՝ առանց բացառութեան՝ գատապարտուած են մահուան, միայն անորոշ ժամանակամիջոցներով: Աւրեմն ինչ մի առանձին փոփոխութիւն է եղել իմ զրութեան մէջ:

Այն բովէից յետոյ, երբ գատավճիռը կարդացվել է իմ գլխին, քանի մարդիկ են մեռել, որոնք երկար ապրելու լոյս են ունեցել: Քանիմներն են յառաջել ինձ, մատաղահաս, առողջ, աղատ, որոնք անշուշտ մտածել են տեսնել:

Թէ ինչպէս Գրեվի հրապարակի վերայ կընկնի իմ զրուխը: Որքան են և այնպիսիները, որոնք այժմ շարժում են, մաքուր օդ են շնչում, մրտնում են, գուրս են գալիս իրանց կամքով, այնուամենայնիւ ինձանից առաջ են ճանապարհուելու:

Բայց յետոյ և այն պէտք է առել, միթէ կեանքը ինձ համար այնպէս հրսագործէ է: Եւ իրաւ, բանդի մռացը և սև հացը, գաժանակիրների կիսատակառից ածած մի բաժին պարզ ապուրը, բանդապետների և պահապանների հարուածները ու կոպտութիւնները — ես, որ այնպէս նուրբ գաստիարակուած եմ — և յետոյ չտեսնել մարդկալին ոչ մի էակ, որ արժան համարէր ինձ մի խօսք ասելու, կամ որին ես կարսդանալի դիմել խօսքով, ամեն մի բռնէ սաքսել նրա համար, թէ ինքոք ինչ պիտի անեն, կամ թէ քեզ ինչ պիտի անեն, — ահա գրեթէ այն միակ բարիքները, որոնք դահիճը ինձանից պիտի խլէ:

Բայց և այնպէս, այդ սարսափելի է:

XXX.

Ու կառքը բերաւ ինձ այսեղ, այս զզուելի Բիսեթը:

Հեռուից այդ շինութիւնը, թերես, դուք  
չե՞մ մի տեսակ փառահեղութիւնից, նա ձգվել է  
մի բլրակի գազաթում և, մի յարտնի հեռա-  
ւորութեան վերայ, գեռ ևս պահպանում է  
ինչ իմն իւր նախկին շքեղութիւնից, և ներկա-  
յանում է իրեւ թագաւորական մի ամրոց։ Բայց,  
քանի դուք մօտենում էք, պալատը դառնում է  
ցեխածեփի, բեկրեկուած ատամները վիրաւորում  
են ձեր աչքերը։ Այդ թագաւորական առաջնա-  
պատերի վերայ ծանրանում է մի տեսակ խայ-  
տառակալութիւն և չքաւորութիւն, կործես թէ,  
պատերը բորոտութեամբ վարակիված լինին։ Աչ  
պատուհանի շրջանակներ կան, ոչ ատակի-  
ներ, կան միմիայն հաստ երկաթի վանդակներ,  
որոնց արտեղ ու այնտեղ կպած է կամ տա-  
ժանակը, կամ խելագարի գունաժամի դէմքը։  
Ահա կեանքը մօտիկում։

¶.

Դեռ ևս ես ներս չէի մտել, երբ երկաթի  
թաթերը ինձ տիրեցին։ Խստութիւնները աւե-  
լացան։ ճաշի ժամանակ ոչ դանակ կայ, ոչ  
պատառաքաղ. մի քաթանի, ծակ տոսլրակի նը-  
ման, անճոռնի, կալճ բաճկոն պատեց կռներս.

Իմ կեանքի համար պատախանատու էին։ Ես  
խնդիր տուի վճիռս վերաքննելու համար։ Կա-  
րող է այդ աւելորդ յապարութեանց մէջ անցնել  
վեց կամ եօթ շաբաթ։ Իսկ ինձ հարկաւոր է  
պահպանել առողջ և անլինաս Գրեվի հրապա-  
րակի համար։

Առաջի օրերը ինձ հետ վարվում էին գր-  
դուելի քաղցրութեամբ։ Բանդապետի հայցք-  
ները գուշակում են կառափնատ։ Բաղդատորա-  
բակիս, մի քանի օր անցած, սովորութիւնը  
յաղթեց։ Նրանք խառնեցին ինձ, միւս կալա-  
նաւորների հետ, ընդհանուր կոպտութեան մէջ,  
և գագարեցին այլևս վարվել ինձ հետ այն ան-  
սովոր քաղաքավարութեամբ, որ միշտ լիշեց-  
նում էր ինձ դահճին։ Այդ գեռ բոլորը չէր։  
Բարւոքումները տարածվում էին աւելի հե-  
ռու։ Երիտասարդութիւնս, քաղցրախօսութիւնս,  
բանդալին քահանալի ուշադրութիւնը, իսկ,  
գլխաւորապէս, մի քանի լատինական խօսքե-  
րը, — որոնցով ես դիմեցի բանդապետին և որոնց  
նա չը հասկացաւ, — ինձ թոյլտուութիւն մա-  
տակարարեցին՝ շաբաթը մի անգամ ճեմելու միւս  
կալանաւորների հետ, և հանեցին վրայիցս բաճ-  
կոնը, որի մէջ ես կենսաթափ էի եղել։ Երկար  
տատանումներից յետով, ինձ համար բերին մին-

չւ անգամ թուղթ, թանաք, դրիչ և ճրագ:

Ամենայն կիւրակի, պատարագից յետով,  
նշանակեալ ժամին, ինձ արձակում են բանդի  
գաւիթը: Այստեղ ես խօսակցում եմ կալանաւոր-  
ների հետ: Զէ կարելի, խօմ: Նրանք, սակայն,  
շատ բարի տղերք են: Պատմում են ինձ իրանց  
արարմունքները և իմ մազերս փշաքաղում են:  
Բայց ես գիտեմ, որ նրանք պարձենում են: Սո-  
վորեցնում են ինձ իրանց լեզուով խօսել, առ-  
շին պարկէւ ինչպէս իրանք են ասում: Այդ մի  
ամբողջ լեզու է, նման մի ինչ-որ զզուելի  
ուռուցքի, ընդհանրացած լեզուին կպցրած, ինչ-  
պէս օրինակ մի խոց: Երբեմն յանկարծ, տարօ-  
րինակ եռանդ, սարսափեցնող պատկերաձևու-  
թիւն, իտուարայի վերայ ժաշկացանի (նրանց լե-  
զուով — ճանապարհի վերայ արիւն), պարկէւ  
այսին վերայ (կախված լինել), որպէս թէ կա-  
խաղանի թոկը բոլոր կախվածների ալիքին լի-  
նէր: Գողի զլուխը ունի երկու անուն. Սօրբո-  
նա, երբ նա նստում է, խորհում է, նիւթում  
է ոճիր, իսկ Կրծշ, երբ նրան դահիճը կտրում  
է: Կան ալլե կատակերգական դարձուածներ, —  
էղէժանայն ինչուր (ցնցոտաժողովի զամբիւղ), առա-  
նու (լեզու), յետով ամենուրեք, ամեն քայ-  
լում տարօրինակ, գաղտնական, անպիտան և

կեղտոտ բառեր, Աստուած զիտէ որտեղից վեր-  
ցրած,—le taule (գահիճ), և սու (մահ),  
և placarde (զինատման տեղ), և ինչ-որ մո-  
դէսներ, սարդեր: Երբ լսում ես այդ լեզուն,  
երեակայում ես մի ինչ-որ կեղտոտ, փշոտ, ամե-  
նազզուելի ցնցոտու նման մի բան, որը յան-  
կարծ ձեր առջև սկսէին թափ տալ:

Գոնէ այդ մարդիկ ինձ խղճում են: Միայն  
նրանք: Բանդապետը, համարականները, փա-  
կակալները (ես նրանց վերայ չեմ բարկանում),  
ծիծագում են և ինձ համարում են աւելի ո-  
չինչ, եթէ ոչ մի իր:

Ա.

Ես ահա ինչ եմ մտածել:

Ինձ տուած են միջոցներ գրելու, և ի-  
րաւ, ինչու չը նստել և գըել: Բայց ինչ գրեմ:  
Փակուած չորս մերկ և պաղ պատերի մէջ, ա-  
ռանց ապատութեան՝ ոտերիս համար, առանց  
երկնքի՝ աչքերիս համար, ամեն օր մեքենա-  
յաբար և տաղտկութիւնից զբագլած լինելով  
այն սպիտակագոյն քառամկիւնի դանդաղ  
գնացքով, որ դռանս փոքրիկ լուսամուտը  
ձեւակերպում է հանդիպակաց մռալ պատի

վերայ, և, ինչպէս որ քիչ առաջ արդէն ասացի, մէն-մէնակ ոճրագործութեան և պատժի, սպանութեան և մահուան մտքի հետ—կարող եմ ես մի բան արտայալտել, ես, որին այլ ես ոչինչ չի մնում անել այս աշխարհում, և կարող է արդեօք այս բազմաչարչար և դատարկ դիմում ծագել մի բան, արժանի գրութեան:

Եւ ինչո՞ւ չէ: Եթէ իմ շուրջը անդոյն է և միատեսակ, իմ մէջ, հօ, փոթորիկ, կու, ողբերգութիւն է: Միթէ այն միտքը, որ ինձ տիրել է, ամեն ժամ և ամեն բոպէ միշտ նորանոր ձևերով չէ ներկայանում, առաւել արիւնալի, առաւել սարսափելի, քանի ես աւելի մօտենում եմ օրհասին: Ալեմն, ինչո՞ւ չփորձել ինքս պատմել այն բռնաւորական և անյայտ տանջանքները, որ ես կրում եմ իմ առանձութեան մէջ. արդարեւ, հարուսո նիւթ է: Եւ որքան էլ իմ կեանքը կարճ լինի, բայց չարչարանքների, սարսափների ու տանջանքների մէջ, որոնցով լցուած է նա այս ժամից մինչև վերջինը, արժէ փչացնել այդ գրիչը և սպառել այդ թանաքամանը: Բայց և տանջանքները... նրանց պակասացնելու միակ միջոցը պարունակում է նրանում, որ դիտես նրանց: Եւ, նկարագրելով նրանց, ես կ'թեթևանամ:

Եւ յետով, ինչ որ էլ այս կերպով ես զրելու լինեմ, զուցէ և անօղուտ չ'լինի: Այդ մատեան է իմ չարչարանաց, ժամ ժամի ետևից, բոպէ բոպէի ետևից, տանջանք տանջանքի ետևից, եթէ միայն ոյժերս կը բաւականան հասցնել նրան մինչև այն ժամը, երբ ես փիզիքապէս այլևս անկարող կը լինիմ շարունակել նրան. այդ իմ տպաւորութիւններիս պատմութիւնը, ըստ անհրաժեշտութեան, ըլ վերջացրած, բայց, կարելոցն չափ, լիակատար,—կարող է պարունակել իւր մէջ բարձր և խորին խրատ: Այդ հոգեարք մտքի արձանագրութեան մէջ, այդ վշտերի աճող յառաջադիմութեան մէջ, դատապարտուածի այդ մտաւորական անատօմիալի մէջ, կարող են թագնուած լինել զատապարտողների համար շատ դասեր: Այդ ընթերցումը գուցէ պահէ նրանց ձեռքը, երբ առիթ կունենան մի ուրիշ անդամ քցելու մի գլուխ, որը մտածում է, մի մարդու զլուխ—այն բանի վերայ, որը իրանք կոչում են արդարադատութեան կշիռ: Կարելի է նրանց, այդ թշուառների, մտքովը անգամ երբէք չի անցել տանջանքների այն դանդաղ շարքը, որ թագնուած է մահավճռի շտապ ֆօրմուլայում (ձևագիր): Գէթ երբ և իցէ կանգ առել են նրանք այդ դառն մտքի վերայ, թէ այն մարդու մէջ,—

որին նրանք գլխատում են,—ապրում է հոգի,  
որ յոյս է տածում ապրելու, հոգի, որ չէ տրամա-  
դրուած մեռնելու:—Այդ ամենի մէջ նրանք  
տեսնում են միայն եռանկիւնի դանակի ուղա-  
ձիգ անկումը, և, ՚ի հարկէ, հաւատացած են, որ  
դատապարտուածի համար ոչինչ չէ եղել յառաջ,  
ոչինչ էլ չէ լինելու յետոյ:

Այս թերթիկները նրանց հաւատասթավի  
կանեն: Տպագրված լինելով, գուցէ նրանք երբ և  
լիցէ, գէթ մի քանի ակնթարթ, նրանց միտքը  
կանգ առնել կը տան խելքի տանջանաց վերայ:  
Հէնց այդ տանջանքներն են, որ նրանք չեն գու-  
շակում: Նրանք հիացած են նրանով, որ հնարել  
են միջոց մարդկանց սպանելու, առանց մարմնին  
չարչարանք պատճառելու: Բայց միթէ հարցը  
սրանումն է: Ի՞նչ է նշանակում ֆիզիքական  
ցաւը, բարոյականի հետ համեմատած: Ողբ-  
մելի և զգուելի են օրէնքները, եթէ նրանք  
այդպէս են. կ'գայ ժամանակ և գուցէ այդ  
լիշտակարանները, թշուառի վերջին բարեկամ-  
ները, կ'բերեն դէպի այդ...

Եթէ միայն, իմ մահիցս յետոյ, քամին չը  
ցրուի գաւթում այդ թղթի կտորները ցե-  
խոտուած, կամ եթէ չեն նեխսի անձրեւում,  
իբրև կարկատան, կցպրած բանդապետի պա-

Հականոցի կոտրատված ապակիների վերայ:

ԱԱԱ.

Ապա ինձ ինչ դրանից, որ այդ տողերը  
երբ և իցէ կարող են օգտաւէտ լինել ուրիշնե-  
րին, որ նրանք կանգ առնել կտան դատապար-  
տելու պատրաստ դատաւորին, որ նրանք կ'փըր-  
կեն թշուառներին, անմեղներին, կամ ոճա-  
գործներին այն մահուան տագնապից, որին ես  
դատապարտուած եմ.—Ինձ ինչ, ես ինչ կ'շա-  
հիմ: Իմ գլուխս կտրելու են, թող ուրիշներին  
էլ կտրեն: Ինձ ինչ: Միթէ արդարե ես կարող  
եմ խորհել այդպիսի լիմարութիւնների մասին:  
Կործանել կառափնարանը նրանից յետոյ, երբ ես  
արդէն բարձրացած կ'լինիմ նրա տախտակամածի  
վերայ, ինսդրեմ կոնսարհաբար, շատ հարկաւոր է:

Ի՞նչպէս, արեգակ, դաշտեր-երփներանդ  
ծաղիկներով, առաւտուան զարթնող թուչուն-  
ներ, ամպեր, ծառեր, բնութիւնն, ազատութիւնն,  
կեանք,—այդ բոլորը այժմ ինձ համար չէ:

Աստուած իմ, ինձ փրկեցէք... ինձ: Ճշմա-  
րիտ է արդեօք, որ այդ անկարելի է, որ ես  
պէտքէ մեռնեմ վաղը, այսօր, կարելի է, որ այդ  
անպատճառ լինելու է: Աստուած իմ: Այդ զար-

Հուրելի մտքից մարդ կարող է իւր գլուխը ջախ-  
ջախել, բանդի պատերին տալով:

XXXX.

Կը հաշուեմ, ինչքան ժամանակ է մնում ինձ:

Երեք օր ժամանակամիջոց—կարդացուած  
վճռից յետոյ, բողոք ներկայացնելու համար:

Մի շաբաթ ձգտումներ քրէական դատա-  
րանում, որից յետոյ թէ զթէ բը, ինչպէս իրանք  
են ասում, ուղարկում են նախարարին:

Երկու շաբաթ ընկած կ'մնան նրանք նա-  
խարարի մօտ, որը մինչև անդամ չի կաս-  
կածելու նրանց գորութեան մասին, բայց այն  
ուամենայնիւ յանձնելու է, որպէս թէ ինքը  
նայած է, վճռացինց դատարանին:

Անտեղ ճանապարհորդութիւն զանազան  
սեղանների վերայով, համարագրութիւն, ար-  
տագրութիւն՝ ի մուտ, որովհետեւ գիլէօտինը  
(quillotine) գործ շատ ունի, և ամեն մէկը  
պէտք է իւր հերթին սպասէ:

Երկու շաբաթ վերաքննութեան համար,  
թէ չեն պատճառել ձեզ արդեօք որեւէ անար-  
դարութիւն:

Վերջապէս, դատարանը բացվում է, սովո-

րաբար մի որեւէ հինգշաբաթ օր, մերժում է  
մօտ քսանաչափ բողոքադրեր և ամբողջ կուտը  
յետ է ուղարկում նախարարին, նա էլ ուղար-  
կում է աւագ դատախազին, սա էլ արդէն  
դահճին:—Երեք օր:

Չորրորդ օրը, առաջատեան, աւագ դատա-  
խադի օգնականը, իւր փողկապը կապելով, դա-  
տում է, թէ վերջապէս ժամանակ է թերես  
այդ գործը վերջացնել: Այն ժամանակ, եթէ  
վճռակատարի օգնուկանը չէ տալիս որեւէ նա-  
խանաշչիկ իւր բարեկամներին և եթէ ոչինչ  
նրան չէ խանդարում, վճռի իրագործութեան  
հրամանը դրվում է, արտագրվումէ, մատեան է  
զցվում, ուղարկվում է, և միւս օրը լուսարա-  
ցին լսելի է լինում, թէ ինչպէս Գրեվի հրա-  
պարակի վերայ շինում են տախտակամածը, իսկ  
փողոցների անկաններում բղաւում են յալտա-  
րարութիւն ցրուղների խռապու ձայները:

Ընդամենը վեց շաբաթ: Աղջիկը ճշմարիտ  
էր ասում:

Բայց ահա արդէն հինգ շաբաթ է, կա-  
րելի է և ամբողջ վեց—չեմ համարձակվում մէկ  
էլ համարել, որ ես նստած եմ այս իցի մէջ,  
Քիսեթրում. իսկ ինձ թուում է, որ ընդամենը  
երեք օր է: Այդ հինգշաբաթի օրն էր:

## IX.

Ես գըել եմ կտակ:

Ինչու է պէտք այդ: Ես դատապարտուած եմ դատաստանական ծախսերի հատուցման, և ամբողջ իմ կայքս հազիւ բաւականութիւն անի օրա համար: Գլխահատը էժան բան չէ:

Ես թողնում եմ ինձանից յետոյ մայր, կին, թողնում եմ զաւակ:

Փոքրիկ, երեք տարեկան մի աղջիկ, հեղիկ, վարդագոյն և նիշարիկ, ուս-ուս մեծ միկներով և շագանակագոյն մաղերով:

Նա երկու տարի և մի ամսական էր, երբ ես վերջին անգամ նրան տեսայ:

Եւ այդաէս, իմ մահիցս յետոյ, երեք կը-նամարդ կը մնան առանց որբոյ, առանց ամուսնոյ, առանց հօր: Երեք որբեր զանազան աստիճանի, երեք արիներ, օրէնքի շնորհիւ:

Ասենք թէ իմ պատիժս արդարացի է: Բայց ի՞նչ են արել այդ անմեղները: Ում ի՞նչ: Նրանց զրկում են պատուից, նրանց քանդում են, և այդ արդարադատութիւն է:

Խեղճ պառաւ մայրս դեռ ինձ չէ անհանդատացնում: Նա վաթսուն և չորս տարե-

կան է. նա այդ հարուածից կը մեռնի: Բայց եթէ մի քանի օր էլ ձգձգեց, միայն թէ տաք լինէր նրան, նա ոչինչ չի ասիլ:

Կնոջս համար նոյնպէս չը պիտի շատ ցաւել, նա մինչեւ այս պահ հիւանդ է և ցնորուածի պէս է: Նա նոյնպէս կը մեռնի, եթէ միայն բոլորովին չը խելազարուի: Ասում են, որ կլուախելօքները երկարակեաց են լինում, գոնէ նրանց խելքը չէ տանչվում. նա քնում է, նա մի և նոյնն է, թէ մեռել է:

Բայց աղջիկս, իմ զաւակը, իմ խեղճ փոքրիկ ~~լրափամը~~, որը այժմ ծիծագում է, խաղում է, երգում է, և ոչինչի համար չէ մտածում,— ահա թէ ում համար է սիրոս ցաւում:

## X.

Ահա ձեզ իմ խուցը:

Ութ քառակուսի ոտնաչափ: Տաշած քարեց չորս պատեր, ուղիղ սալապատ յատակի վերայ յենված, որը միջանցքից մի աստիճան բարձր է:

Դոնից դէպի աջ գտնվում է մի ինչ-որ խորշ, որ ծաղքանկար է քննարանի: Աւտեղ գցում են յարդի մի կապոց, որի վերայ

կարծում են, թէ կալանաւորը քնում և հանդըստանում է, ամառ ձմեռ քաթանի վարտիկն և բաճկոնսմկը հագիւն:

Իմ գլխիս, երկնքի նման, ու կամարը, կարծեօք, նետաձեւ է (եթէ չեմ սխալվում), ու բրդից կախուած են սարդոստայնների հաստ շերտեր, ինչպէս ցնցոտիներ:

Եւ չկայ ոչ մի պատուհան, ոչ մի օղանցք. դուռը պատած է երկաթով:

Ներողութիւն, դռան մէջտեղում, վերևում, կայ մի ծակ, իննը քառակուսի բթաչափ, խաչաձեւ վանդակով, որը դիշերը բանդապետը փակում է:

Խցի ետեւում բաւականին երկար մի միջանցք կայ, որը լուսաւորվում է և պատի վերեկի նեղ օլանցքներից զավայնում, և բաժանված է զանազան մասների, որոնք միմնէանց հետ հաղորդվում են ցած և կիսարոլրակ դռներով. ամեն մէկը այս բաժանմունքներից ներկայացնում է մի ինչպէս նմանութիւն նախասենեակի՝ տէնալիսի խցի որ նմանութիւն նախասենեակի՝ տէնալիսի խցի համար, որպիսին իմն է: Այդ խցերում, բանդամար, որպիսին իմն է: Այդ խցերում, բանդամարը հարամանով, իբրև սպատիժ, դալին կառավարչի հարամանով, իբրև սպատիժ, գալին կառավարչի հարամանով, իբրև խցերի գալին կառավարչի հարամանով: Առաջին երեք խցերի գալին կառավարչի հարամանով: Առաջին երեք խցերի գալին կառավարչի հարամանով:

Նրանք առաւել յարմար են հսկողութեան համար: Այդ բանդերը միակ մնացորդներն են նախնի բիսեթրեան ապարանքից, որ կառուցել է տասն և հինգերորդ դարում Կարգինալ Վինչեստը, նոյն խակ ալն Վինչեստը, որ այլեց ժաննա դ'Արքին: Ես այդ լսել եմ հետաքրքրիներից, որոնք անցեալները եկել էին իմ բնակարանը և նայում էին ինձ հեռուից, ինչպէս վայրենի զագանին զագանանցում: Բանդապետը հինգ ֆրանկ ստացաւ:

Մոռացայ ասել, որ իմ դռան առջև գիշեր և ցերեկ կանգնած է հերթակալ պահպանը, և որ իմ աչքերս ընկնելով դռան, միշտ հանդիպում են նրա երկու աչքերին, որոնք միշտ անթարթ, միշտ բաց են:

Բայց սակայն կարծում են, որ ալս քարեալ արկիզի մէջ լոյս և օդ կայ:

## XX.

Յերեկը չի սկսվել, խակ ինչ կ'հրամայէք անել գիշերը: Իմ մէջ ծագեց մի միտք: Ես վերկացայ և կանթեղով սկսեցի նայել իմ բանդի պատերին: Նրանք նախշուած են արձանագրութիւններով, նկարներով, տարօրինակ

պատկերներով, անուններով, որոնք խառնվում են միմեանց հետ և ջնջում մէկը միւսով։ Կարծեօք, ամեն մի դատապարտեալ կամեցել է իրանից յետոյ, գոնէ այստեղ, մի հետք թողնել։ Այստեղ կայ և՛ մատիտ, և՛ կաւճ, և՛ ածուխ, տառերը սև, սպիտակ, գորշ, յածախ քարի մէջ խոր քանդակած, երբեմն ժանդոտած, իրը թէ արիւնով լինի զրիած։ Անկասկած, աւելի խաղաղ տրամադրութեան մէջ ես հետաքրքրուած կ'պարապէի այս տարօրինակ զրքով, որը էջ առ էջ բացվում է իմ աչքիս առջև խցիս ամեն մի քարի վերայ։ Ես բաւականութեամբ կ'վերաստեղծէի մի ամբողջութիւն այդ սալաքարերի վերայ ցրկած մտքերի հատուածներից, մարդուն կ'զտնէի անուան ներքոյ, մարմին և հոգի կոտայի աղափաղուած արձանագրութիւններին, աղձատուած դարձուածներին, այլանդակուած անզլուխ մարմնին, ինչպէս նրանք, որոնք այդ ամենը զբել են։ Նոյն իսկ սնարիս վերայ կան երկու բացավառուող սրտեր, նետով խոցուած, իսկ վերևում այս արձանագրութիւնը։ «Սէր ՚ի կեանս»։ Երկար ժամանակով չէր յանձն առել թշուառը իւր վերայ այդ պարտականութիւնը։ Նրանց շարքում կար եռանկիւնի գլխարկի նման մի բան, որա տակ մի փոքրիկ, կոպիտ

կարած պատկերիկ և այս բառերը.—«Կեցցէ կալոր, 1824»։

Կրկին բոցավառուող սրտեր մի արձանագրութեամբ հանդերձ, որ կարի յատուկ է բանզային կեանքին։ «Միրում և պաշտում եմ Պատեօ Գանվենին, ֆակ»։

Հանդիսականց պատի վերայ կարգում ես Գառավառան անունը։ Գլխազիր Պ-ն կերտուած է դրուագներով և բաղմագան զարդարած։

Անփայել երգի մի հատուած։

Մի զդակ, քարի մէջ բաւականին խոր քանդակած, իսկ ցածում՝ Բօջիւ.-Հասուրութեամբ- լիւ։ Սա Լարոշելեան տասնապետներից մէկն էր։ Խեղճ երիտասարդ, ինչպէս զգուելի են նրանց քաղաքական անհրաժեշտութիւնները։ Մի մըտքի, մի՛ երազի, մի՛ որեւէ վերացականութեան համար այդ սարսափեցուցիչ իրականութիւնը, որ կոզմում է գլխահատ։—Եւ ես զեռ զանդատվամ եմ, ես թշուառս, որ զործել եմ իսկական ոճիր, որ արիւն եմ թափել։

Սակայն բաւական է զննել պատերը։ Յանկարծ անկիւնում ես տեսալ մի սպանիչ պատկեր, սպիտակ գծերով նկարած,—պատժարանի պատկերը, որ գուցէ արդէն պատրաստվում է ինձ համար։ Քիչ մնաց կանթեղը ձեռից վայր էի գցում։

## XXX.

Ես նորից և շտապով նստեցի յարդի վերակ, խոնարհելով զլուխս ծունկերիս: Յետոյ սակաւ առ սակաւ ցրուեց իմ մանկական սարսափը, և ինձ տիրեց տարօրինակ հետաքրքրութիւն՝ շարունակելու իմ պատերի ընթերցումը:

Պատրաջտունի անուան մօտ ես պոկեցի վառ հաստ շերտով ծածկուած սարդի մի ստախն, որ կախուած էր պատի անկիւնում: Այդ սարդուստախնի տակ չօրս թէ հինգ անուններ կատին, որոնք լաւ պահպանվել էին միւս շտաբի մէջ, որոնցից մնացել էին միմիախն բիճեր: — «Թօտեն, 1815»: — «Պուլեն. 1818»: — «Փան-Մարտեն, 1821»: — «Կաստեն, 1823»: Ես կարդացի այդ անունները և չարագուշակ լիշտութիւններ պաշտեցին ինձ: Թօտենը իւր եղբօրը երկու մաս էր արել և զիշերով զլուխը քցել էր ջրհորի մէջ, իսկ մարմինը՝ ալյրի փոսր: Պուլենը սպանել էր իւր կնոջը: Փան-Մարտենը ատրճանակով կրակ էր տուել իւր հօրը, երբ ծերունին պատուհանը բացելիս է եղել: Կաստենը — մի բժիշկ է, որ թանաւորել է իւր բարեկամին, և բժիշկ նրան այն ցաւից, որը հինգ ինքն էր բժշկելով

նրա զլխին կապել, դեղի փոխարէն նորից թոյն էր խմացրել նրան: Իսկ սրանց կողքին՝ Պապուաւանը, այդ սարսափելի խելադարը, որ սպանել էր իւր զաւակներին, դանալի հարուածներ զլուխներին առլով:

Ահա, մտածեցի ես, և տենդային սարսուոր վազեց իմ սակորների միջով, ահա ինչպիսի հիւրեր են եղել այս խցի մէջ ինձանից առաջ: Այստեղ, միենոյն սալի վերակ, ուր այժմ ես նստած եմ, այդ արեան և սպանութեան մարդիկը խորհել են իրանց վերջին մըտածմունքները. Հէնց այս պատի մօտ, այս նեղ քառանկիւնիի մէջ, նրանք պտտուել են վերջին բովէներում, ինչպէս վայրենի զազանները: Կարճ ժամանակամիջոցներ են նրանց բաժանել միմեանցից: Ինչպէս երկում է, այս բանզը չէ դատարկվում: Նրանք թողել են իրանցից յետոյ տաքացրած տեղ, և թողել են նրան ինձ համար: Ըստ իմ կարգին, ես էլ կ'հետեւիմ նրանց դէպի կլամարեան գերեզմանատուն, որտեղ այնպէս լաւ բուսնումէ խոտը:

Ես ոչ երեակայող եմ և ոչ էլ մնոտիապաշտ: Երեւ, այդ մտածմունքներից ինձանում առաջացել է տենդ, որովհետեւ անուրջների մէջ լանկարծ ինձ երեաց, որ այդ անունները այր-

վում են, ինչպէս կրակ, ու պատի վերայ, աւելի և աւելի զօրեղանող ձախը հնչեց ականջներումս, կարմրագոյն լոյսը ներհոսեց աչքերիս մէջ, և յետոյ ինձ այնպէս երևաց, որպէս թէ բանդումս մարդիկ սկսեցին մանգալ, տարօրինակ մարդիկ, որոնք տանում էին իրանց գլուխները ձախ ձեռքով, և բռնած էին այդ գլուխները բերաններից, պրովհետե նրանց վերայ մազ չկար, բոլորները ինձ բռունցք էին ցոյց տալիս, բացի հայրասպանից:

Սարսափի մէջ ես ծածկեցի աչքերս, այն ժամանակ ամեն ինչ ինձ համար դարձաւ աւելի պարզ:

Երազ էր այդ, տեսիլ, թէ երևակայութիւն—չ'զիտեմ, միայն ես կը խելագարվէի, եթէ ժամանակին չէր զարթեցրել ինձ մի նոր յանկարծակի զդացողութիւն: Ես պատրաստ էի մէջքիս վերայ ընկնելու, երբ յանկարծ զգացի, որ իմ մերկ ոտիս վերայ սողում է մի սառն մարմին թաւոտ ոտիկներով: Այդ սարդն էր, որ ինձանից վախեցած վախչում էր:

Ես սթափուեցի:—Օ՛հ, զարհութելի տեսիլներ:—Ո՛չ: Այդ իմ դատարկուած և ցնցուող ուզեղի ծուխն էր, զառանցքն էր: Մակրետեան ցնորքներ, մեռեալները մեռած են, իսկ սրանք

վաղուց: Նրանք սկինդապինդ փակուած են զերեղմաններում, իսկ գերեզմանը բանդ չէ, որտեղից կարելի է վախչել: Ապա ինչից ես այդպէս վախեցայ:

Գերեզմանի դռները ներսից չեն բացվում:

### ✓ XXXI.

Այս օրերը ես տեսալ դգուելի մի բան:

Օրը նոր էր բացուել, և բանդը աղմկով լցուել էր: Լսվում էր, թէ ինչպէս բացվում ու փակվում էին ծանը դռները, ճռճռում էին սողնակները և երկաթի փականքները, զրնզզրնզում էին բանդապանների գոտիններում ճօնվող բանալիների կապոցները, տատանվում էին վերից մինչև վայր սանդուխքները արագ քայլերից, և լրավում էին միջանցքի երկու ծայրերից միմեանց կոչող ձախներ: Իմ խցի հարւանները, պատժուած կալանաւորները, սովորականից աւելի ուրախ էին: Ամերող Բիսեթրը, կարծես, ծիծաղում, երգում, վագում, պարում էր:

Միայն ես միայնակ, համբ՝ այս աղմուկի մէջ, անշարժ՝ այդ շարժման մէջ, ապշած և կենտրոնացած, այն, միմիայն ես էի միայնակ ականջ դնում:

Անցաւ մի ինչոր համարապահ:

Ես սիրտ արի նըան կանգնեցնել և հարցը. Տօն է, եթէ որ կամենում էք, —պատասխանեց նա: —Այսօր շղթայում էն տաժանակիրներին, որոնց վազը Տուլոն պիտի ուղարկեն: Կամենում էք նայել: Այդ ձեզ կ'զուարձացնի:

Այնպիսի բանդարկեալի համար, որպիսին ես եմ, ամեն մի տեսարսն զիւտ է, որքան էլ նա զզուելի լինէր. ես համաձայնուեցի զուարձանալ:

Համարապահը, սովորական նախազդութիւնից յետով, որպէս զի բոլորովին միամիտ լինի իմ կողմից, տարաւ ինձ մի փոքրիկ, դատարկ և առանց կահ կարծասիքի խուց, որտեղ կար մի փոքրիկ լուսամուտ երկաթեալ վանդակների ետեւում, բայց խօսական լուսամուտ, որտեղից կարելի էր տեսնել խօսական երկինքը:

—Ահա, —ասաց նա, —այստեղից ձեզ ամեն ինչ տեսանելի և լսելի կլինի: Գուք մէնակ կը լինիք այդ օժեակում, ինչպէս արքայ:

Այս ասելով, նա գուրս եկաւ, կողպեց իմ ետեւից փականքները և սողնակները:

Պատուհանը նայում էր դէպի բաւական մի ընդարձակ քառանկիւնի գտնիթ, որի

չորս կողմով բարձրանում էր վեց լարկանի կոփածոյ քարից կառուցած մի մեծ շինութիւն: Դրժուար է մարդուն պատկերացնել աւելի զգուելի, մերկ և տիտուր մի բան, քան այդ քառանկիւնի առաջնապատր, ծակծակած բազմաթիւ վանդակապատ պատուհաններով, որոնց մէջ՝ ցածից մինչ վերև՝ ցցուած էին կոյտ-կոյտ նիշար և գունաթափ երեսներ, մէկը միւսով ճմլած, ինչպէս քալիերը պատի մէջ, երեսներ, որոնցից ամեն մէկը երեւումէր այնպէս, իբր թէ շրջանակի մէջ լինէր՝ երկաթի վանդակների քառանկիւնում: Արանք բոլորը կալանաւորներ էին, առայժմ զեռ հանդիսատեսներ, իսկ հանդիսի մէջ ապագայ գերասաններ: Նրանք նմանում էին քաւարանից դէպի գժոխք տանող մուտքերի մօտ կանգնած ինեղմ մեղաւորներին:

Բոլորը լռութեամբ նայում էին առ ալժըմ դէպի գատարկ գաւկիթը: Նրանք սպասում էին: Այդ շրջած և անզոյն երեսների մէջ, տեղտեղ, փալում էին մի քանի թափանցող և կենդանի աչքեր, իբրև հրացին կէտեր:

Թաւիթը շրջապատող քարեալ քառանկիւնին չէ կապում նրան ամեն կողմից: Ճինութեան չորս առաջնապատերից մէկը (արևելեանը) մէջտեղից բաժանուած է, և միաւորաց-

րած է հարեան պատի հետ երկաթեալ վանդակապատով։ Այդ դռները տանում են գէպի միւս բակ, որը քիչ փոքր է առաջնից. այդ էլ շրջապատուած է պատերով և փոքրիկ, ուսացած աշտարակներով։

Գլխաւոր բակի շուրջը՝ պատերի տակով՝ ձգուած են քարէ նստալաններ։ Մէջտեղում բարձրանում է մի երկաթեալ ծուռած ձող, որ նշանակուած է լապտերի համար։

Տասներկու ժամը խփեց։ Ետեւի մեծ դռները, որ ծածկուած են խորքում, յանկարծ բացվեցին։ Մի սալ՝ ուղեկցութեամբ մի քանի կեղտուու և թուլակազմ զինուորների—կապուտ համազեստներով, կարմիր ուսնոցներով և դեղին գոտիներով,—ծանրօրէն և որոտմամբ ներս մըտաւ բռկը, իբր թէ կոտրուված երկաթ էր բերում։ Այդ տաժանակիրներին ուղեկցող զինուորների խումբն և շղթաները էին։

Նոյն բոպէին, կարծես, աղմուկը զարթեցրեց ամբողջ բանդը. պատուհանների հանդիպատեսները, որ մինչև այժմ անշարժ և հանդարտ էին, թնդացին ուրախական աղաղակներով, երերով, սպառնալիքներով, լիշոցներով, միախառնուած՝ լսողութեան համար դառն՝ քրքիջի ճայթիւնների հետ։ Նախելով նրանց վերալ, կարելի էր

մտածել, որ այդ սատանայական տիպարներ էին։ Ամեն մի երեսը ծամածութիւն էր. բուռնցքները դուրս եկան վանդակներից, ձախները բղաւեցին, աչքերը փայլեցին, և ինձ համար սարսափելի էր տեսնել կիսամարած մոխրի տակից այդքան կայծեր։

Այդ միջոցին վերակացուները,—որոնց մէջ նշարփում էին՝ շորերի մաքրութեամբ ու երեսների վերայ յայտնված սարսափով՝ մի քանի հետաքրքիւններ, Փարիզից եկած,—բոլորովին անվրդով կերպով սկսեցին դործել։ Նրանցից մէկը վեր ելաւ սալի վերայ և գցեց ընկերներին շղթաներ, վզնոցներ և մի ամբողջ կոյտ կտավի վարտիկներ։ Այստեղ նրանք բաժանեցին աշխատանքը, մի քանիսը զնացին՝ բակի անկիւնում ձգելու երկար շղթաները, որոնք նրանց տարօլինակ լեզուով կոչվում է պարտիկի. միւսները փոռում էին սալախատակի վերայ լուսականքն այսինքն շաղկիկները և անդրավարտիկները. իսկ ամենահսկակացողները տնտղում էին, իրանց հարիւրապետի, մի փոքրիկ կարճահասակ ծերուկի, հսկողութեան տակ, մէկ-մէկ երկաթեալ վզնոցները, որոնք հէնց այստեղ էլ փորձում էին, սալախատակին խփելով և կայծեր հանելով։ Եւ այդ բոլորը կատարվում էր կալանա-

ւորների ծաղրական աղաղակների հետ. սրանց բղաւոյին միախառնվում էր տաժանակրների բարձրաձայն ծիծաղը, որոնց համար այդ ամենը պատրաստվում էր և որոնք երեսում էին գէպի փոքր բակը բացուող, հին բանդի վանդակների ետևից:

Եթե այս բոլոր պատրաստութիւնները վերջացան, մի պարոն՝ արծաթազարդ նշանազգեստով, որին կրօսում էին պարոն մէրապէսուչ հրաման տուեց բանդի պարոն առաջնորդ, և ահա, մի բատէից յետոյ, երկու թէ երեք մեծ դռներ միանդամից դուրս թողին բակը դգուելի, աղմկալի, պատառուտված մարգիկանց մի բազմութիւն: Այդ տաժանակրներն էին:

Նրանց յախնավելը կրկնապատկեց ուրախական աղաղակները պատուհաններում: Նրանցից մի քանիքին—տաժանակրութեան մէջ հոչակված անուններին—ողջունեցին աղաղակների և ծափահարութիւնների ճայթուններով, որոնց նրանք ընդունում էին մի տեսակ հպարտ համեստութեամբ: Մեծամասնութիւնը կրում էր զլիսարկի նման մի բան, բանդալին յարդից լինքնուրոյն զործած, և բոլորը ամենասարութինակ ձեռվ, որպէս զի զիւղերում և քաղաքներում զլիսարկը ուշաղրութիւն դարձնէ

զլիսի վերաբ: Արանց աւելի շատ էին ծափակարում: Մէկը նրանցից յարուցեց առանձին ճայթումն հոգեզզածութեան. սա մէկ տասն և եթիթ տարեկան պատանի էր, մատաղահաս օրիորդի գէմքով: Նա դուրս եկաւ գաղտնի բաժանմունքից, որտեղ նստել էր մի շարաթի չափ. իւր խցի յարգից նա հնարազործել էր իւր համար շորեր, որի մէջ փաթաթվել էր ոտից ցըրլուին, և անկուի նման ներս զլուտեց բակը, օձի արագաշարժութեամբ: Այդ ծաղրածուն դատապարտուած էր զողութեան համար: Բարձրացաւ ծափահարութեան և ուրախական աղաղակների փոթորիկ: Տաժանակրները պատափանում էին, և դուրս եկաւ մի սարսափեցուցիչ տեսարան, ձանաշուած տաժանակրների և թեկնածու տաժանակրների մէջ այդ ուրախութեան խառնուրդից: Կար այնտեղ և հստարակութիւն, որ բազկացած էր վերակացուներից և վախեցած այցելուներից, բայց ոճիրը ալպանում էր նրան և սոսկալի պատուհասը վերափոխում էր ընտանեկան ուրախութեան:

Քանի որ նրանք յախնավում էին, նրանց ներս էին տանում երկու շարք ողեկցող զինուորների միջամ՝ վանդակապատ դռան ետևի վոքքիկ բակը, որտեղ նրանց սպասում էր բժըշ-

կական քննութիւնը: Այնտեղ ամեն մէկը նրանցից գործադրում էր իւր վերջին աշխատանքը, որ ճանապարհորդութիւնից ազատուի, ներկայացնելով մի որ և է առիթ տկարութեանցաւագար աչքեր, կազոտ, հաշմոտ ձեռներ: Բայց համարեա միշտ նրանք յայտնվում էին տաժանակիր աշխատանքի համար պիտանի, և այն ժամանակ ամեն մէկը անհողաբար միսիթարվում էր, մի բոպէում մոռանալով ամբողջ կեանքի հնարած ցաւը:

Փոքը բակի վանդակապատը բացուեց: Պահապանը ոկտեգ նրանց ալբուբենով կանչել, և այն ժամանակ նրանք դուրս էին դալիս մէկու ետելից, և ամեն մի տաժանակիր կանդնում էր մեծ բակի անկիւնում, իւր պատահական—ըստ զիլսատառի—ընկերի հետ: Այդ կերպով ամեն մէկին նշանակուած է իւր տեղը, ամեն մէկը տանում էր իւր շղթան մի շարքով անձանօթի հետ, և եթէ պատահում էր, որ տաժանակիրը ունէր ընկեր, շղթան նրանց անջատում էր: Վերջինը թշուառութիւններից:

Երբ այդ կերպով նրանցից երեսնաչափ մարդ դուրս եկան, վանդակապատը փակեցին: Պահապանը նրանց ուղղեց փայտով և ձգեց նրանցից իւրաքանչիւրի առաջ մի-մի քաթանի

շապիկ, բամկոն և վարտիք, յետոյ նշան տուեց և բոլորները ոկտեգին մերկանուլ: Անոպատելի մի գէպք, կարծես թէ, դիտմամբ այդ անարգանքը վերափոխեց տանջանքի:

Եղանակը մինչ այժմ բաւական տաճելի էր, և եթէ հոկտեմբերիան քամին սառցնում էր օղը, բայց և այնպէս երբեմն նա բացում էր զորշ ամպերի մէջ ճեղքեր, որտեղից ընկնում էր արեգակի ճառաղայթը: Բայց հենց որ տաժանակիրները հանեցին բանդախին ձորձերը, նոյն բոպէին, երբ նրանք մերկ յանձնել էին իրանց պահապանների կասկածոտ զննողութեան և քաղաքացւոց հետաքրքիր հայացքին, որոնք պտտում էին նրանց շուրջը, զննելով նրանց ուսերը,—երկինքը սևացաւ, տեղաց աշնանախին սառն տարափը և, ինչպէս դոյլից, անձրեւը շոշըռաց ամբողջ բակում, բաց զլուխների, տաժանակիրների մերկ մարմնի, նրանց ողօրմելի ցնցոտիների վերաէ, որ թտիկուած էին սալայատակում:

Ոի ակնթարթում ամբողջ բակը մաքրուեց բոլորից, բացի պահապաններից և զինուորներից: Փարիզեան բուրժուանները այսուղղ-այնտեղ, պատշգամբների տակ, պատսպարուեցին:

Իսկ տարափը թափվում էր, ինչպէս դոյլից: Բակում մնում էին միայն տաժանակիրները,

մերկանդամ և թրջուած, հեղեղուած սալայատակի վերայ: Գերեզմանական լոռութիւնը յաջորդեց նրանց աղմկալից խօսակցութեան: Նրանք դողդողում էին, ատամները չխչխկացնելով. նըրանց նիշարած ոտները, նրանց քշկուոտ ծունկերը միմեանց էին խփում, և ցաւալի էր տեսնել, ինչպէս նրանք քաշում էին իրանց կապտած մարմնի վերայ թրջուած շապիկները, բամկոնները, վարտիքները, որոնց կարելի էր քամել: Մերկութիւնը աւելի տանելի կլինէր:

Եթէր միայն, մի ինչ-որ ծերունի, գեռպահանում էր մի քիչ զուարթութիւն: Թացշապկալ սրբվելով, նա ասաց, որ այդ բանը ծրագրում է եղել, իտու ծլծաղեց, ցուց տալով իւր բռունցքը ելինքին:

Եթէ նրանք արգէն հաղան ճանապարհորդական հանգելքները, նրանց տարան խմբերով, քսանից մինչեւ երեսուն մարդ, բակի միւս անկիւնը, որտեղ նրանց սպասում էին սալայատակի վերայ ձգուած կապանքները <sup>1)</sup>: Այս կապանքները ոչ այլ ինչ են, եթէ ոչ երկար և ամուր շղթաներ, ամեն մի երկու ստնաչափում ընդհատուած ուղղաձիգ ուրիշ աւելի կարճ շղթա-

ներով, որոնց ծայրին պնդացրած է քառանկիւնի վզնոց, որը բացվում է միւս ծայրից ծղենիի և երկաթեալ նիդի միջնորդութեամբ: Այդպիսի վզնոցների մէջ սեւեռում են դաժանակը վիզը արշաւանքի ամբողջ ժամանակը: Այդ կապանքները, զետնին ձգած, բաւական լաւ պատկերացնում են ձկան ողնաշարի ոսկը: Դաժանակիթներին նստեցրին ցեխի մէջ, թաց սալայատակի վերայ, չափեցին վզնոցները նրանց վերալ, և յետով երկու զզուշ դարբիններ, ձեռքի սալերով զինուած, բեեռեցին նրանց սառը երկաթին, ահազին կռանների զօրեղ հարուածներով: Այդ բոզէն զարհուրելի է, ամենահամարձակները դունաթափվում են: Թիկունքին յենած՝ սալին տուած իւրաքանչիւր հարուածից ցնցվում է պացիենտի կղակը. մի փոքրիկ շարժողութիւն դէպի յետ, և զանդը կարող է փշրուել, իբրև ընկոյզի կեղեւ:

Այդ զործողութիւնից յետոյ, նրանք տըխրեցին: Լավում էր միայն շղթաների շառաչխւնը, և երբեմն բզաւոց և պահապանների մի որ և է յամառի մէջքին տուած փայտի խուլ հարուածը: Կալին և այնպիսիները, որ լալիս էին, ծերունիները ցնցվում էին, վեր էին թռչում և շղթաները կրծոտում: Ես զարհուրանքով նայում

<sup>1)</sup> cordoն.

Եթ այդ չարագուշակ կիսադէմքերին երկաթի շըջանակների մէջ:

Այդ կերպով, բժշկական քննութիւնից յետոյ—վերակացուների քննութիւնն էր, վերակացուների քննութիւնից յետոյ—բևեռումը: Երեք գործողութիւն կալ այս ներկայացման մէջ:

Արեղակը դուրս եկաւ: Կարծես, նա մի ակնթարթում փառեց այդ բոլոր զլուխները: Դաժանակէրները միանդամից բարձրացան, կարծես, մի ինչ-որ բան նրանց հրեց: Հինգ կապանքներ յանկարծ բռնեցին ձեռք ձեռքի և այս կերպով կազմեցին ահազին շըջան լապտերի շուրջը: Նրանք սկսեցին պլատուել, այնպէս որ մարգու աչքերը շաղվում էին: Նրանք բոլորը երգում էին դաժանակը երգը, մի ինչ-որ ողբերգ նրանց տարօրինակ լեզուով, երբեմն ցաւալի, երբեմն կատաղի և ու բախալի եղանակով: Փամանակ առ-ժամանակ վայրենի աղաղակները, ջախչախված և հետացող քրքիչի ճայթիւնները միախառնում էին խորհրդաւոր բառերի հետ: Իսկ վայրենի ձայնարկութիւնները, իսկ շղթաների ներդաշնակ շառանջիւնները, որոնք ծառայում էին որպէս նուազարան այդ՝ իրանց զըրնկը-ընկցից աւելի աղմկալի՝ երգեցողութեան: Եթէ ինձ հարկաւոր էր շաբաթի պատկերացումը, ես

չէի ցանկանալ ոչ լաւագոյնը, ոչ վատագոյնը: Փափիթը բերին մի մեծ փայտեալ սակառ: Պահապանները փայտերով ընդհատեցին գաժանակիրների պարը և մօտեցրին նրանց փայտեալ սակառին, որի մէջ լողում էր մի ինչ-որ խոտ, մի ինչ-որ ծխուող և կեղտոտ հեղուկի մէջ: Նրանք սկսեցին ուտել:

Յետոյ, ճաշեկով, նրանք ապօքի մնացորդը թափեցին սալայատակի վերակ, առենքը գէն դցեցին սև հացը և նորից սկսեցին պարել ու երգել: Ըստ երեսլթին, այդ նրանց թող է տըրուած սկեռներու օրը և յետագայ զիշերը:

Ես այդ տեսարանին նալում էի այնպիսի ադահութեամբ, սրտատրով, միենոյն ժամանակ, և ուշագիր հետաքրքրութեամբ, որ ինքս ինձ մուացել էի: Մեղկութեան խորին զգացմանքը ինձ ամբողջովին շըջապատեց, և նրանց քըքիջը ստիպեց ինձ լաց լինել:

Յանկարծ, այն խորին մտախոհութեան մէջ, ուր ես ընկղմուած էի, զգացի, թէ ինչ-պէս դադարեց և լոեց մռնչող շըջանը: Յետոյ, բոլորի աչքերը դարձան գէպի այն պատուհանը, որի մօտ ես կանգնած էի:—Դատապարտուածը, զատապարտուածը, —բղաւեցին նրանք սմենքը, զուց տալով ինձ մատներով, և

ցնծութեան ճայլթիւնները կրկնապատկուեցին:

Ես, կարծես, բւեռվեցի տեղումս:

Տարակուսում եմ, նրանք ինչից ինձ ճանաչուցին և ինչպէս կարողացան ճանաչել:

—Քարով, բարով,—միմեանց ընդհատելով կոչում էին նրանք դէպի ինձ: Մէկը, զրեթէ զեռ պատանեակ և մշտնջենական աքսորանքի դատապարտուած, փալուն, արճճագոյն երեսով, նայեց ինձ նախանձով և ասաց. «Քաղդատոր է, նրան կը կրծուեն: Մնաս բարով, ընկեր»:

Գժուար է առել, թէ ինչ էր կատարիում իմ մէջ: Ես, արդարեւ, նրանց ընկերն էի: Գրեվը չուլօնի քոյրն է: Ես մինչև անդամ նրանցից ստոր էի, նրանք ինձ պատիւ էին անում: Ես սարսուեցի:

Այն, ես նրանց ընկերն էի: Մի քանի օր ո՞շ, և ես կարող էի նրանց համար տեսարան լինել:

Ես մնացի պատուհանի մօտ անշարժ, կաշ-կանդված, յաղթահարուած: Բայց, երբ ես տեսայ, որ հինգ կապանակիրները դարձան դէպի իմ կողմը, յարձակվեցին իմ վերալ դժոխային—բարեկամական խօսքերով, երբ ես լսեցի նրանց շղթաների, նրանց քայլերի աղմկալի որոտը իմ պատիւ քով, ինձ թուաց, որ այդ դեերի երամը արդէն սպրուտել է դէպի իմ ողորմելի խուցը,

ես գոռացի, յարձակվեցի դէպի գոռար, նրան կոտրելու պատրաստ, բայց վախուստի հնար չը կար: Փականքները զլացի էին: Յետոյ, կարծես, աւելի մօտիկ լսեցի դաժանակիրների ձախները: Նրանց զզուելի դէմքերը, կարծես, արդէն երևացին պատուհանում, ես գարձեալ գոռացի երկիրդից և ուշաթափ եղակ:

### XXX.

Եթէ ես ուշքի եկայ, արդէն զիշեր էր: Ես ընկած էի մտհճակալի վերայ. առաստաղից կախված լապտերը օգնեց ինձ տեսնել ուրիշ մտհճակալներ, որոնք ձկուած էին լիմից դէպի երկու կողմները: Ես հասկացայ, որ ինձ տեղափոխել են հիւանդանոց:

Ես անցուցի մի քանի բոպէ, առանց որ և է մտքի և առանց լիշողութեան, բոլորովին անձնատար եղած անկողնի վերայ պառկելու երջանկութեան: ՚Ի հարկէ, նախկին ժամանակ այդ հիւանդանոցային և բանդալին անկողնակալը կը ստիպէր ինձ խուսափել ստիպամբ և զզուանքով. բայց ես այլ ես այն մարդը չէի: Սփոցները—գորշագոյն և կապիտ, վերմակը—նիհար և ծակծակված, ներքնարկից յարդի հոտ էր գալիս:

Բայց ոչինչ, ինձ համար լայնարձակ էր՝ ձըդ-  
վելու այդ կոշտ սավանների ներքոյ, այդ վեր-  
մակի տակ, որչափ ևս նա վատ լինէր. ես զգում  
էի, որ փոքր առ փոքր իմ մէջ չքանում էր  
սառնութիւնը, որը հասնում էր մինչև ոսկոր-  
ներիս ուղեղը, սառնութիւն, որին ես արդէն  
սովոր էի: Ես գարձեալ քննցի:

Սարսափելի աղմուկը զարթեցրեց ինձ, ցե-  
րեկը նոր էր սկսել: Աղմկում էին գաւթում:  
Անկողինս պատուհանին մօտ էր, ես բարձրացաւ  
նրա վերայ, որ տեսնեմ, թէ ինչ կայ այնտեղ:

Պատուհանը նայում էր գէպի բխսթիրի  
մեծ գաւթմը: Նա լիքն էր մարդկանցով. երկու  
շարք զինուորներ այդ ամբոխի մէջ դժուարու-  
թեամբ պահում էին գաւթի երկարութեամբ ձրգ-  
փած սուլ ճանապարհը: Զինուորների այդ երկու  
շարքերի միջով դանդաղորէն, այս ու այն կողմ  
օրօրվելով, գնում էին հինգ երկար սազեր, մարդ-  
կանցով լցուած: Այդ դաժմանակիներն էին  
ուղեւորվում:

Այսկը բաց էին, իւրաքանչիւրի մէջ զե-  
տեղուած էր մի մի կապանատիր:  
Դաժմանակիր-  
ները նստած էին երկայնքին, երկու կողմից,  
թիկունքներով միմեանց կպած և իրալուց բա-  
ժանված շղթալին՝ դառնում է այն զգուելի ամ-  
բողջութեան կոտորակը, որ կոչվում է կա-  
պանք և շարժվում է որպէս մի մարդ: Մտա-  
ւորական ընդունակութիւնները մնում են մի  
կողմ, գաժանակիւրական վկնոցը նրանց դաժ-  
անապարտում է մահուան, իսկ կենդանեկան պա-  
հանջները պէտք է յալտնուեն լոկ նշանակլած  
ժամերում: Այդպէս, անշարժ, մեծ մասամբ կի-  
սամերկ, զլխարաց և ճոճվող ոտներով, նրանք  
սկսում էին իրանց քսան և հինդորեայ ճանա-

բողջ երկարութեամբ և որի ծալրում կանգնած  
էր՝ լցրած հրացանը ձեռին՝ պահապան հեր-  
թակալը:

Նրանց շղթաները որոտում էին, և սազի  
ամեն մի ցնցման ժամանակ, կարելի էր տես-  
նել, թէ ինչպէս էին նրանց զլուխները ցատկո-  
տում և գէպի գուրս կախուած ոտները ճոճվում:

Խիտ և մանր անձրեւ սառցնում էր օդը,  
քաթանի վարտիկները, դորշ գոնից սևի փոխ-  
փած, կաչում էին նրանց ծունկերին: Զուրը ծրլ-  
ծլում էր երկար միրուքներից, կարճ մազերից:  
Երեսները կապտել էին, երեսում էր ինչպէս նը-  
րանք մրսում էին, և ինչպէս նրանց ատամ-  
ները բաղխում էին կատաղութիւնից և ցրտից,  
Ակայն ոչ մի շարժում: Մարդ՝ մի անգամ բե-  
մուլտ շղթալին՝ դառնում է այն զգուելի ամ-  
բողջութեան կոտորակը, որ կոչվում է կա-  
պանք և շարժվում է որպէս մի մարդ: Մտա-  
ւորական ընդունակութիւնները մնում են մի  
կողմ, գաժանակիւրական վկնոցը նրանց դաժ-  
անապարտում է մահուան, իսկ կենդանեկան պա-  
հանջները պէտք է յալտնուեն լոկ նշանակլած  
ժամերում: Այդպէս, անշարժ, մեծ մասամբ կի-  
սամերկ, զլխարաց և ճոճվող ոտներով, նրանք  
սկսում էին իրանց քսան և հինդորեայ ճանա-

պարհորդութիւնը, նստեցրած լինելով միշտ մի և նոյն սազերի վերայ, հագնուած միւնոյն հաղուստով, թէ յուլիսեան ջերմ արեգակի և թէ նոյեմբերեան սառն անձրւների համար: Ի՞նչպէս չասել, որ մարդիկ կամենում էին նոյն իրկ երկնքին ստիպել կիսով չափ դահճի դեր խաղալ:

Ամբոխի և սազերի մէջ ծաղեց մի ինչ-որ օտարոտի կշտամբանք—մի կողմից, լիշոցնէր—միւս կողմից, զրդում և անէծքներ—երկու կողմից: Բայց կապիտանի նշանով, ես տեսայ թէ ինչպէս յանկարծ սազերի մէջ տեղացին փայտի հարուածներ ուսերի և զլուխների վերայ, և ամեն ինչ ընդունեց այն արտաքին հանգստութիւնը, որ կոչում է կարդ: Նրանց աչքերն էին միայն վառվում վրէժխնդրութեամբ, և անպիտանների բունցքները սեղմակում էին իրանց ծունկերի վերայ:

Հինգ սազեր, ձիաւոր ժանդարմների և հետիուր զինուորների ուղեկցաթեամբ, թագնը-վեցին միմեանց ետևից նիսեթիւն նետաւոր, մեծ դռներում: Վեցերորդը հետևում էր նրանց, բեռնաւորված կրակարաններով, պղնձէ աման-ներով և պահեստի շղթաներով: Մի քանի զի-նուորներ, դինետանը ուշացած, վազելով հաս-

նում էին իրանց խմբին: Ամբոխը ցրուեց: Այդ բոլոր տեսարանը անհետացաւ, ինչպէս մի ու-րուապատկեր, լսելի էր, ինչպէս օդի մէջ աս-տիճանաբար թուլանում էր անիւների և ձիերի սմբակների ծանր տրոփիւնը՝ ֆօնտելեբլուեան ճա-նապարհի վերայ, մտրակահարութեան ճայլթոցը, երկաթի զրնկոցը և ժողովրդի ազմուկը, որ ու-ղեկցում էր տաժանակիւներին ամենակարելի հայհոյանքով:

Եւ այդ նրանց համար դեռ միայն ծա-ղիկներ էին:

Արդ՝ այն ինչ էր ասում ինձ փաստաբանը թիավարանի մասին: Ճնորհակալ եմ. հազար ան-գամ լաւագոյն է մահը, լաւագոյն է պատժա-րանը, քան դաժանակը ութիւն, լաւագոյն է ոչնչութիւնը՝ քան դժոխք, լաւագոյն է պա-րանոցը մեկնել պարոն Գիլեստինի դանակի ներ-քոյ՝ քան դաժանական վզնոցի տակ: Թիա-վարանը, ինչ ասել կուզի, ուրախացրեց ինձ:

## ՀԱ.

Թժբաղդաբար ես չը հիւանդացայ: Երկրորդ օրը պէտք է դուրս գայի հիւանդանոցից: Բան-դը նորից ինձ ընդունեց իւր մօտ:

Առաջին եմ: Եւ ճշմարիտ, ես երիտասարդ եմ, ամուր և ուժեղ: Արիւնս ազատօքէն հոսում է երակներումս, անդամներս հնազանդում են իմ ամեն քմահաճութիւններին. Ես հոգւով և մարմնով արի եմ. Ես կազմուած եմ երկար կեանքի համար, այն, այդ ամենը ճշմարիտ է, բայց սակայն ես ցաւ ունեմ, մահացու ցաւ, ցաւ՝ մարդկանց ձեռքով տոեղծված:

Այն բոպէլց, որ ես հիւանդանոցից դուրս եմ եկել, ինձ հալածում է մի դառն միտք, որից կարելի է խելագարվել—մի միտք, թէ ես կարող էի փախչել, եթէ ինձ այնտեղ թողած լինէին: Բժիշկները և զժութեան քողերը, ըստ երեսոյթին, կարեկից էին ինձ: Մեռնել այս երիտասարդ հասակում և այդպիսի մահով: Նրանք, կարծես թէ, ցաւում էին ինձ համար, այնպէս ինձ ինսամում էին: Դատարկ բան, հետաքրքրութիւն է, ուրիշ ոչինչ: Եւ յետոյ, այդ մարդիկ փառաւոր կերպով բռժշկում են տենդից, բայց ոչ մահուան դատապարտութիւնից: Խոկ այդ նրանց համար նրգան հեշտ կը լինէր: Բացանել մի քիչ դուռքան հեշտ կը լինէր: Բացանել մի քիչ դուռքան համար նրգան հեշտ կը լինէր: Այդ նրանց համար մի մեծ դժուարութիւն չէր:

Այժմ այլեւս լոյս չը կալ, իմ խնդիրը կը

մերժեն, որովհետև ամեն ինչ օրէնքի հիման վերայ է կատարվել. վկաները ցոյց են տուել օրէնքի համեմատ, դատաւորները նմանապէս դատել են օրէնքի համեմատ: Ես այդ բանի վերայ լոյս չեմ տածում: Գուցէ... Է՛հ, ցնդաբանութիւն: Դատարկ բան, այլեւս լոյս չը կայ: Գործը վերահայելու համար տուած խնդիրը մի թոկէ, որից կախուած է լինում մարդ անդունդի վերայ և որը ճարճատում է, ճռճռում է ամեն բոպէ, մինչեւ որ կտրվում է: Այդ էլ նոյնպիսի մի զլասհատի դանակ է, միայն թէ մարդու վերայ ընկնող վեց շաբաթներ:

Եթէ ես կարողանալի ներումն ստանալ: Կերումն ստանալ:—Բայց ումնով, ինչո՞ւ: Ի՞նչպէս: Հաւատալու բան չէ, որ ինձ ներեն: Օրինակ է հարկաւոր, ինչպէս նրանք ասում են: Ինձ միայն երեք քայլ է մնում,—Բխեթը, Կօնսիերժերի, Դրեվա:

### XXXI.

Այն սակաւ ժամերում, որ ես անցուցի հիւանդանոցում, մի անգամ ես նստեցի պատուհանի մօտ, արեի տակ (չը դիտեմ ինչպէս, նա դուրս նայեց), կամ, աւելի լաւ է ասել, նրա միքանի ճա-

սագալթների տակ, որ պատուհանի վանդակը  
ազատ ինձ համար թողել էր:

Ես այնտեղ նստել էի, երկու ձեռներով բըռ-  
նած իմ ծանրացած-խաւարամած զլուխը, որին  
հաղիւ նրանք կարողանում էին պահել, ար-  
մունկներով ծունկերիս յենված, իսկ ոտներս ա-  
թուի մէջքին դրած: Վհատութիւնից ես միշտ  
միտեսակ կռանում և կռանում էի, որպէս թէ  
անդամներիս մէջ չը կային ոսկորներ, կամ մար-  
մնիս մէջ՝ մկանունքներ:

Բանդի ապականուած օգը ինձ խեղդամ էր  
աւելի, քան երբ ելցէ, գեռես ականջներումս  
հնչում էր դաժանակիրների շղթաների աղմուկը,  
գեռ ևս զգում էի սաստիկ յոդնածութիւն:  
Ես կարծեցի, որ Աստուած կը գթայ ինձ և կու-  
զարկէ ինձ զէթ մի որեւ է թուչնիկ, որ կտուրից  
մի բան կ'երդէր ինձ համար:

Զը զիտեմ գթաց ինձ Աստուած, թէ ոչ,  
բայց զրեթէ նոյն բապէին ես լսեցի պա-  
տուհանիս տակ մի ձայն, բայց ոչ թուչնի, այլ  
առանել լաւագոյն, մի տասն և հինգ տարե-  
կան մատաղահաս օրիորդի յստակ, թարմ և  
թաւիշեալ ձայն: Ես խոկոյն զլուխս բարձրացրի  
և սկսեցի ականջ գնել, թէ ինչ էր նա երգում:  
Այդ մի տխուր և վշտալի երգ էր, նման մի ինչ-որ

վշտալի և ողբալի մնչիւի: Ահա խօսքելը.  
Երեք ժանդարմ մեծ բեղերով,

Ճատ լիշոցներ տալով ինձ,  
Պինդ-պինդ վզիս խփեցին,  
Չեռներս պինդ կապեցին,  
Չեռներս մէջքիս:

Դժուար է նկարագրել իմ Հիանթափումը.  
Ճայնը շարունակեց.

Չեռներս պինդ կապեցին,  
Եւ զործակալն էլ եկաւ,

Մինք գնացինք հնդեքին,  
Եւ պատահեց մեզ ճամփին  
Իմ բարեկամ, գող զրացին,  
Մի լաւ տղալ և խելօք:

Իմ բարեկամ, գող զրացին,  
Ճուտով կնոջո մօտ վաղիք,  
Տեղեկացրու իմ մասին:

Գև կնիկս կը բարկանայ,  
Կասէ, ինչ է արել նա:  
Ճ՛ռտ պատասխանիր:

Կը հարցնէ ինչ է արել նա.  
Գիշերը իւշեւե առէ ուրբինս է լուսիւ, \*

\*) Մարդ եմ սպանել.

Եւ կաշին նոյնպէս քերթել, \*)  
Քոակը հանել, խել եմ տկտկանը, \*\*)  
Կոշիկներից կոճկապանը,  
Իսկ դիակը թաղել եմ:

Կոշիկներից կոճկապանը:  
Կը վագէ կինս գէպէ Վերսալի,  
Յետոյ կը շատալէ արքալի մօտ,  
Եւ դլուխ տալով, նրա ձեռին  
Սպիտակ շատիսոսը կը գնէ, \*\*\*)  
Թէ թնդ ինձ ներէ:

Սպիտակ շատիսոսը կը գնէ:  
Եւ միս, երբ նա ինձ ներէ,  
Կնոջս ոսկով կը պատեմ,  
Հնծայ կառնեմ կոշիկներ,  
Կը հազցնեմ մետաքս, ժապաւէններ,  
Թաւշեալ շորեր և ճոթեր:

Կը հազցնեմ մետաքս, ժապաւէններ:  
«Ինչպէս չէ, կասէ արքան,  
Կորիր, այ քեզ պատասխան,

\*.) Հանել եմ նրա շուերը:  
\*\*) Ժամացոյց:  
\*\*\*) Աղերսագիր:

Նրան ես պարել կը ստիպեմ,  
Այն բարձր հանգստաբանում,

Ուր ոչ պատ կայ, ոչ յատակ»:

Ես այ ես չէլ լսում, և չէլ էլ կարող աւելի լսել: Այդ սարսափելի առակի կիսահասկանալի և կիսազադուկ միտքը, այդ քաղաքապահների հետ կուփող աւազակը, փոքրիկ դողը, որին նա պատահում է և ուղարկում է կնոջ մօտ այն սոսկալի լուրը, թէ ես մարդ եմ սպանել և սրա համար ինձ նստեցրել են, հաշուի քառ ժըստին և լատիւ, այդ կինը, որ աղերսագրով Վերսալ է գնում, և զայրացած արքան, որ սպառնում է ստիպել նրան պարել այսպէս, ուր ոչ պառ չայ, ոչ յատոյ, և այդ ամենը, որ երգվեց այնպիսի դիւրեկան եզանակով, այնպիսի քաղցր ձայնիկով, որ շատ քիչ է լսվում մարդկային ականջավ... այդ ամենը ինձ կեղեքեց, տանջեց, ոչնչացրեց: Զգուելի էին այդպիսի անձունի բառերը վարդագոյն և քաղցրիկ շըրթունքների վերայ, ինչպէս լորձիւնը վարդի վերայ:

Ես ուժ չունեմ իմ զգացողութիւններս պատմելու, ինձ զմազեցնում էին և միւնոյն ժամանակ վիրաւորում էին լսողութիւնս: Դաժանակութեան և գոյալին թագուստի բարբառ,

միւնոյն ժամանակ, ծիծաղելի և արխւնաշաղաղ լեզու, մի սարսափելի գաղտալեզու, միացրած մանուկ աղջկայ ձախնի հետ, մանկական ձախնի նազելի վերափոխումն կնոջ ձայնի. այդ բոլոր տղեղ և անճոռնի խօսքերը, դիլ, պարզ, մարդարտաշար ձայնով երգուած... Ո՞ո, ի՞նչ դարշելի բան է բանդը:

Նրա մէջ կայ թոյն, որ ամեն ինչ ապահուանում է: Ամեն ինչ նրա մէջ աղտեղվում է, մինչեւ անգում և տասն ու հինգ տարեկան օրիորդի երդիկը: Կը տեսնէք այստեղ թռչուն՝ նրա թւեր վերայ կեղտ կայ, դեղեցիկ ծաղիկ կը քաղէք և հոտ կառնէք՝ նա գարշահուսում է:

### XXX.

Այս, եթէ կարողանալի դուրս դալ, ի՞նչ-պէս կը վազէի դաշտերով:<sup>5</sup>

Ընդհակառակը հէնց վազել իսկ հարկաւոր է: Աւշադրութիւն կը դարձնեն, կը կասկածեն: Պէտք է գնալ դանդաղ, զլուխը բարձր բռնած և երգելով: Գանել մի հին, կապոյտ բամկոն կարմիր ծաղկանկարներով: —Երբէք չեն կարող ճանաչել: Բոլոր հարեւան պարտիզանները այդպէս են հադնվում:

Արքէցից ոչ այնքան հեռու, ճահճի մօտ լիշում եմ մի անտառիկ, ուր, գեռ ուսումնաբանում եղած ժամանակս, հինգշաբաթ օրերը, ես գնում էի ընկերներիս հետ՝ զորտեր որսալու: Ահա հէնց այնտեղ մինչև երեկոյ կը թագնուեմ:

Իսկ զիշերը վերայ զարուն պէս, ես նորից ճանապարհ կը նկնեմ: Կը գնամ Վանսեն: Ո՛չ... այնտեղ գետը կը խանդարի: Կը գնամ Արպաժօն: — Ամենից լաւ է բանել Սեն-Փերմենը և գնալ չափը, իսկ այնտեղից խփել Անդզիա: — Ճատ լաւ: Մօտենում եմ Լօն ֆիւմօին, առաջի պատահած ժանդարմը հարցնում է անցագիր... Եւ ես կորած եմ:

Օ՛, ինեղճ երազող, նախ քանդիր քո բանդի երեք ոտնաշափ հաստութեամբ պատը:

Մահ: Մահ:

Օ՛հ, լիշում եմ, որ ես երեխայ ժամանակս գալիս էի այստեղ, Բիսեթը, որ տեսնեմ մեծ ջրհորը և խելազարներին:

### XXXI.

Այն բոպէին, երբ ես այս գրում էի, իմ կանթեղը գունաթափվեց, լուսաւորվեց, մատրան ժամացոյցը խփեց վեցը:

— Արդեօք, այդ ինչ է նշանակում: Հերթակալ բանդապետը հիմա մտաւ ինձ մօտ, բանդը, վերցրեց գդակը, բարևեց, ներողութիւն ինդրեց, որ ինձ նեղութիւն է պատճառում և հարցրեց, կարելոյն չափ, իւր կոշտ ձայնը մեղմացնելով, թէ ինչ կը հրամայեմ ես՝ նախաճաշկին ըերելու:

Սարսուռը անցաւ մարմնովս: Պւրեմն, միթէ այսօր:

XXX.

Այն, այսօր:

Ինքը վերատեսուչը այս բոպէլս ինձ մօտ այցելութեան եկաւ: Նա ինձ հարցրեց, թէ ինչով կարող է առանձնապէս դիւրեկան կամ օգտակար լինել ինձ, ցանկութիւն յախսեց, որ ես չը կարողանամ գանգատվել ոչ իրան, ոչ էլ իւր հպատակների վերայ, կարեկցաբար տեղեկացաւ իմ առողջութեան մասին և թէ ինչպէս եմ զիշերը անցուցել: Հեռանալիս, նա մինչև անդամ տիտղոսեց ինձ—պարհ այս-ինչ:

XXX.

Եյդ բանդապետը կարծում է, որ ես առիթ չունեմ գանգատվելու թէ իւր և թէ իւր օգնականների վերայ: Նա իրաւացի է. վատ կը լինէր եթէ ես գանգատվէի: Նրանք իրանց արհեստն էին կատարում. պահպանել են ինձ և, բացի այդ, քաղաքավարի են եղել ինչպէս սկզբում, նոյնպէս և վերջում: Խնդրեմ խոնարհաբար, գանգատվէլ:

Վյդ բարի բանդապետը ճապաղեալ ժպտով, մեղբալի խօսքերով և աչքերով, որոնք գուրգուրում են և դիտում, հաստ և լայն ձեռներով—այդ հօ մարմնացեալ բանդ է... այդ Բիսեթըն է, մարդ դարձած:

Վմեն ինչ իմ շուրջը բանդ է. ես տեսնում եմ բանդը ամենալին տեսքերով, մարդի տեսքով, նոյնպէս և կապանքի ու փականքի տեսքով: Վյդ պատը—բանդ է՝ քարից, այդ գոտուր—բանդ է՝ փալտից, այդ բանդապետները—բանդ են՝ մարմնից և ոսկորներից: Բանդը մի զարհութելի էակ է, ամբողջ, անբաժանելի, կէսը տուն, կէսը մարդ: Ես—նրա որսն եմ: Նա թափանցում է իւր աչքերով իմ մէջ, փաթաթվում է իւր

բոլոր վարակներով, պահում է իւր քարեայ պատերի մէջ, փակում է իւր երկաթեալ փականքներով և զիտում է իմ ետևից բանդապահի աշքերով:

Օ՛, թշուառ: Ի՞նչ կը լինի ինձ: Ի՞նչ կանեն նրանք ինձ հետ:

Այժմ ես հանգիստ եմ, բոլորը վերջացած է, կատարելապէս վերջացած: Ես գուրս եմ եկել այն անտանելի անձկութիւնից, որի մէջ ընկել էի բանդապետի այցելութիւնից յետով:

Որովհետեւ, խոստովանում եմ, ես գեռ լոյս ունեի... Այժմ, փառք Աստուծոյ, ես այլոս լոյս չունեմ:

Ահա ինչ պատահեց:

Ուղիղ եօթ և կէս ժամին—ներոգութիւն, քիչ առաջ—բացուեց բանդիս դառը: Ներս մըտաւ մի աշեղարդ ծերունի, մոլդ վերարկուով: Նա բացարեց վերարկուն, և ես տեսայ պճանաւորը և սպիտակ ծալէծալ օձիքը: Դա քահանան էր:

Բայց ոչ թէ բանդի քահանան: Եւ որա մէջ կար մի ինչ-որ չարազուշակ բան:

Նա նստեց իմ դէմուգէմ բարեհաճ ժափտով, յետով շարժեց գլուխը և բարձրացրեց աչքերը դէպի երկինք, արմինքն դէպի բանդի կամարը: Ես հասկացայ նրան:—Իմ որդի, —տասց

նա ինձ,—պատրաստվել էք դուք, արդեօք:

Ես պատասխանեցի նրան թող ձայնով.—Ես չեմ պատրաստվել, բայց պատրաստ եմ:

Սակայն իմ տեսողութիւնը պղտորվեց, սառցավին քրտինքը դուրս վազեց բոլոր անդամներից, ես զում էի, թէ ինչպէս սկսում էին սառցել քունքերս, իսկ ականջներս լցվում էին աղմկով:

Այն ինչ՝ քանի ես աթոռի վերայ երկրվում էի, որպէս կիսաքուն, բարի ծերունին խօսում էր: Գոնէ ինձ այնպէս երևաց և լիշում եմ, որ նրա շրթունքները բաց ու խուփ էին լինում, ձեռները շարժվում էին, աչքերը փապում:

Գուռը երկրորդ անգամ բացվեց: Սողնակների և փականքների աղմուկը մեզ երկուսիս ուշքի բերաւ, և ընդհատեց նրա ճառը: Ներս մտաւ մի ինչ-որ պարոն ես, ֆրակով, վերատեսչի հետ միասին, և ստոր բարեւեց ինձ: Այդ մարդու երեսի վերայ կար մի ինչ-որ պաշտօնական, տիրալի ժպիտ, որպէս թաղման հանդէսների կարգագրադների երեսների վերայ: Նա բռնած ունէր ձեռքում թղթերի մի կապոց:

—Ողորմած տէր,—ասաց նա ինձ քաղաքավարի ժպիտով,—ես փարիզեան արքայական դատարանի վճռակատարն եմ: Պատիւ ունեմ

յանձնել ձեզ պարոն աւագ դատախաղի թուղթը:

Առաջին խռովութիւնս անցաւ: Ինձ վերադարձաւ հոգւոյս բոլոր արիութիւնը:

—Այդ պարոն աւագ դատախաղն է,—  
պատախանեցի ես նրան, —որ այդպէս յամառութեամբ պահանջում է իմ զլուխը: Ինձ համար մեծ պատիւ է, որ նա ինձ զրում է: Յուսունեմ, որ մահս նրան մեծ բաւականութիւն կը պատճառէ: Ինձ համար շատ դառն կը լինէր մտածել, որ նա այնպէս ջերմիւ խնդրում է զլուխս, այն ինչ բոլորովին անտարբեր է դէպի նա:

Ես այդ ամենը ասացի և յետոյ բարձրաձայն աւելացրի. —Կարդացէք, պարոն:

Նա ոկտեց կարգալ երկարագոյն ճառը, ձըգձգելով ամեն մի տողը և քիչ մի կըմկմալով ամեն մի բառի վերալ: Այդ խնդրիս մերժումն էր:

—Դատավճիռը այսօր կը կատարվի Գրեվի Հրապարակի վերալ, — աւելացրեց նա, ընթերցումը վերջացնելով, բայց դրոշմաթղթից իւր աչքերը չը բարձրացնելով: — Ուղիղ ուժին կէս մնացած, մենք կը ճանապարհունք Կօնսիւրֆերի:

—Այնքան պարտաւորիչ չէ՞լք լինի արդեօք դուք, յարգելի պարոն, որ հետևէիք ինձ:

Ես վաղուց էի դադարել նրան լսելուց:

Վերատեսուչը խօսակցում էր քահանալի հետ:  
Նա աչքերը չէր հեռացնում իւր թղթից, ես նայում էի կխսաբաց դրան: Արարիչ Աստուած, միջանցքում կանգնած էին չորս զինուորներ, հըրացաններով:

Վճռակատարը կրկնեց հարցը, այս անգամ արդէն երեսիս նայելով: —Երբ ձեզ հաճոյ կը լինի, —պատախանեցի ես նրան: —Տնօրինեցէք իմ մասին:

Նա զլուխ տուաւ ինձ, ատելով. —Ես պատիւ կունենամ կէս ժամից յետոյ գալ ձեր ետևից:

Այն ժամանակ նրանք ինձ մէնակ թողին: Ինչպէս անեմ, պր փախչեմ, Աստուած իմ, ինչպէս անեմ, որ փախչեմ: Ինձ պէտք է փախչել նրանցից: Հարկաւոր է, հէնց խսկոյն: Թըռնով, պատուհաններից, կտրով, թէկուզ սեպհական միսս հարկ լինէր թողնելու գերանների վերալ:

Ո՛, վիշտ, դեկր, անէծք: Ամբողջ ամիսներ են հարկաւոր այդ պատերը լաւ գործիքներով ծակելու համար, իսկ ես չունեմ ոչ բեւու անգամ, և ոչ մի ժամ ժամանակ:

XXX.

Կօնոիերժերիից:

Ահա և ես տեղափոխուած եմ, ինչպէտ ասլած է արձանադրութեան մէջ: Բայց իմ ձանապարհորդութիւնս արժէ պատմել:

Ութի կէոր խփում էր, երբ իմ բանգի շէմքում նորից յալտնուեց վճռակատարը:

—Յարդելի՞ պարոն,—ասայ նա ինձ.—Ես ձեզ սպասում եմ: Աւաղ, դարձեալ նրա հետ կային ուրիշները:

Ես վեր կացայ և մի քայլ արի. ինձ թուում էր, որ միւսը անելու համար ես անկարող կը լինիմ, այնպէս ծանրացած էր զլուխս, այնպէս թուլացած էին ոտներս:

Սակայն ես ուղղուեցի և դնացի բաւականին ամրաքայլ: Բանդից դուրս գալիս, վերջին անգամ իմ հայացքը զցեցի նրա վերայ: Ես սիրեցի իմ բանդը:

Բացի այդ, ես թողնում էի նրան գատարկ և բաց, որև բանդին տալիս է մի տեսակ տարօրինակ տեսք:

Սակայն, նա երկար չի մնալ ոչ դատարկ, ոչ բաց: Հէնց այսօր երեկոյ, ասում էին համա-

րապահները, այնտեղ սպասում էին մի ինչ-որ դատապարտեալի, որին այս բոպէին պատրաստում է քրիչական դատարանը:

Միջանցքի դարձում մեզ հետ միացաւ քահանան: Նա հէնց նոր էր նախաճաշել:

Երբ մենք պահականոցից դուրս էինք դալիս, վերատեսուեց վաղաքշանօք սեղմեց ձեռու և աւելացրեց պահապաններիս թիւը չորս զինւորներով:

Հիւանդանոցի դրան մօտ մահամերձ ծերունին գոչեց ինձ.—Յուեսութիւն:

Մենք վերջապէս դուրս եկանք գաւիթը: Ես հառաջեցի, այդ ինձ գուարթացրեց:

Երկար չը գնացինք մենք: Կառքը փոստալին ձիերով բոլորալին լծած, կանգնած էր առաջին գալթում, նոյն այն կառքը, որով ես այստեղ եկայ:—Գա երկար սայլի նման մի բան էր, ուղղաձիգ, երկու բաժանմունքի կիսած երկաթաթելի այնպիսի խիտ ցանցով, որ կարելի էր կարծել, թէ նա հիւսուած է: Այդ երկու բաժանմունքներն էլ գուներ ունէին, մէկը կառքի առջևից, միւսը յետևից: Եւ այդ բոլորը այնպէս կեղտոտ, աղտոտ, փոշոտ էր, որ չքառոների մեռելասայլը, այդ կառքի հետ համեմատած, հանդիսակառքի կը նմանվէր:

Առաջ քան այդ երկանիւ գերեզմանի մէջ ինձ թաղելը, ես գէպի գաւիթը ձգեցի հայացք, մէկը այն վհատեալ հայացքներից, որից, կարծեօք, պատերը պէտք է յաղթահարուէին: Գաւիթը մի փոքրիկ հրապարակ էր, ծառերով տընկած—լիքն էր աւելի հանդիսատեսներով, քան դաժանակիրներով: Մինչ այս վայր ամբոխ:

Ճիշդ այնպէս, ինչպէս գաժանակիրներին ճանապարհելու օրը, տեղում էր աշնանալին անձրել՝ խիտ և սառն, որը շաղում է հիմայ էլ, երբ ես գրում եմ այդ, և անկատկած ամբողջ օրն էլ շաղելու է: Նա ինձանից երկար է ապելու:

Ճանապարհները հեղեղված էին, գաւիթը լիքն էր ցեխով և լճակներով: Ես հաճութեամբ էի նայում ամբոխին, որ խռովում էր այդպիսի ցեխի մէջ:

Մենք վեր ելանք կառքի վերայ, վճռակատարը մի ժանդարմի հետ անցաւ առջևի բաժանմունքը, քահանան, ես և միւս ժանդարմը՝ յետեխնը: Կառքի շուրջը պատեցին չորս ձիաւոր ժանդարմներ: Այդպէս, բացի սուրհանդակից, մէկ մարդու վերայ, ուժ մարդ:

Ան ժամանակ, երբ ես բարձրանում էի, մի ինչ-որ գորշաչեայ պառաւ կին ասաց.—«Այդ կապանքից (կօրդօն) էլ լաւ է»:

Ճատ հասկանալի է: Այդ մի ներկայացումըն է, որը հայացքով աւելի շուտ կըմբռնես, աւելի շուտ կը տեսնես: Այդ նոյնպէս հետաքրքրական է, բայց աւելի յարմար: Ոչինչ ձեր ուշքը չէ շաղվացնում: Այստեղ միայն մի մարդ է, բայց այդ մարդու զիմին այնքան աղէտներ են խորտակվել, որքան բոլոր գաժանակիրների վերայ, միասին վերցրած: Այստեղ սղութիւնը աւելի է, այդ մի թանձրացած ըմպելիք է, ուստի աւելի համեղ է:

Կառքը շարժվեց: Որոտալով մեծ գռների կամարի տակ, նա ներս գլորուեց ծառուղիի մէջ, և բխեթրի ծանր գռները փակուեցին մեր յետեկից: Ես զգում էի, որ զնում եմ մի աեսակ կաշկանդման մէջ, ինչպէս մահաքուն մտած մարդ, որ չէ կարողանում ոչ շարժվել, ոչ զոչել, մինչդեռ նա լսում է, որ իրան թաղում են: Ես ազօտաբար լսում էի, թէ ինչպէս փոստային ձիերի վզի բօֆօժները զրնկզրնկում էին, երեւմն լանզով, երբեմն մի ինչ-որ զկրտոցի նման, ինչպէս շառաչում էին անիւների հետ երկաթները մայթերի վերայ, կտմ բաղխում էին կառքի կողովին, փօխելով անուածիոր, լսում էի ժանդարմների թնդալի արշաւը՝ կառքի շուրջը, ուրեանդակակի մտրակի շաչիւնը: Այդ ամենը ինձ

երևում էր իրրեւ մի մրրիկ, որ ինձ տանում էր:

Լուսամտի վանդակապատի միջով, որ իմ առջևիս էր, իմ աչքերը մեքենայաբար կանգ առին մի արձանազրութեան վերայ, որ մեծ տառերով քանդակված էր Բիսեթը ի գլխաւոր գըրան ճակատին.

Անհեղանոց զառաթաշների համար:

—Ա՛! քեզ բան,—ասացի ինքս ինձ.—ըստ երևոյթին, այստեղ կարելի է ծերանալ:

Եւ, ինչպէս այդ լինում է քնի և արթնութեան մէջ, ես սկսեցի այդ միտքը պտտացնել ամեն մի կողմ խելքիս մէջ, որ վշտից թրմրած էր: Յանկարծ սալլը ծառուղիսց մեծ ճանապարհը ծռվելով, փոխեց տեսարանը լուսամուտից: Նրա մէջ, ինչպէս շրջանակի մէջ, անսպասելի կերպով յալտնվեցին Կօտր-Դամի աշտարակները, մոխրազոն և իր Փարիզեան մըշտուշով կիսաստուերված: Այդպէս էլ անսպասելի մտքերս փոխվեցին ուղեղիս մէջ: Բիսեթը պատկերի տեղ յայտնուեց տաճարի աշտարակների պատկերը:

—Նրանց համար, որոնք տեղ կը գտնեն կանանչ դրօշակաւոր աշտարակի վերայ, աւելի լաւ տեսանելի կը լինի,—ասացի ինքս ինձ, անմտարար ժպտալով:

Վիշում եմ, որ այդ լոկ բոպէին քահանան նորից սկսեց ինձ լորդորել: Ես չեմ ընդհատում նրան: Իմ ականջներում առանց այն էլ աղմկում էին անկւների որոտը, ձիերի արշաւը, մտրակի շաշիւնը:—Մի աղմուկ էլ աւելացաւ:

Ես լսում էի այդ միահնչիւն բառերի անկումը, որոնք թմրեցնում էին միտքս սրպէս շատրաւանի ծփծփանքը, և որոնք թափում էին իմ առջև, ըստ երևոյթին, զանազան, բայց իրոք բոլորը միւնոյնը, իբր կշկուու կինձնիներ—մեծ ճանապարհի վերայ—երբ յանկարծ վճռակատարի, —որը նստած էր առջևում, —չոր և ընդհատվող ձայնը, յանկարծակի ինձ զարթեցրեց:

—Ապա, պարոն Աբբատ, —ասաց նա զրեթէ ուրախաբար, —դիտէք արդեօք դուք նորութիւն:

Այդ խօսքերը վերաբերիում էին քահանալին:

Աբբատը, որ խօսում էր ինձ համար առանց հանգստութեան և խլացած էր կառքից, ըստ պատասխանեց:

—Լսեցէք, պարոն Աբբատ, —սկսեց վերտին վճռակատարը, բարձրացնելով ձայնը, որպէս զի լաղթէ անիւների ձայնը:—Դժոխալին կառք:

Իրաւ դժոխալին:

Նա շարունակեց.

—Այդ կատարեալ քաօս է, մարդ իրան չէ լսում: —Հա, ինչ էի ուզում ասել: Խնդրեմ լիշեցրէք ինձ, ինչ էի ուզում ասել, պարոն Աբրամ: Հա, այն էի ասում, լսելէք դուք այսօրուայ փարիզեան նորութիւնը:

Ես սոսկացի, կարծես, նա ինձ վերայ էր խօսում:

—Ոչ, —պատասխանեց քահանան, որ վերջապէս լսեց: —Ես գեռ ժամանակ չեմ ունեցել այսօրվայ լրազիրները կարդալու: Երբ ես, ինչպէս այսօր, զբաղուած եմ լինում ամբողջ օրը, խնդրում եմ դռնապանին, պահել ինձ համար լրազիրները, որ ես կարդամ երեկոյեան:

—Այս, —հակաճառեց վճռակատարը, —երբէք չեմ հաւատալ, որ դուք այդ չէք իմանում: Ամբողջ Փարիզի նորութիւնը: Այսօրանչ նորութիւնը:

Ես միջամտեցի խօսակցութեան. —Կարծեօք, ես այդ գիտեմ:

Վճռակատարը նայեց ինձ: —Գո՞ւք. ճշմարիտ: Դէ, ապա ինչ կասէք դուք:

—Դուք չափազանց հետաքրքիր էք, —պատասխանեցի ես:

—Ինչո՞ւ, չարգելի պարոն, —հակաճառեց

վճռակատարը: —Ամեն մէկը իւր քաղաքական կարծիքը ունի: Ես բաւական յարգում եմ ձեզ, որ ենթագրեմ, թէ դուք չունէք ձերը: Ինչ վերաբերում է ինձ, ես ըոլորովին համաձայն եմ ազգային զօրախմբի վերականգման մտքի հետ: Ես զգարդիայի զինուոր եմ եղել և, ճշմարիտ, այդ ամենահաճելին է:

—Ես չէի կարծում, որ դուք դրա մասին ասում լինէիք, —ընդհատեցի ես նրան:

—Ապա ես ինչո՞ւ մասին պիտի խօսէիք. դուք ասացիք, որ զիտէք նորութիւնը:

—Ես ասում էի մի ուրիշի մասին, որ նոյնպէս զբաղեցնում է այսօր ամբողջ Փարիզը:

Ցիմարը չը հասկացաւ, ես միայն հետաքրքրութիւն շարժեցի նրա մէջ:

—Ելի՛ նորութիւն: Ապա ո՞րտեղից, սատանան տանի, կարտզացաք դուք դտնել:

—Ի՞նչ նորութիւն է, 'ի սէր Աստուծոյ, ասացէք: Դուք չը զիտէք արդեօք, պարոն Աբրամ: Միթէ դուք ինձանից յառաջադէմ էք նորութիւններին հետեւելում: Ճատ խնդրում եմ, հաղորդեցէք: Բանը ինչումն է: Գիտէք, ես սիրում եմ նորութիւններ: Ես պատմում եմ պարոն նախազահին, և այդ նրան զբաղեցնում է:

Եւ ուրիշ հազար իմարտթիւններ: Նա կամ

դառնում էր ինձ, կամ Արքատին. ես նրան  
պատասխանում էի, ուսերս վեր քաշելով:

— Ե՞ն, դուք ինչի մասին մտահոգ եղաք,—  
ասաց նա ինձ:

Ես խորհում եմ այն բանի մասին, —պա-  
տասխանեցի ես, —թէ այսօր երեկոյեան այլ ես  
չեմ մտածելու:

— Այս, դուք զրա վերաբերմամբ էք ա-  
սում, — Հականառեց նա: — Ե՞ն, դուք շտա էք  
դառնանում: Պարոն Կառտէնը խօսում էր:

Ապա, սակաւ ինչ լրելուց յետով, աւե-  
լացրեց նա: — Ես տարել եմ նմանապէս պա-  
րոն Կառտավուանին. նրա զլիսին աքլոի մոր-  
թուց գդակի կար, և նա զլանակ էր ծխում: |  
Իսկ Լարօշելեան տասնսապետները խօսում էին  
միայն իրանց մէջ, բայց այնու տմենայնիւ խօ-  
սում էին:

Սակաւ ինչ լրելուց յետով, նա շարունակեց.

— Խելագարներ, ոգեզգածներ: Նրանք,  
կարծես, ատում էին ամեն ինչ և ամենքին: |  
Իսկ դուք ահաւասիկ իսկ որ մտահոգ էք, ե-  
րիտասարդ պարան:

— Երիտասարդ, — դոչեցի ես. — Ես ձեզանից  
մեծ եմ, ամեն մի քառորդ ժամը այժմ ինձ  
ձերացնում է մի տարով:

Նա շուռ եկաւ, նայեց ինձ մի քանի բռ-  
պէ բթամիտ զարմանքով, յետով սկսեց մռմըուալ:

— Ինչպէս չէ, ծաղրեցէք, հըմ, ինձանից  
մեծ: Ես ձեզ համար պապ կարող եմ լինել:

— Բոլորովին չեմ ծաղրում, — ասացի նրան  
լրջօրէն:

Նա բացեց իւր քթախոտի տուփը:

— Գէն, մի բարկանաք հոգեակ, հոտ ա-  
ռէք և մի լիշէք ինձ իրբե թշնամու:

— Մի՛ վախենաք, ես երկար չեմ լիշելու ձեզ:

Այդ բոպէին նրա քթախոտի տուփը, որ  
նա մեկնել էր դէպի ինձ, կպաւ մեզ բաժա-  
նող ցանցին. կառքի մի հարուած, և նա բաց-  
ված ընկաւ ժանդարմի ոտների տակը:

— Ասիծեալ միջնորմ, — զուեց վճռակատա-  
րը: Սա անբաղդութիւն չէ արդեօք, — շարու-  
նակեց նա, շառ զարով դէպի ինձ: — Բոլոր  
քթախոտը թափվեց:

— Ես ձեզանից շատ եմ կորցնում, — պա-  
տասխանեցի ես, ժպտալով:

Նա սկսեց հաւաքել քթախոտը, ատամ-  
ների արանքում մռմռալով. — Ինձանից շատ,  
հեշտ է ասելը: Մինչև Փարիզ առանց քթա-  
խոտի, այդ, հօ, սարսափելի է:

Այն ժամանակ քահանան ասաց նրան

մի քանի մխիթարական խօսքեր, և ես չեմ  
իմանում նրանից էր արդեօք, որ ես չափա-  
գանց հոգսի մէջ էի, միայն թէ ինձ թուեց,  
որ այդ շարունակութիւնն էր այն խրատների,  
որոնց սկիզբը ինձ էր բաժին հասել: Սակաւ  
առ սակաւ խօսակցութիւն կայացաւ Աքրատի  
և վճռակատարի մէջ: Ես թողի նրանց՝ կուշտ  
խօսել իրանց համար, և նորից անձնատուր  
եղայ մտածմունքների:

Հաւանական է, որ ես միւնոյն հոգեկան  
տրամադրութեան մէջ էի, երբ մենք մօտե-  
ցանք քաղաքաղբան: Բայց Փարփղը երևաց ինձ  
սովորականից աւելի աղմկալից:

Կառքը լոպէաչափ դադարեց մաքսարա-  
նի<sup>1)</sup> առջև:

Մաքսարոները դննեցին նրան: Եթէ այդ  
լինէր ոչխար կամ եզն, որոնց սովանդանոց տա-  
նելիս լինէին, մենք պիտի փող վճարէինք այս-  
տեղ, բայց մարդու գլուխը մաքս չէ վճա-  
րում. մեզ բաց թողին:

Անցնելով այդին, կառքը արագավաղ բաց  
ընկաւ Ան-Մանսօ և Սիտէ արուարձանների

1) Οετνοί—մաքսարան, որտեղ կենսական  
պիտուքներից թաքս են ժողովում:

այն հին ոլոր-մոլոր փողոցներով, որոնք գա-  
լարվում են և կտրում են մէկը միւսին, ինչպէս  
մըջիւնաքնի հազարաւոր ուղիները: Այդ նեղ փո-  
ղոցների սալայտակով կառքը գնաց այնպէս  
շուտափութ՝ և այնպէս աղմկալից, որ ես այլ-  
ես աւելի ոչինչ չէի լսում: Երբ ես նայեցի իմ  
փոքրիկ քառանկիւնի լուսամուտով, ինձ երևաց,  
որ անցորդները կանգ էին առնում, որ նայեն  
կառքին, և որ երեխանների ամբողջ խմբեր վա-  
զում էին նրա ետևից: Ինձ նոյնպէս երևաց,  
որ երբեմն, տեղ-տեղ, փողոցների անկիւններում,  
մի ինչ-որ մարդ, կամ պառաւ կին—ցնցոտիկի  
մէջ, կամ թէ երկումն էլ միասին, բռնած ու-  
նէին ձեռներում տպած թղթերի ամբողջ կա-  
պոց, և որ անցորդները յարձակում էին այդ  
թղթերի վերայ բերանները բաց, կարծես, նրա  
համար, որ բղաւեն:

Աշտարակի ժամացոյցը խիեց ժամի ուժ և  
կէսը, երբ մենք մտանք Կօնսիերժերիկի բազը:  
Այդ ահազին սանդուխը, այդ ու մատրան, այդ  
մռացլ զռների տեսարանը շրջապատեց ինձ սառ-  
ցալին պաղութեամբ: Երբ կառքը կանգնեցաւ,  
ես արդէն կարծում էի, որ սրտիս բարախումը  
ևս պիտի կանգ առնէ:

Սակայն ես ոլորես ժողովեցի: Գոնակը

կայծակի արագութեամբ բացվեց, ևս գուըս թշ-  
ռայ շարժական բանդից և արագ քայլերով  
մտայ երկու շարք զինուորների միջով կամար-  
ների տակ: Իմ ճանապարհի վերայ արդէն ժո-  
ղովուել էր ամբոխը:



Քանի որ ես անցնում էի արդարադա-  
տութեան պալատի հասարակական միջանցք-  
ներով, ես ինձ զբում էի զբեթէ ազատ, ոչ-  
ինչ ինձ չէր նեղում. բայց բոլոր վճռականու-  
թիւնս կորցրի, եթե բացվեցին իմ առջև քաշ  
գուները, գաղտնի սանդուխքները, ներքին անց-  
քերը, երկար խեղդիչ և խուլ միջանցքները, որ-  
տեղ մտնում են միմիայն գատապարտեալները  
կամ դատապարտիչները:

Վճառակատարը շարունակում էր ինձ ուղեկ-  
ցել: Քահանան գնացել էր, խոստանալով երկու  
ժամից յետու գալ. նա ինչ-որ գործեր ունէր:

Ինձ տարին առանձնասենեակը տեսչի, որի  
ձեռքը յանձնեց ինձ վճռակատարը: Այդ փո-  
փոխումն էր:

Տեսուչը խնդրեց նրան քիչ սպասել, յայտ-  
նելով, որ ինքը մի որո ունի, որին խելոյն պէտք

է տանել Բիսեթը վերադառնող կառքով: Ան-  
կասկած այդ այսօրվայ դատապարտեալն էր,  
որը ալսօր երեկոյեան պառկելու է իմ յարդեալ  
կապոցի վերայ:

— Ճատ լու, — ասաց վճռակատարը, — քիչ  
կապատեմ. մենք երկու արձանազրութիւնն իր  
կազմենք մի անգամից և գործը իր վերջանաբ:

Իսկ ինձ մինչ այս նստեցրին մի փոքրիկ  
առանձնասենեակում, որ կից էր տեսչի սենետ-  
իւն: Այստեղ ինձ փակեցրին բոլորովին միայնակ:

Չը գիտեմ, ինչի վերայ էի մտածում և ինչ-  
քան ժամանակ մնացի այստեղ, եթե բոլորովին  
իմ ականջի մօտ յանկարծ թնդացող քըքիջը  
ինձ զարթեցրեց մտահոգութիւնից:

Սոսկարով, ես աչքերու բարձրացրի: Ես արդէն  
միայնակ չէի առանձնասենեակում, մի ինչ-որ  
մարդ, մօտ լիսուն և հինգ տարեկան, կանգ-  
նած էր իմ առաջիս, միջին հասակով, խորշո-  
մած, կորացած, սպիտակամազ, լայն ոսկորներով,  
զորշ աչքերի խոժոռած հալացքով, դառը ժըպի-  
տով երեսի վերայ, կեղտոտ, ցնցոտիների մէջ,  
կիսամերկ, զգուելի: Հաստ երեսովթիւն, զուռը բաց-  
վել էր և նրան թողել, յետու նորից փակուել  
էր. իսկ ես այս չեմ նկատել: Եթէ մահն էլ  
այդպէս էր եկել:

Մի քանի վարկեան երկուսս էլ անթարթ միմեանց վերալ էինք նայում, նա՝ շարունակելով իւր ծիծաղը, որ խուռոցի էր նման, ես՝ կիսազարմացած, կլոսավախեցած:

— Ո՞վ էք դուք, — հարցը ես, վերջապէս:

— Տարօրինակ հարց, — պատասխանեց նա: Հոգոցը ասվածը:

— Հոգոց ասվածը, այդ ինչ է նշանակում:

Այդ հարցը կրկնապատկեց նրա ուրախութիւնը:

— Այդ նշանակում է, — զուեց նա, հռհռոցից խեղուելով, — որ Ծարլօն<sup>1)</sup> վեց շաբաթից յետոյ գնդակ է խաղալու իմ սօլբանայովս ճիշդ այնպէս, ինչպէս քո կոճղովդ վեց ժամից յետոյ: Հա հա: Համկացար վերջապէս:

Արդարեւ, ես գունաթափվեցի և մազերա փշաքաղվեցին. այդ մի ուրիշ դատապարտեալ էր, այսօրուանը, այն, որին Բիսեթրում սպասում էին, իմ ժառանգը:

Նա շարունակեց.

— Ի՞նչ արած: Ահա քեզ իմ պատմութիւնը. ես մի շատ լաւ զողի որդի եմ, ափառ, ճշմարիտ, որ Ծարլօն ուզեց մի գեղեցիկ օր կապել

<sup>1)</sup> Դահկէ.

նրա փողկապը: Այդ այն ժամանակն էր, երբ, Աստուծոյ ողորմութեամբ, գեռ թագաւորում էր կախաղանը: Վեցերորդ տարումս ես զրկվեցի հօրից և մօրից, ամառը ես զլորվում էի անիւր պէս մեծ ճանապարհի փոշիների մէջ, նրա համար, որ ինձ մի սու<sup>1)</sup> ձգէին երթեւելող կառքերի լուսամուտներից՝ ձմեռը վազվզում էի ցեխերի մէջ բոկոտն, փչերով ցըտից կապտած ձեռներիո մէջ. անդրավարդկիս պատառվածներից երեսում էր մերկ մարմինս: Ինն տարեկան ես արգէն սկսեցի արձակել մազիլներս<sup>2)</sup>, մերթ գրպան էի մտնում, մերթ պոկում էի մէկի կաշին<sup>3)</sup>: Տասը տարեկան հասակումս ես արգէն փոքրիկ գող էի: Յետոյ ես մի քանիսի հետ ծանօթացալ, և տասնութում արգէն սրիկալ էի: Կողոպտում էի խանութներ, յարմարեցնում էի շուռառուիկներ<sup>4)</sup>: Ինձ ձերբակալեցին — տարիներս պատշաճ էին — և ինձ աքսորեցին Թիֆրան: Տաժանքը ծանր բան է. քնում ես մերկ տախտակների վերալ, խմում ես հորի ջուրը, ուտում ես ուշ հացը և քարշ ես տալիս յետեցդ լի-

<sup>1)</sup> Սու հաւասար է 1 ½ կոսէկի:

<sup>2)</sup> Չեռներ:

<sup>3)</sup> Վերարկուն գողանաւ:

<sup>4)</sup> Բանալիներ:

մար ոռումբը<sup>1)</sup> , որը ոչինչի պէտք չէ գալիս: Խոկ փայտի և արեգակի հարուածները: Նկատիք, որ քեզ բոլորովին ածելում են. խոկ իմ մաղերս այնպէս փառաւոր և խիտ էին... Ոչինչ: Գիմացար: Տասն և հինգ տարի շուտ է անցնում. ես երեսուն երկու տարեկան էի: Ահա, մի զեղեցիկ առաւօտ, տալիս են ինձ ճանապարհաթուղթ՝ և վաթսուն ու վեց ֆրանկ<sup>2)</sup> , որը ես զիզել էի տաժանքի տասն և հինգ տարիներում, զործելով օրը տասն և վեց ժամ, ամիսը երեսուն օր, տարենը տասն երկու ամիս: Հոգ չէ: Ես կամենում էի վաթսուն ու վեց ֆրանկով դառնալ աղնիւ մարդ, և իմ ցնցոտիներիս տակ թագնուած էին աւելի բարի զգացմունքներ, քան մի որ և է աբրատի ֆարաջու տակ: Բայց զիսազիս, սատանան տանէ նրան, զեղին էր և նրա ճակատին զրված էր՝ առաջաւած պաժառակիր. պէտք էր այդ ամենուրեք ցոյց տալ, որտեղով որ ես անցնէի, և

<sup>1)</sup> Ֆրանսիայում տաժանակիքները ոտքի շըգթայի հետ կրում են և մի ոռումբ, որը, եթե պատիժ, նրանք պարտաւորված են քարշ տալ յետեց: Ինչպէս ասում են, այդ այժմ վերացրած է:

Օռաք. Առք:

<sup>2)</sup> Մի ֆրանկը 25 կուէկ է:

ամենայն շաբաթ ցոյց տալ այն զիւղի տանուտէրին, որտեղ ինձ բնակեցրել էին: Փառաւոր վլիայական: Տաժանակինը: Ես բոլորին վախեցնում էի. փոքրիկ երեխաները թագնվում էին ինձանից, և դռները քննթիս առաջ փակվում էին: Ոչ ոք չէր կամենում ինձ գործ տալ: Կերայ ես իմ վաթսուն և վեց ֆրանկո: պէտք էր մի բանով ապրել: Ցոյց էի տալիս աշխատանքի ընդունակ ձեռներս—ինձ լսել չէին կամենում. ծախում էի օրս տասն և հինգ սուով, տասնվ, հինգով: Ո՞ւր: Ի՞նչ պէտք է անես: Միանգամքաղցածութիւնը ինձ տանջում էր, ես արմունկովս կոտրեցի հացթուիր խանութի ապակին, վեր առի հացը, խոկ հացալածառը վեր առաւ ինձ: Հացը ես չը կերայ, բայց աքսորվեցի մշտական տաժանակիր աշխատանքի, ուսիս վերայ երեք ալրած տառերով—ցոյց կտամ, եթէ կուզես: Այդ նրանց լեզուով ասվում է հրանուի յանցանք<sup>1)</sup>: Այդպիսով ես դարձայ վանած անդեպէ չէ<sup>2)</sup>: Նորից ինձ տեղաւորեցին Տուլոնում, այս անդամ հանաչ խռովերով<sup>3)</sup>: Պէտք էր ծլկվել: Դրա

<sup>1)</sup> Récidive.

<sup>2)</sup> Նորից աքսորանքի բերված:

<sup>3)</sup> Մշտնջենական թիստարտ:

Համար պէտք էր ծակել երեք պատ, խորտակի երկու շղթա. ինձ ունէի բւեռ, և ես ծլկվեցի:

Դղրդին բարձրացրին, թնդանօթներից արձակեցին, որովհետեւ մեր տաժանակիր եղբայրը, ինչպէս քո կարգինալը, կարմիր է հազնը-ված.—յետևից հրացանաձում են, երբ մենք դուրս ենք դալիս: Միայն թէ այդ ծտերին էին կրակում: Այս անգամ տեղին դլխագիր ըլ կար, և փող էլ չկար: Ես պատահեցի ընկերների, որոնք նոյնպէս մաշել էին փոկերը, կամ կը ծոտել էին շղթան: Նրանց առաջնորդը առաջարկեց ինձ տեղ խւր խմբի մէջ.—սպանում էին նրանք մեծ ճանապարհների վրայ: Ես համաձայնուեցի և սկսեցի նոյնպէս սպանել, որ ապրեմ: Թալանում էինք և դիլիժանսներ և ճանապարհական կառքեր, իսկ երբեմն և մի որեւէ հեծեալ շինականի: Փողերը առնում էինք, ձիերը կառքի հետ արձակում էինք, իսկ մարդուն մի որևէ ծառի տակ թաղում էինք, աշխատելով, որ ստները դուրս ըլ ցցուեն: Յետոյ գերեզմանի վրայ քիչ պարում էինք, որ հողը փոքր ինչ հարթվի: Այդպէս ահա և ես ծերացայ, աղբելով մացառուտներում, քնելով բաց երկնքի տակ, հալածուելով մի անոտալից միւսը. բայց գոնէ աղատ և անկախ:

Այսպէս թէ այնպէս, բայց ամեն բանին վերջ կայ: Մի գեղեցիկ զիշեր մեզ բոլորիս պատեցին ժանդարմները: Ընկերներս փախան, իսկ ես, նրանցից ծերազանը, ես մնացի այդ եռանկիւնի գդակաւոր կատուների ճանգերում: Ինձ բերին ախտեղ: Ես արդէն անցել եմ այս սանդուխքի բոլոր աստիճանները, բացի մէկից: Ինչ թաշկինալ գողանալ—ինչ մարդ սպանել—ինձ համար այլևս բոլորը միւսնոյնն էր. բացի գահնից, ինձ ոչինչ չէր մնացել: Իմ բանս կարձ էր: Ճշմարիտ է և այն, որ ես արդէն ծերացել եմ և ոչինչ բանի առաւել պիտանի չեմ: Հայրս պսակվել է այլիի վրայ <sup>1)</sup>, իսկ ես էլ կը ճանապարհվեմ ճգնաւորների վանքը <sup>2)</sup>: Ահա և բոլորը, ընկեր:

Ես համարեա լիմարացայ, լսելով նրան: Կա սկսեց առաջվանից բարձր հռհռալ և կամենում էր բռնել իմ ձեռը: Ես զգուանքով յետ քաշուեցի:

— Բարեկամ,—ասաց նա ինձ,—գու, կարծես թէ տխուր ես: Կալիք, մահի առաջ ըլ վախենաս: Գիտես, այնտեղ հրապարակի վերայ դու պէտք է անցկացնես ամենալիա բոպէ, բայց այդ

<sup>1)</sup> Կախել են նրան:

<sup>2)</sup> Իմ գլուխս կը կտրեն գլխահատի վրայ:

**երկար չէ:** Ես կըցանկանալի լինել այնտեղ, որ  
այդ բանը քեզ ցուց տավի: Գիտե՞ս ինչ կայ: Ես  
մինչև անգամ բաղրաք էլ չեմ ներկայացնի, եթէ  
միայն հէնց այսօր ինձ էլ քեզ հետ հնաձեն:  
Պի տէրտէրը մեզ երկուսխ բաւական կը լինէր.  
Ինձ համար նրանից քեզ բաժին հանելը ոչինչ  
չարժէ: Դու տեսնում ես, որ ես բարի մարդ եմ:  
**Հա:** Կուզե՞ս: Բարեկամաբարա՞բ:

**Նա էլի մի քայլ արաւ գէպի ինձ:**

— Յարդելի պարոն, — սոսացի ես, հրելով  
նրան, — շնորհակալ եմ ձեզանից:

**Հռհռոցի ճայթիւններ:**

— Հօ, Հօ, յարդելի պարոն. դռւք մի տե-  
սակ մարկիզ ոմն էք եղած: Դա— Յարկիզ է...

Ես ընդհատեցի նրան: — Բարեկամ, ես պէտք  
է ոյժերս ժողովեմ, թող ինձ:

Իմ խօռքերի լուրջ եղանակը ստիպեց  
նրան յանկարծ մտախոհ լինել: Նա շարժեց իւր  
սպիտակ և զբեթէ ճադատ գլուխը, յետոյ  
սկսեց եղանգներով չանգոռուել իւր թաւոտ  
կուքքը, որ երեսում էր նրա բաց շապկի միջից.  
վերջապէս, ատամների արանքից մզեց, «Յայտնի  
բան է, վարագ <sup>1)</sup>:

<sup>1)</sup> Քահանաց:

Յետոյ սակաւ ինչ լրելով, նա համարեա  
երկոտութեամբ աւելացրեց.

— Լաւ է. մարկիզ եղէք, ոչի՞նչ: Բայց  
երկելի է ձեր վերնազգեստը <sup>1)</sup>, նա ձեզ այլեւս  
պէտք չի գալու. Ճառօն վեր կ'առնի նրան:  
Բաշլեցէք ինձ այդ վերնազգեստիկը, ես կը  
ծախեմ նրան և թամբաքու կառնեմ:

Ես հանեցի վերնազգեստս և տուի նրան:  
Նա երեխայի նման ուրախութիւնից ծափ տուաւ:  
Յետոյ, տեսնելով, որ ես մնացի միայն շապկով և  
ցբուց գողդողում էի, արտաքերեց.

— Դուք սառել էք, հաղէք ահա այս,  
անձըև է գալիս և ձեզ թրջելու է, բայց պէտք  
է սայլի վերայ պատշաճութիւնը պահպանել:

Այդ սառելով, նա հանեց իւր վրայից կո-  
պիտ մահուցի զորշագոյն բաճկոնը և անցկաց-  
րեց իմ թեհերս նրա մէջ: Ես ընդիմադրեցի:

Ելստեղ ես թեքլինցի պատին, և ինքու էլ  
ըլ գիտեմ ինչպիսի տպաւորութիւն զործեց ինձ  
վրայ այդ մարդը: Նա սկսեց տնտղել նուի-  
րած վերնազգեստը և ուրախ բացականչու-  
թիւններ էր, որ անում էր:

— Քրպանները ամբողջիկ են... Ոչիքը մին-

<sup>1)</sup> Սերտուկ:

չեւ անգամ իսկի չի էլ մաշուած... Արան զի՞ն  
կըտան առ նուազը տասն և հինգ ֆլանկ:  
Թամբաքու առատորէն վեց շաբաթ հերեւք կը  
լինի:

Դուռը նորից բացվեց: Եկան մեր երկուսի  
ետևից. իմ ետևից՝ որ տանեն այն սենեակը,  
ուր դատապարտեալները սպասում են իրանց  
վերջին ժամին. նրա ետևից՝ որ տանեն նրան  
Բիսեթը: Կա քրքիջով կանգնեց զինուորների  
ինձի մէջտեղում, որոնք նրան պէտք է ու-  
ղեկցէին, և ասաց ժամապարմներին.

— Կայեցէք, չը լինի թէ սխալուէք, մենք  
ահա պարոնի հետ կաշիներս փոխել ենք. ինձ  
նրա տեղը ընդունէք: Աստանան տանի: Հի-  
մա ես ինքս էլ չեմ ուզում. Հիմա թամբաքու  
գնելու համար փող կայ:

### ՀՀՀՀՀ.

Ծեր անպիտանը խլեց ինձանից վերնա-  
զգեստու—ես հօ չէի տալիս նրան—և ինձ թո-  
ղեց իւր ցնցոտիկները, իւր խայտառակ բա-  
կոնը: Ո՞ւմ եմ նմանում այժմ:

Ես վերնազգեստու տուի նրան ոչ թէ ան-  
հոգութիւնից, ոչ թէ ցաւակցութիւնից: Բոլո-

րովին ոչ. այլ նորա համար, որ նա ինձանից  
ուժեղ էր: Ճատ կարելի է, եթէ ես մերժէի  
նրան, նա ինձ ծեծել էր իւր բուռնցքներավ:

Հապա, ինչպէս չէ: Ցաւակցութիւն: Իմ  
մէջ չարութիւնը եռում էր: Ես կամենում էի  
խեղզել նրան, ծեր գողին, իմ ձեռներով: Ցան-  
կանում էի այնուեղ և եթ ոտնատակ անել նրան:

Ես գոռում եմ, ինչպէս իմ սիրտը լցուած է  
կատաղութեամբ և գառնութեամբ: Տրաքած հօ-  
ըլ լինի իմ մէջ լեզի փամփուշտը: Պահը մար-  
դուն չար է դարձնում:

### ՀՀՀՀՀ.

Նրանք ինձ բերին մի-ինչ որ նկուզ, ուր  
ոչինչ չը կայ, բացի պատերից և գոներից, փա-  
կանիների և սողակների բազմութեամբ, ի հարկէ:

Ես ինդրեցի սեղան, աթոռ և ամեն ինչ,  
որ հարկաւոր էր գրելու համար: Ինձ համար  
այդ բոլորը բերին:

Յետոյ ես ինդրեցի անկողին: Բանդապետը  
նայեց ինձ վերայ այն հարցական հալացքով,  
որ, կարծես, ասելիս լինէր. — Ապա ինչու համար  
ես ուզում այդ:

Սակայն նրանք դըին ինձ համար անկիւ-

Նում մի ծալվող անկողին: Բայց, միենոյն ժամանակ, դրին և մի ժանդարմ իմ սէնէադուտ, ինչպէս նրանք կուռմ էին նկուղը:

Չը լինի թէ նրանք փախենում են, որ ես ներքնարկուի ինձ կը խեղդեմ:

XXXV.

### Տասը ժամն է:

Ա՛հ, իմ խեղճ երեխայ. վեց ժամ ես, և ես կը մեռնեմ: Կը դառնամ մի պլիղծ զանգուած, որը քաշքշելու են անդամագննարանների (կիբինիկա) սառը սեղանների վերայով. գլուխ, որից կը վերցնեն դիմակը. իրան, որը կըսկսեն կտրատել. խակ մնացորդը կըդնեն դագղի մէջ, և բոլորը միասին կը տառնեն Ալոմարեան գերեզմանատուն:

Ահա ինչ կանեն քո հօր հետ այդ մարդիկը, որոնցից ոչ մէկը ատելութիւն չէ զգում դէպի ինձ, որոնք բոլորը ափսոսում են և բոլորը կարող էին ինձ փրկել: Նրանք ինձ սպանելու են, հասկանում ես, արդեօք, Պարիսմ, սպանելու են սառնարիւն, հանդիսով, ընդհանուրի բարիքի համար: Օ՛հ, Աստուած իմ, Աստուած իմ:

Խեղճ մանկիկ: Մանկիկ այն հօրը, որը քեզ այդպէս սիրում էր, այն հօրը, որը համբուրում էր քո սպիտակիկ, անուշահոտ վզիկդ, որը անդադար շոյում էր քո գանգուր մազերիկդ՝ ինչպէս մետաքս, որը առնում էր քո գեղատեսիկ կորիկ երեսիկդ իւր ձեռների մէջ, ստիպում էր քեզ վաղել իւր ծունկերի վերայ, խակ երեկոները բարդում էր պստիկ ձեռներդ, որ դու աղօթես Աստծուն:

Այժմ ով պէտք է անէ քեզ հետ այդ ամենը: Ո՞վ պիտի սիրէ քեզ: Քո հասակակից միւս երեխանները կունենան հայրեր, դու միայն չես ունենալ: Ի՞նչպէս կը մոռանաս, իմ զաւակս, տօնածաղիկները, ընծանները, գեղեցիկ խաղալիքները, քաղցրեղէնները և համբոլինները: Ի՞նչպէս կը մոռանաս, թշուառ որբիկս, ուտելն ու խմելը:

Ա՛հ, եթէ այդ երդուեալները տեսնէին իմ սիրունիկ, փոքրիկ Պարիսմին: Նրանք կը հասկանացին, որ չէ կարելի սպանել երեք տարեկան մանկան հօրը:

Խակ երբ նա մեծանայ, եթէ միայն կը մեծանայ, ինչ կը լինի նրա հետ: Նրա հայրը կը մնայ Փարիզի ազգաբնակութեան լիշողութիւններից մէկը: Նա պիտի կարմրի ինձ և իմ

անունիս համար. նրան պիտի արհամարհեն,  
մերժեն իմ պատճառով, որ նրան սիրում եմ  
բոլոր սրտով: Օ՛հ, իմ տիրեցեալ Մարիամ, միթէ  
ճշմարիտ է, որ դու պէտք է ամաչես և զար-  
հուրես ինձանից:

Թշուառ: Ի՞նչ ոճիր եմ գործել ես և ինչ  
ոճիր եմ ստիպում գործել հասարակութեան:

Օ՛, եթէ ճշմարիտ է, որ ես պիտի մեռ-  
նեմ մինչև ալսօրվայ վախճանը: Միթէ ճշմարիտ  
է այն, թէ ես պէտք է մեռնեմ: Այդ խուլ աղ-  
մուկը, այդ գոչիւնները բագում, այդ ալիքներն  
ուրախ ամբոխի, որը արդէն հոսում է դէպի  
ափերը, ժանդարմները, որոնք զինուրանոցնե-  
րում պատրաստվում են, քահանան—ուե շորե-  
քով, էլի մի ուրիշ մարդ—կարմիր ձեռներով,  
այդ բոլորը ինձ համար է: Ես մեռնելու եմ,  
Ես, որ ահա այստեղ է, որ ապլում է, շարժ-  
վում է, շնչում է, նստած է այս սեղանի առջև,  
նման միւս բոլոր սեղաններին, վերջապէս, նոյն  
ինքը, որին ես շօշափում եմ, զգում եմ և որի  
հագուստը հաւաքվել է ահա այդ իսկ ծալքերով:

ՀՀՎՎ.

Եթէ գեռ կարելի լինէր իմանալ, թէ ինչպէս  
է այդ ամենը սարքած, և ինչպէս են այնտեղ  
մեռնում, բայց... Սարսափելին է. ես այդ ըլ գիտեմ:

Այդ գործիքի անունը զարհուրելի է, և ես  
չեմ հասկանում, ինչպէս կարողանում էի մին-  
չև այժմ արտասանել և դրել նրան:

Այդ ինքը տառերի զուգաւորութիւնը, նը-  
րանց տեսքը, կերպարանքը արդէն զարթեցնում  
են սարսափեցուցիչ միտք, և թշուառ բժիշկը,  
որը այդ մեքենան հնարել է, ունեցել է չա-  
րագուշակ անուն:

Այն պատկերը, որում ես այս բառը մար-  
մնացնում եմ, մութ է, անորոշ և, նամանաւանդ,  
զարհուրելի: Ամեն մի վանկը, կարծես թէ, մե-  
քենայի մի մասն է: Ես անդադար շինում եմ  
և քանդում երևակայութեանս մէջ հրէշային  
տախտակամածը:

Եմ համարձակվում ոչ ոքից հարցնել, բայց  
չէ որ զարհուրելի է չիմանալ, թէ այդ ինչ է,  
և ինչպէս պէտք է կպչես նրան: Երեկի, այն-  
տեղ կայ զսպանակ, և ինձ կը ստիպեն երեսիս  
վերայ պառկել...: Օ՛, մազերս կը սպիտակեն  
առաջ, քան կընկնէ իմ գլուխը:

XXXVIII.

Բայց չէ որ ես մի անգամ տեսել եմ նրան:

Մի անգամ, առաւօտեան, ժամը այդպէս տասնումէկին, ես անցնում էի կառքով Գրեվի հրապարակի վերայով: Յանկարծ կառքը կանգնեց:

Հրապարակը լիքն էր ժողովրդով: Ես զըլուխս դուրս բերի լուսամտից: Խուժանը խռովում էր հրապարակի վերայ և գետափերում.— տղամարդիկ, կանայք, երեխայք կանգնած էին ձեմելիքի վերայ: Գլուխներից վերև երևում էր մի ինչ-որ բան, նման կարմիր փայտեալ բեմի, որը պնդացնում էին երեք մարդ:

Նոյն իոկ այդ օրը նշանակված էր մի մահապարտի պատիքը, և մեքենան շինվում էր:

Աչինչ չը տեսնելով, ես շուռ տուի երեսու: Կառքիս մօտ կանգնած էր մի կին և երեխային առում էր.

— Կայիր: Տեսնում ես, դանակը փատ է զործում, ահա նրանք էլ ուշահաւը օծում են ճարպի կտորով:

Ահ, թշուառ, այս անգամ չը պիտի դարձնես դու քո զլուխը:

XXXIX.

Ներումն, ներումն ինձ, զուցէ դեռ ներումն է լինելու: Թաղաւորը իմ դէմ ոչինչ չունէ: Թող կանչեն այստեղ իմ փաստաբանին, շուտ, իմ փաստաբանին: Ես կամենում եմ զնալ տաժանակրութեան: Հինգ տարի տաժանակրութեան մէջ.— ինչ հոգ, կամ քսան տարի, կամ յաւլտենական կարմիր դրօշներով: Պիտի թէ խնայեցէք իմ կեանքը:

Տաժանակրութեան շարժվում է, ման է դալիս, զգում է, վերջապէս, արեղակ է տեսնում:

XXX.

Գարձեալ եկաւ քահանան:

Նրա մազերը սպիտակ են, հայացքը հեզ և փաղաքող, երեսը բարի և պատկանելի. դա, ճշմարիտ, շատ սիրաշուք և բարի մարդ է:

Այսօր առաւօտ ես ինքս տեսայ, թէ ինչպէս նա բաժանեց բանդարկեալներին իւր քսակի բոլոր փողերը: Ապա ինչո՞ւ նրա ձայնի մէջ չը կայ ոչինչ, որ շարժէր և ինքը ևս շարժվէր: Ինչո՞ւ նա և մինչեւ այժմ ոչինչ չասաց, որ շարժէր խելքս կամ սիրտս:

Այսօր առաւօտ ես ինքս ինձ կորցրել էի:

Ես հազիւ լսում էի այն, ինչ-որ նա ինձ ասում էր: Սակայն ինձ թուաց, որ նրա խօսքերը անօգուտ էին, և ես մնում էի անտարբեր. նրանք սահում էին, ինչպէս այդ սառն անձրմբ այդ սառած ապակիների վերայով:

Այնուամենայնիւ, երբ նա մտաւ ինձ մօտ, նրա տեսքը ինձ շատ հաճելի երևաց: Այդ բոլոր մարդկանց մէջ, ասացի ինքս ինձ, սա միակ մարդն է, որ ինձ համար մնացել է իբրև մարդ: Եւ ես տարիանոք պապակում էի բարի և միտ-թարական խօսքերի:

Մենք երկուս էլ նստեցինք, նա՝ աթոռի, ես՝ անկողնի վերայ: Նա ասաց ինձ.

—Իմ որդին... Սիրտս բացվեց այդ խօսքից: Նա շարունակեց.

—Իմ որդի, հաւատո՞ւմ էք դուք Աստծուն:

—Այն, հայր, —պատասխանեցի ես:

—Հաւատո՞ւմ էք դուք կաթոլիքական առաքելական և հռոմէական սուրբ եկեղեցուն:

—Ճատ սիրով, —ասացի ես:

—Որդեակ իմ, —շարունակեց նա, —դուք, կարծես, տարակուսում էք:

Այդտեղ նա սկսեց խօսել: Եւ խօսեց երկար. շատ բան ճառեց. յետոյ, երբ հարկաւոր համարեց վերջացնել, նա վերկացաւ և առաջին

անգամ իւր խօսակցութեան սկզբից, նայեց ինձ վերայ և հարցրեց. —Ուրեմն, ինչպէս:

Լսուտովանում եմ, ես լսում էի նրան սկզբում ագահութեամբ, յետոյ ուշադրութեամբ, և ապա խոնարհութեամբ:

Ես նոյնպէս վերկացայ:

—Յարգելի պարոն, —պատասխանեցի ես նըրան, —ողորմութիւն արէք, թողէք ինձ միայնակ: Նա հարցրեց ինձ.

—Ե՞րբ դամ ես:

—Ես ձեզ իմաց կըտամ, —ասացի:

Այն ժամանակ նա դուրս եկաւ, առանց մի խօսք ասելու, միայն շարժեց գլուխը, կարծես թէ, ասում լինէր. —Անաստուած:

Ո՛չ, որքան ևս ստորացել եմ, բայց անաստուած չեմ եղել. և, Աստուած վկայ է, որ ես հաւատում եմ իրան: Բայց ինչ ասաց ինձ այդ ծերունին. ոչ մի լացեալ, հոգեբուղիս խօսք, ոչ մի լացեալ, հոգեբուղիս խօսք. ոչինչ՝ որ ծագէր նրա սրտից և դիմէր պէտի իմ սիրու. ոչինչ՝ որ նրանից գար գէտի ինձ: Ընդհակառակը, նրա ճառը դիմագուրկէր, դանդաղ, յարմարելի ամեն բանի և ամենքին. վերամբարձ խորութիւն, տափարակ, որտեղ պէտք էր, որտեղ պահանջվումէր պարզութիւն. այդ մի ինչ-որ նմանու-

թիւնէր դիւրազգացիկ քարողի, կամ աստուածաբանական եղերեզգութեան: Տեղ-տեղ լատինական պարբերութիւն՝ լատիներէն: Իսկ յետոյ, բաց ընկաւ սուրբ Աւգուստիանոսով և սուրբ Գրիգորիոսով պարզերես լինել: Բացի այդ, կարծես, նա արդէն քսան անգամ կրկնալած դաս էր ասում, կամ անցնում էր մի խնդիր, որը շատ գործածելուց արդէն ջնջվել էր լիշողութիւնից: Եւ ոչ մի հայացք աչքերում, ոչ մի փոփոխութիւն ձայնի մէջ, ոչ մի շարժմունք ձեռներում:

Եւ այլապէս ինչպէս կարող էր լինել: Այդ քահանան ծառայում է բանզում: Նրա ծառայութիւնը պարունակվում է միսիթարութեան և խրատման մէջ. նա ապրում է նրանով. նրա պերճախօսութիւնը ուղղուած է միայն դէպի տաժանակիրները և հիւանդները: Կա խոստովանեցնում է և ճանապարհի է բերում նրանց, միայն նրա համար, որ ծառայում է: Կա ծերացել է՝ մարդկանց դէպի մահ պատրաստելով: Վաղուց արդէն նա մոռացել է այն ամենը, որը ստիպում է ուրիշներին զարհուրել. նրա լաւ փոշիացեալ մազերը չեն փշաքաղվում. դաժանակրութիւնը և պատժարանը նրա համար սովորական բաներ են: Հաւանօրէն, նա ունէ գրված և պատրաստի մի տեսքակ.—այսքան էջ տաժանակրների համար,

այսքան՝ մահուան դատապարտվածների համար: Նախընթաց օրը նրան իմաց են անում, թէ այս ինչ ժամին նա պիտի ուղեղորէ: Այդ ում— հարցնում է նա,—տաժանակրի, թէ դատապարտելի, և շուտափոյթ աչքի է անցնում էջը, և յետոյ գալիս է: Սրանից երևում է, որ թէ Տուլօն գնացողները և թէ Գրեվի գնացողները նրա համար ընդհանուր երևոյթներ են, և որ նա ինքն էլ նրանց համար ընդհանուր երևոյթ է:

0՛հ, թնդ բերեն ինձ մօտ մի որեւէ երիտասարդ յաջորդ, կամ մի ծերունի քահանայ, առաջին պատահած ծխից. թնդ նրան գտնեն իւր ընտանիքի մօտ, մի որեւէ զիրք կարդալուժամանակ, բոլորովին անակնկալ և ասեն նրան.— Մի մարդ կայ, որ պէտք է մեռնէ, գնացէք, միսիթարեցէք և նրան: Նրա մօտ եղէք, երբ կը կապուտեն նրա ձեռները, երբ կը խուզեն նրա մազերը. նատեցէք նրա հետ սալի մէջ և խաչելութեամբ սքողեցէք նրանից դահճին. ցնցուեցէք նրա հետ միասին փողոցներում մինչև հրապարակը. անցէք նրա հետ արեան փափագող ամրութի միջից. դրեցէք նրան պատժարանի պատուանդանի վերայ և մնացէք մինչև այն ժամանակ, երբ նրա գլուխը կը բաժանուի մարմնից: Թնդ նրան բերեն ինձ մօտ ստուածէլով,

որից յգլութ տռաշաղլին, թող ձգեն ինձ նրա զիր-քը, նրա ոտներին, և նա կ'արտասպի, մենք երկուսս էլ կարտասուենք. և նա կը լինի պեր-ճախօս, իսկ ես միսիթարուած կը լինեմ և իմ սիրտը կը հոսայ նրա սրտի մէջ, և նա կընդունէ իմ հոգին, իսկ ես կընդունեմ նրա Աստուածը:

Իսկ այդ բարի ծերուկը... ինչ է նա ինձ համար, ինչ եմ ես նրա համար: Մի անհատ՝ թշուառների ցեղից, մի ստուեր, որպիսիները արդէն նա շատ է տեսել. մի միաւոր, որ աւելացվում է էկզեկուցիաների ընդհանուր թուին:

Գուցէ ես լաւ չեմ անում, որ հրում եմ նրան. Հէնց նա է բարին, իսկ ես վատ մարդ եմ: Աւաղ, այդ իմ մեղք չէ: Այդ իմ շնչառութիւնը, դատապարտուածի շնչառութիւնը, ամեն ինչ ապականում է, ամեն ինչ վարակում է:

Ինձ համար ուտելիք բերին. նրանք կարծել են, որ ես ուտելիքի կարիք ունեմ: Կուրք և համադամ կերակուրներ, վառիկներ էին, կարծեօք, և էլի չգիտեմ մի ինչ: Ես փորձեցի ուտել, բայց հէնց առաջի կտորը ընկաւ իմ բերնից.— այնչափ այդ բոլորը ինձ թուաց դառն և զզուելի:

XXXX.

Ներս մտաւ մի ինչ-որ պարոն զինարկով,

Հազիւ նայեց ինձ վերայ, յետոյ բացարեց ծալվող ոտնաչափը և սկսեց քարեալ պատերը վերևկից մինչև վայր չափել, շատ բարձրաձայն ասելով.— Այդ այդպէս է, համ ոչ, այդ այն չէ:

Ես հարցը ժանդարմին, ով է այդ մարդը: Կարծեօք, դա ճարտարապետի օգնականն է, որ բանդումն է ծառայում:

Նրա հետաքրքրութիւնն էլ, ըստ երեսոյ-թին, նոյնպէս շարժված էր: Նա ինչ-որ ըըն-չեց իրան ուղեկցող համարականի հետ, յետոյ անթարթ նայեց ինձ վերայ, անփոյթ կերպով շարժեց զլուխը, նորից բարձրաձայն խօսեց և սկսեց չափել:

Վերջացնելով գործը, նա մօտեցաւ ինձ և սուր ձախով ասաց.—Կէս տարուց յետոյ, իմ սիրելի, այս բանդը աւելի լաւ կը լինի:

Իսկ նրա շարժմունքը, կարծես, տւելացը.— Իսկ դու, հոգեակս, այդ չես տեսնելու. ափսոս:

Նա, կարծես, մինչև անգամ ժպտում էր: Եւ ես սպասում էի այն բոպէին, երբ նա թեթևօրէն պիտի ծաղըէր ինձ, ինչպէս ծաղրում են աղջկան, նրա պսակի երեկոյեան:

Իմ ժանդարմը, մի հին զինուոր, գովասանա-

կան ժապաւէնով զարդարված, պատասխանեց իմ  
փոխարէն.

— Յարգելի պարոն, մեռեալի սենեակում  
այդպէս բարձր չեն խօսում:

Ճարտարապետը զնաց, իսկ ես մնացի,  
ինչպէս մէկը այն քարերից, որտնց նա չա-  
փում էր:

XXXXX.

Իսկ յետոյ ինձ հետ պատահեց մի շատ  
ծիծաղելի անցք:

Փոխարինեցին իմ ծերուկ ժամանակին, որի  
ձեռքը ես, ապերախտ եսականո, մինչև ան-  
գամ չը սեղմեցի: Մի այլը կարգված էր նրա տե-  
ղը. մի նեղաճակատ, եղան աչքերով, անմիտ  
կերպարանքով մարդ:

Սակայն ես նրան մինչև անդամ չը նկա-  
տեցի էլ: Ես մէջքս զրան, նստած էի սեղանի  
մօտ, և աշխատում էի ձեռներով զոլացնել  
ճակատո. մտքերը խաւարեցնում էին բանակա-  
նութիւնս:

Ուսիս կպած մի թեթև հարուած ոտիպեց  
ինձ յետ շուռ դալ: Այդ իմ նոր ժանդարմն էր,  
որի հետ մենք մնացինք մեկուսի:

Ահա նա ի՞նչ կերպով սկսեց խօսել ինձ հետ:

— Յանցաւո՞ր, բարի է արգեօք քո սիրութ:  
— Ոչ, — պատասխանեցի ես:

Խիստ պատասխանը, կարծես, շփոթեց նը-  
րան: Սակայն նա շարունակեց, թէպէտ և ոչ  
առանց երկիրդի:

— Լոկ զուարձութեան համար չար չեն  
լինում:

— Ո՞վ գիտէ, — հակաճառեցի ես: — Եթէ  
դուք միայն այդ էք կամենում ասել ինձ,  
ապա թողէք ինձ, խնդրեմ:

— Ներեցէք, յանցաւոր, — պատասխանեց  
նա: Միայն երկու խօսք: Ահա եթէ դուք կա-  
րողանալիք կազմել մի չքաւորի բախտաւորու-  
թիւնը, (այդ ձեզ համար դիմին է), միթէ դուք  
այդ չէլիք անիլ:

Ես վերքաշեցի ուսերս: — Դուք, կարծեօք,  
ուղղակի ջարանտօնիցն էք \*) եկել: Ի՞նչ  
ասել կուզի, լաւ ընտրել էք այն ամանը,  
որի միջից ուզում էք հոսեցնէլ բախտաւո-  
րութիւնը: Ի՞նձ կազմել ում և իցէ մէկի բախ-  
տաւորութիւնը:

Նա քաշացրեց ձայնը և ընդունեց խոր-  
հրդաւոր տեսք, որը ամենալին սազ չէր գալիս  
նրա ապուշ կերպարանքին:

\*) Գժատուն:

—Այ՞, յանցաւոր, այ՞, բախտաւորութիւն,  
բախտ: Այդ ամենը դուք կարող էք անել: Եւ  
ահա ինչպէս. եմ մի խեղճ <sup>Կ.Տ.</sup> ժանդարմ եմ: Իմ  
պաշտօնս ծանր է, ռոճիկս փոքր, իսկ սեպհական  
ձի պահելը մինչ վերջին ծայր ինձ քանդում է:  
Եւ ահա, որպէս զի հաւասարակշռութիւն պահեմ,  
ձեռնարկել եմ վիճակախաղ: Զէ որ մի բանով  
պէտքէ գլուխ պահեմ ես: Տանելու համար մին-  
չև այժմ ինձ պակասել են լաւ համարներ: Ել  
որտեղ որ պտրում եմ լաւերը, միշտ ընկնում է  
նրանց հարեւանը: Վեր եմ առնում 76-ը, դուրս  
է գալիս 77-ը, թէկուզ տրաքիր, իսկականները  
չեմ գտնում. Համբերեցէք մի փոքր, ես այս  
ըստիս կը վերջացնեմ: Այժմ ահա ինձ համար  
ծագում է մի փառաւոր դէպք: Կարծեօք, յան-  
ցաւոր, ձեր բարեհաճութեամբ այսօր դուք  
այն... Յայտնի են որ մեռեալները, որոնց այդ  
կերպով ճանապարհում են միւս աշխարհ, գո-  
շակում են վիճակախաղի համարները: Խոստա-  
ցէք փաղը երեկոյեան գալ ինձ մօտ, այդ ձեզ  
համար հօ ոյինչ բան է, և ասացէք ինձ երեք  
համարներ, երեք լաւ, իսկական համարներ. հ՞ըմ,  
ի՞նչ կասէք: Ես մեռեալներից չեմ վախենում,  
միամիտ կացէք: Ահա իմ հասցէն. Պօպեկուրեան  
զինուորանոց, սանդուխք Ա., № 26. միջանցքի

վերջում: Դուք, հօ, ինձ կը ճանաչէք: Ճնորհ  
բերէք թէ կուզ այսօր երեկոյեան, եթէ այդ  
ձեզ համար աւելի յարմար է:

Ես թերեւ չէի պատասխանիլ այդ դդու-  
մին, եթէ մի անմիտ յոյս չը փայլէր խելքումս:  
Յուսահատ դրութեան մէջ, մտածում են եր-  
բեմն՝ մաղով կտրել շղթան:

—Քեզ հետ եմ,—ասացի ես նրան, վճռե-  
լով սառն ձեւանալ, որքան այդ կարելի է մի  
մարդուն, որը պատրաստվում է մահուան,—ես,  
արդարե, կարող եմ քեզ նոյն իսկ թագաւորից  
հարուստ դարձնել, քեզ միլլիօնների հասցնել,  
բայց միայն մի պայմանով:

Նա չուեց իւր անմիտ աչքերը:

—Ի՞նչ պայմանով, ի՞նչ պայմանով: Բոլո-  
րը, ինչ-որ կը հրամայէք, յանցաւո՞ր:

—Երեք համարի տեղ, ես խոստանում եմ  
քեզ չորսը: Փոխենք հագուստներս:

—Հէնց այդ,—գոչեց նա, համագետսի  
կոճակները յետ անելով:

Ես վերկացայ աթոռի վերայից: Ես դիտում  
էի նրա բոլոր շարժողութիւնները. սիրտս բա-  
րախում էր. ես արդէն տեսնում էի, ինչպէս  
բացվում են դռները ժանդարմի համագետսի  
առջև, տեսնում էի և՛ հրապարակը, և՛ փողոցը,

և՝ արդարադատութեան պալատը իմ ետևուժ:

Բայց յանկարծ նա շուռ եկաւ դէպի ինձ  
անվճռական հայացքով:

— Բայց այդ այստեղից դուրս գնալու  
համար չէ:

Ես հասկացայ, որ բոլորը կորաւ: Աակայն  
սիրտ արի զործ դնել մի ճիգ ևս, ամենա-  
անօգտութ և ամենաանմիտը:

— Յատկապէս դրա համար է, բայց քո  
բախտը որոշված է...

Նա ընդհատեց ինձ.

— Ոհո. ինչպէս չէ: Ապա իմ համարներս:  
Չէ որ նրանք իսկականը լինելու համար, պէտք  
է որ գուք մեռնէք:

Ես նորից նոտեցի, ոչնչացած և սպանված,  
մի անիրադորձելի լուսով ևս:

XXXXXX.

Ես խոնարհեցրի աչքերս, ձեռներով ծած-  
կեցի նրանց և զործադրեցի բոլոր ճիգերս, որ-  
պէս զի մոռանամ ներկան անցեալի մէջ: Իմ  
մտածմունքներիս ժամանակ մանկական և առա-  
ջին երիտասարդութեան լիշտութիւններս բոլորը  
կենդանանում են իմ առջև միմեանց ետևից,

Հեղ, հանդարտ, ծիծաղտես, իբրև ծաղկաղարդ  
կղզիներ՝ այդ խաւար և պղտոր մտքերի անզնդի  
վերայ, որոնք շառաջում են իմ ուղեղի մէջ:

Ես նորից տեսնում եմ ինձ իբրև երեխայ  
դպրոցական աշակերտ, յաւերժ ծիծաղկոտ,  
վարդագոյն, տեսնում եմ, ինչպէս երբեմն խա-  
ղում էի, վազում էի, դոչում էի մեծ, կանաչ  
ծառուղիում,—այն աչքաթող տրած այգու, որ-  
տեղ անցել են իմ առաջին տարիները, միանձ-  
նուհիների այն հինաւուրց ապաստարանի, որի  
վերայ բարձրանում է Վալ-դէ-Գրասի արճինեաց  
դլխով խաւար զմբէթը:

Իսկ յետոյ, չորս տարի անցած, ես դեռ  
ևս այնտեղ եմ, դեռ ևս երեխայ, բայց արդէն  
մտախոհ և կրքոտ:

Կայ մի աղջիկ այդ մեկուսացած այգում, մի  
փոքրահասակ և մեծաչք իսպանուհի, երկար մա-  
զերով, թուխ, ոսկեգոյն կաշուով, կարմիր բեր-  
նիկով և վարդագոյն թշիկներով, տասն և չորս  
տարեկան անդալուզացի Փեալան:

Մեր մալրերը արձակեցին մեղ՝ միասին  
վաղիներու, իսկ մենք գնացինք զբոնելու:

Մեղ պատուիրում էին խաղալ, իսկ մենք  
խօսակցում էինք, ինչպէս մի հասակի, բայց  
զանազան սեռերի երեխաներ:

Վան ինչ տարի էլ ըլ կայ, ինչ մենք վազում էինք և դօտեմարտում էինք միասին: Ես վիճում էի Գեպակի հետ ինձորենու վերայ գտնվող լաւագոյն ինձորի համար, ծեծում էի թռչնի բնի համար: Նա լաց էր լինում, ես ասում էի՝ տեղն է, և մենք երկուսս էլ գնում էինք՝ գանգատվելու մեր մայրերին, որոնք մեզ բարձրաձայն մեղագրում էին և արգարացնում էին կամացուկ իրանց մտքում:

Իսկ այժմ նա ման է գալիս ինձ հետ, կուոր կոփս գցած, և ես նրանով հպարտանում եմ, ես յուզվում եմ: Գնում ենք մենք համբաքայլ, խօսում ենք հանդարտ: Նա ձեռից զցում է թաշլինակը, ես վեր եմ առնում: Մեր ձեռները դողդողում են միմեանց շփուելիս: Նա խօսում է ինձ համար թռչունների, աստղի, որը փայլում է ահա այնտեղ, վարդագոյն արեմուտքի, որ երեսում է ծառերի ետևում, կամ իւր ուսումնարանական ընկերուհիների, իւր զգեստի և ժապաւենների վերայ: Մենք արտայալում ենք անմեղ բաներ, մենք երկուսս էլ կարծրում ենք: Փոքրիկ աղջիկը դարձաւ մատաղահաս օրիորդ:

Մի ամարալին երեկոյ էր: Մենք կանդնած էինք այզու վերջին ծայրում, շագանակե-

նիների տակ: Այն լրութեանց մէկից յետով, որոնք լրացնում էին մեր դուարձութիւնը, նա յանկարծ թողեց իմ ձեռը և ասաց.

— Վազենք:

Ես, կարծես թէ, տեսնում եմ նրան, նա ամբողջապէս ուե էր հաղել, իւր մեծ մօր սգումն էր: Նրա զլխում ծաղեց մանկական մի միտք: Պեպան նորից դարձաւ Պեպանիկ և ասաց ինձ.— Վազենք:

Եւ նա վազեց իմ առջեւ, իւր՝ մեզուի մէջքի պէս՝ բարակ մէջքով և վոքըիկ ոտիկներով, որոնք բարձրացնում էին նրա զգեստը կոճղներից վեր: Նա վագում էր, իսկ ես նրա յետեւից. քամին երրեմն ծածանում էր նրա թիվնոյը, որի տակից փայլում էին նրա թուխն և թարմ թիկունքը:

Ես յափշտակված էի: Ես հասայ նրան հին ու քանդված ջրհորի մօտ, բունեցի նրա մէջքից յաղթութեան իրաւունքով և նստացրի գալարագարդ նստարանի վերայ. նա չէր ընդդիմանում: Նա շնչում էր արագօրէն և քրքջում էր: Ես մտախուկ էի և նայում էի նրա ու ~~ու~~ բիբերին, ուե թերթերունքների միջով:

— Նստեցէք այստեղ, — ասաց նա, — Հիմա գեռ լոյս է: Մի բան կարդանք: Կաչ ձեր մօտ որևէ է գիրք:

Իմ մօտ կար Սպալանցանի ճանապարհորդութեան երկրորդ հատորը: Ես բացարի առանց ընտրութեան, գիտուածաբար, և նստեցի աւելի մօտիկ նրան. նա յենվեց ուսով իմ ուսի վերայ, և մենք սկսեցինք կարդալ, մեզանից ամեն մէկը իւր համար, միւնոյն երեսը: Եղբ պէտք էր թերթը շուռ տալ, նա միշտ հարկադրված էր սպասել ինձ: Իմ խելքս նրա խելքից յետ էր մնում:—Դուք գեռ չէք վերջացրել,—ասում էր նա: Իսկ ես գեռ նոր էի սկսում:

Եւ մեր գլուխները մօտենում էին, մաղներս խառնվում էին, շունչներս մօտենում էին և շրթունքներս՝ նոյնպէս:

Երբ մենք կամեցանք նորից շարունակել ընթերցումը, երկինքը արդէն փայլում էր աստղերով:

—Ախ, մայրիկ, մայրիկ, —ասաց նա, տուն մտնելով.—Ահ, մենք վագել ենք հա՛:

Իսկ ես լուռ էի:—Դու միշտ լուռ ես, —ասաց ինձ մալրս, —երեկ գու տխուր ես: Իսկ իմ խրտի մէջ գրախտ էր տիրում:

Այդ երեկոն ես պիտի յիշեմ ամբողջ կեանքումս:

Ամբողջ կեանքումս:

### ՀՀՀՀՀ.

Զգիտեմ որ ժամը խփեց, ես լաւ չեմ լրում ժամացուցի զարկը: Իմ ականջներում թընդում է մի ինչ-որ աղմուկ, իբր թէ երգեհոնի կարկաչը լինի. այդ իմ վերջին մտքերս են աղմկում:

Այդ նշանաւոր րոպէին, երբ ես կենտրօնանում եմ իմ յիշողութիւնների վերայ, ես սարսափով հանդիպում եմ նրանց մէջ իմ գործածոճիրը, և ինձ ցանկալի էր գեռ էլ աւելի զջայ: Մինչեւ իմ դատապարտվելը ես առաւել էի զըղջում. իսկ նրանից յետով, կարծեօք, իմ ուղեղի մէջ միայն մահուան վերաբերեալ մտքերի համար տեղ մնացել է: Այն ինչ ես կը կամենալի ապաշխարել:

Երբ ես մտածում էի իմ անցեալ կեանքի վերայ և հասայ մինչև կացինի հարուածը, որը խսկոյն նրան կը վերջացնի, ես զարհուրեցի, իբրև ինձ համար բոլորովին մի նոր մտքից: Իմ գեղեցիկ մանկութիւն, իմ գեղեցիկ երիտասարդութիւն. ուկեկիւ գործուածք, ծալը արիւնաթաթախ: Այս ժամանակի և այժմ մէջ կայ մի ամբողջ գետ արեան—ուրիշ և իմ արեան:

Եթէ ո և է կարդայ իմ պատմութիւնը,

նա չի հաւատալու, որ այդքան բախտաւորութեան և անմեղութեան տարիներից յետոյ, կարողանար հետևել մի այդպիսի անիծեալ տարի, որը սկսվել է ոճրագործութեամբ և վերջանալու է զլիստութեամբ։ Կարծելու են, թէ այս մի որևէ հատուկոր առասպել է։

Բայց դարձեալ, ողորմելի օրէնքներ և ողորմելի մարդիկ, ես չար մարդ չեմ եղել։

Օ՛հ, մեռնել միքանի ժամից յետոյ և մըտածել, որ մի տարի առաջ, նոյն իսկ այսօր, ես աղատ էի և մաքուր, կատարում էի իմ աշնանալին զրօսանքները, թափառում էի ծառերի տակ և խշխացնում էի տերեները։

XXXXV.

Եւ մտածել, որ հէնց այս ըոպէ, այստեղ, իմ չորս կողմում, տների մէջ, որոնք շրջապատում են պալատը և Գրեվին, և հէնց ամենուրեք Փարիզում մարդիկ ման են գալիս և հոգում են, խօսում են և ծիծաղում, կարգում են օրագիրները, մտածում են իրանց զործերի մասին. վաճառականները ծախում են, օրիորդները պատրաստում են իրանց զգեստները արտօլուայ պարահանդիսի համար, մայ-

քերը խաղում են իրանց երեխաների հետ։

XXXXVI.

Ես լիշում եմ, թէ ինչպէս մի անդամ, երեխայ ժամանակս, գնացել էի՝ նայելու Նօտր-Թամի զանգակը։

Ես արգէն թուլացել էի, թէ մութն, իննաձև սանդխքով բարձրանալուց և թէ երկու աշտարակները միացնող պառշգչամբ անցնելուց, և նրանից, որ ամբողջ Փարիզը ես տեսնում էի իմ ոտների տակ,—երբ ներս մտայ քարէ վանդակը, որի միջով ձգված գերանների վերայ, կախված է զանգակը, իւր հազար ֆունթանոց լեզուակով։ Գողգողալով ես առաջ էի ընթանում ճեղուռալուծ տախտակների վերայով, հեռուց նայելով այդ փարիզեան ժողովրդի և երեխաների համար հոչակաւոր զանգակին, և ոչ առանց սարսափի նկատելով, որ կղմինտրածածկ տանիքը իւր քլւերով իջնում էր մի ուղղութեամբ իմ ոտների հետ։ Բացուածքից ես տեսնում էի, ինչպէս թուչնի թուչքից, Նօտր-Թամի հրապարակը և անցորդներին, թուչունների մեծութեամբ։

Յանկարծ ահաղին զանգակը դողանչեց։

զօրեղ երերումը սասանեցրեց օդը և ստիպեց  
տատանել ծանր աշտարակը: Տախտակամածը  
կոճերի վրայ սկսեց ոստոստել: Թնդիւնը քիչ  
մնաց, որ ինձ վայր ձգէր. ես օրօրվեցի,  
պատրաստ՝ տանիքի կղմինտրային թեքվածքնե-  
րով ցած զլորվելու: Արսափից ես ընկայ յա-  
տակի տախտակների վերայ, պինդ բռնելով նը-  
րանցից երկու ձեռներով, անխօս, անշունչ, սար-  
սափելի թնդիւնը ականջներումն և անդունդը  
աչքերիս առջև, որտեղ անցուդարձ էին անում  
այնքան հանգիստ և բախտաւոր անցորդներ:

Այդպէս, ահա ինձ թւում է, որ ես այժմ  
ընկած եմ զանգակի տակ: Կարծես, մի ինչ-որ  
բան միաժամանակ խլացրել է և կուրացրել է  
ինձ: Որպէս թէ մի ինչ-որ զանգակի դնդիւն  
սասանեցնում է իմ ուղեղի դատարկութիւննե-  
րը. այս խաղաղ և սահուն կեանքը, որը ես  
թողել եմ և որտեղ ուրիշ մարդիկ դեռ երա-  
զում են, ես տեսնում եմ միայն հեռուից, մի  
ինչ-որ անդնդի ճեղքի արանքից:

XXXXVIII.

Բապուշան մռայլ շինութիւն է:

Մրածայր և զառիվայր կտրով, տարօրինակ

զանգակատնով, մէծ, սպիտակ ժամացոյտվ,  
սիւնակներով ամեն մի յարկում, հագարաւոր  
լուսամուտներով, երթեւեկութիւնից մաշուած  
սանդուխքներով, աջ ու ձախ երկու կամար-  
ներով—նա կանգնած է Գրեվիի հետ մի ուղ-  
ղութեան վերայ, մռայլ, խոժուած, ժամանակի  
ընթացքում փոսփոսուաված առաջնապատով, և  
այնպէս, որ արեգակի լոյսով անդամ ուե է:

Պատժի օրը, նա գուրս է ժայթքում իւր  
բոլոր դարբասներից և դռնելից ժանդարմներ,  
և նայում է զատապարտեալի վերայ իւր բոլոր  
լուսամուտներով:

Իսկ երեկոյեան նրա՝ պատժի ըովէն ցոյց  
տուող՝ ժամացոյցը վառվում է, լուսաւորված ու  
առաջնապատի վերայ:

XXXXIX.

*ՀՀՀՀ*

Այժմ ժամի մէկ և քառորդն է:

Ահա ինչ եմ ես զգում այս ըովէին:

Սաստիկ գլխացաւ. զօտկատեղումս սառ-  
նութիւն, ճակատս կրակի մէջ: Ամեն մի ան-  
գամ, երբ ես վեր եմ կենում կամ կռանում եմ,  
ինձ թւում է, որ մի ինչ-որ հեղուկ հոսում է

գլխիս մէջ և ստիպում է ուղեղիս ընդհարվել  
գանդիս պատերին:

Ցնցողական դոզն անցնում է մարմնովս,  
և երեմն գրիչը ընկնում է ձեռիցս, ինչպէս  
գալվանական սասանումից:

Աչքերում զգում եմ ծակծկոց, իբր թէ  
ծխի մէջ եղած լինէի: Արմունգներս մղկտում են:

Երկու ժամ և քառասուն ու հինգ րոպէ ևս,  
և ես կըրժշկվեմ:

XXXXX.

Նրանք ասում են, որ այդ ոչնչ, որ ոչ  
մի չարչարանք չը կալ, որ այդ խաղաղ վախճան  
է, որ այդպիսով մահը շատ հեշտացրած է:

Ապա ի՞նչ է այդ վեց շաբաթվայ մահուան  
տագնապը, այդ ամենօրեալ օրհասական խըռն-  
չումը: Ապա ի՞նչ է տանջանքը այս անջնջելի  
օրուայ, որը անցնում է այդպէս դանդաղ և  
այդպէս արագ: Ապա ի՞նչ է այդ տանջանքների  
սանդուխքը, որը վերջանում է պատժարանով:

Միթէ այդ չէ նշանակում չարչարվել:

Միթէ այդ միևնույն սարսումները չեն, երբ  
արիւնը կաթ-կաթ ծորում է և երբ խելքը  
մարում է միտք մտքի ետևից:

Եւ յետոյ, հաւաստիացած են նրանք, ար-

գեօք, որ արդարեւ մարդ չէ տանջվում: Ո՞վ ա-  
սաց նրանց այդ: Տեսնուած է արդեօք, որ կը-  
տրված գլուխը՝ բոլորովին արխւաթաթախ՝  
կանգնէր կողովի եղերքին և գոչէր ժողովը-  
դին. — Այդ յառաջն չէ:

Կամ կան նրանց ձեռագործի մեռեալներ,  
որոնք յետոյ եկած լինէին նրանց մօտ և շը-  
նորհակալութիւն յայտնած լինէին նրանց, ասե-  
լով, թէ այդ իբր թէ հիանալի է հիմնված:  
Ճարունակեցէք այդպէս: Գերազանց մեքենա-  
յակազմ է:

Չէ, ոչինչ: Մի բոպէից սակաւ, մի վար-  
կեանից սակաւ, և բոլորը կը վերջանալ: — Բայց,  
արդեօք, մտել են նրանք իրանց կեանքում  
գէթ մի անգամ այն մարդու դրութեան մէջ,  
որը այնտեղ ընկած է այն բոպէին, երբ ընկ-  
նում է ծանր սուրը, խըրփում է մաի մէջ, կրտ-  
րում է զղերը, կոտրտում է ողնաշարները:  
Ի՞նչ մեծ բան է: Կէս վայրկեան, և ցաւը ոչնչա-  
ցաւ... Սարսափ:

XXX.

Տարօրինակ է, որ ես անդադար մտածում  
եմ թագաւորի մասին: Ինչպէս էլ որ ես աշխա-  
տում եմ չը մտածել, ինչպէս էլ որ գլուխ չեմ

թօթափում, մի ինչ որ ձայն անդադար շշում է ականջիս:

Կայ իսկ հենց այս քաղաքում, հենց այս բոպէիս և այստեղից ոչ հեռու, որիշ պալատներում, մի մարդ, մի բացառական մարդ, որի գուանը նոյնպէս ժամապահներ են կանդնած, ինչպէս և դու ժողովրդի մէջ, այն տարբերութեամբ, որ նա նոյնչափ բարձր է դասված, որքան դու ստոր: Նրա ամբողջ կեանքը, բոպէ առ բոպէ ոչ այլ ինչ է, եթէ ոչ փառք, վեհութիւն, շքեղութիւն, կարողութիւն: Նրա շուրջ բոլորը սէր է, անձնուիրաւթիւն, յարգանք: Ամենաբարձր ձայները մեղմանում են նրա հետ խօսակցելիս, և ամենահպարտ զլուխները խոնարհվում են. Նրա ձեռների տակ միայն մետաքս է և ոսկի: Այս բոպէին նրա մօտ, շատ կարելի է, մի որևէ է խորհուրդ է նախարարների, որտեղ ամենքը նրա հետ համաձայն են, կամ նա մտածում է վաղուայ որսորդութեան մասին, այսօրուայ պարահանդիսի մասին, հաւաստի, որ տօնը իւր ժամանակին կը գայ, որ ուրիշները աշխատում են նրա զուարճութեան համար: Եւ այդ մարդը նոյն մարմնից և նոյն ոսկորներից է, ինչպէս և դու: Եւ որպէս զի այս բոպէին խորտակվէր սուրսափեցիչ պատժարա-

նը, որպէս զի քեզ բոլորը վերադարձուէր՝ կեանք, ազատութիւն, կարողութիւն, ընտանիք,—բաւական է որ նա միայն զրէր այս զրով եօթը տառ իւր անուան մի թերթիկ թղթի ստորև, կամ հանդիպէր իւր կառքի մէջ քո սայլին: Նա բարի է. նա, գուցէ, հենց փափափով անէր այդ: Սակայն, ոչինչ չէ լինելու:

### XXX.

Դէհ, ինչ անենք, մենք էլ մահի առաջ չենք վհատվիլ, կը բունենք երկու ձեռներով այդ զարհութելի միտքը և կը նայենք ուղղակի նրա երեսին: Թող նա մեզ ասէ, թէ ինչ է ինքը, ինչ է ուղրում մեզանից. կը պտտացնենք նրան ամեն մի կողմը, վանկ-վանկ կը հեղենք հանելուկը և վազօրօք կը նայենք գերեզմանի մէջ:

Ինձ թւում է, որ հենց իմ աչքերը փակվեցին, ես տեսնելու եմ անսահման աշխարհ, աշխարհի անդունդները, որոնց մէջ իմ հոգին պիտի պըտուէ անմերջ: Ինձ թւում է, որ այն ժամանակ երկինքը պիտի փայլի լիր սեպհական փայլով, որ երկնալին լուսաբերները նրա վերայ կը լինեն իբրև մուժ կէտեր և փոխանակ

որպէս կենդանի աչքերի համար ուկէ շողեր լինելու սև թափշի վերայ, նրանք պիտի երևան իրրւ սև կէտեր՝ ուկէ հիւսուածքի վերայ:

Կամ, ոհ ես թշուառ արարածո, այդ կը լինի գուցէ, զգուելի, խոր անդունդ՝ միգազգած պատերով, որի մէջ ես անընդհատ ընկնելու եմ, տեսնելով, ինչպէս խաւարի մէջ քրքրվում են ինչ-որ ձևեր:

Կամ, զարթնելով հարուածից յետով, ես գուցէ պիտի սողամ այդ մոալլութեան մէջ, մի որևէ հարթ և թաց մակերևոյթի վերայ, պտղտելով մի գլխի պէս, որը զլորվում է: Ինձ թւում է, որ կը բարձրանայ մըրիկ, որը ինձ կը զլորէ և ես երբեմն կը ընդհատվեմ ուրիշ զլորվող զլուխների հետ: Տեղ-տեղ պատահելու են անյատ և տաք հեղուկների լճակներ և վրտակներ. բոլորը սև կերևայ: Երբ իմ աչքերս, — այն ժամանակ երբ ես պտղտվելիս կըլինիմ, — կը դառնան դէպի վեր, նրանք կը տեսնեն միմիայն մոլթ երկինք, որի բարձր շերտերը պիտի ծանրանան մեր վերայ, իսկ հեռուում, բոլորովին ծայրում, ծխի մեծ-մեծ սիւներ, սևագոյն, քան նոյն իսկ խաւարը: Նրանք նոյնպէս տեսնելու են զիշերի մէջ, թէ ինչպէս թուչելու են կարմրագոյն կայծեր, որոնք մօտենալով դառ-

նալու են հրավին թուչուններ—և այդ բոլորը ամբողջ յափտենականութիւն շարունակվելու է:

Կարելի է և այն, որ Գրեվի մեռեալները յայտնի ժամանակներում, ձմեռվալ մութ՝ դիշերները, պիտի ժողովուեն իրանց հրապարակի վերայ: Այդ կը լինի մի գունաթափ և արիւնալի ամբոխ. և ես նրանից չեմ բաժանվիլ: Լուսինը կը թաքչի, և մենք կը խօսինք շշուկով: Պատուշան կը լինի այնտեղ, իւր հողմակոծ առաջնապատով, ծակծակոտ տանիքով և դէպի տմենքը անողոքելի ժամացուցով: Խոկ հրապարակի վերայ կը բարձրանայ գժոխալին գլխահատը, որի վերայ գեր պատժում է գահճին.—այդ կը լինի առաւտեան չորս ժամին: Մենք, ըստ կարգին, կը ներկայացնենք ամբոխ:

Ճատ հաւանական է, որ այդպէս էլ ամենը կը լինի: Բայց եթէ մեռեալները զալիս են, ինչ պատկերներով են զալիս նրանք: Ի՞նչ են պահպանում նրանք իրանց թերի, այլանդակված մարմնից: Ի՞նչ են ընտրում նրանք: Արդեօք ուրուականը յայտնվում է զլիսի ձևով, թէ իրանի ձևով:

Եւ ի՞նչ է անում մահը մեր հոգին. ի՞նչ-պիտի բնութիւն է թողնում նրան: Ի՞նչ է խըլում և ի՞նչ է տալիս նրան: Ո՞ւր է տանում նը-

բան: Արդեօք ընձեռնում է նրան երբեմն մարմ-  
նի աչքերով, որ նայէ երկրին և արտասուէ:

Օ՛, մի քահանայ, որը իմանար այդ: Ես  
ուզում եմ տեսնել քահանալին և համբուրել  
խաչելութիւնը:

Սստուած իմ, էլի՞ նոյնը:

### ՃԱՌԱ.

Ես նորից թողտութիւն խնդրեցի և ըն-  
կայ անկողին:

Եւ ճշմարիտ, իմ գլխում այնքան արիւն  
կար, որ ես քննեցի: Դա վերջին քունս էր այդ  
տեսակի:

Ես երազ տեսայ:

Ինձ երեաց, որ գիշեր էր և որ ես իմ  
առանձնասենեակումս էի—երկու թէ երեք բա-  
րեկամներիս հետ, չեմ լիշում:

Կինս քնած էր կից ննջարանում, և քը-  
նած էր իւր զաւակի հետ:

Մենք խօսում էինք կիսաձայն, և այն,  
ինչ-որ խօսում էինք, վախեցնում էր մեզ:

Յանկարձ ես լսեցի, որտեղից որ էր, միւս  
սենեակներում, աղմուկ, թող, տարօրինակ, ա-  
նորոշ աղմուկ:

Իմ բարեկամները այդ լսում էին նոյնպէս,  
ինչպէս ես: Մենք սկսեցինք ականջ դնել. կար-  
ծես թէ, մէկը խուլ կերպով բացում էր փա-  
կանքը, կամ կամացուկ սղոցում էր սողնակները:  
Կար մի ինչ-որ մեզ սարսափեցնող բան. մենք  
վախեցանք: Մտածում էինք, որ այդ գողերն  
են մտել իմ տունը այդ ուշ գիշերաժամին:

Վճռեցինք դնալ: Ես վերկացայ, առի հը-  
րազը. բարեկամներս եկան իմ ետևից:

Մենք անցանք ննջարանով, կինս երեխակի  
հետ քնած էր:

Մտանք հիւրասենեակ: Ո՛չինչ: Պատկեր-  
ները անշարժ կախված էին ոսկէ շրջանակնե-  
րում, կարմիր պաստառների վերայ: Ինձ երեաց,  
որ հիւրասենեակից սեղանատուն տանող գուռը  
եւր տեղումը չէր:

Մենք մտանք սեղանատուն, ման եկանք  
չորս կողմերը: Ես գնում էի առջելից: Նախա-  
սենեակ բացւող գուռը պինդ փակած էր, պա-  
տուհաները՝ նոյնպէս: Վառարանի մօտ ես տե-  
սայ, որ ճերմակեղէնների պահարանը բաց էր,  
և որ գռնակը յետ էր ձգված դէպի անկիւնը,  
իբր թէ մի ինչ-որ բան թագցնելու համար:

Այդ ինձ զարմացրեց: Մենք մտածեցինք,  
որ դռան ետևում մէկը թագնուել է:

Ես ուզեցայ դանակը ծածկել. բայց նա չէր շարժվում: Զարմացած, ես քաշեցի աւելի ուժով, նա յանկարծ շարժվեց և յայտնուեց մի փոքրիկ, պառաւիկ կին, քարշ ձգած ձեռներով, ծածկուած կոպերով, անշարժ կանդնած և, կարծես, սանձված պատի անկիւնին:

Այդ ամենը մինչ այն աստիճան դռւելի էր, որ լոկ լիշտութիւնից իմ մազերը վշաքաղվում են:

Ես հարցը պառաւին.—Պուք ինչ էք անում այստեղ:

Նա չը պատասխանեց:

Ես հարցը նրան.—Ո՞վ էք դուք:

Նա չը պատասխանեց, չը շարժվեց տեղից և չը բացեց աչքերը:

Բարեկամներս ասացին.—Երեխ դա համախոհն է նրանց, որոնք չար դիտաւորութեամբ մտել էին այստեղ. նրանք փախել են, լսելով մեր քաղաքը, իսկ սա, հաւանական է, որ չէ կարողացել փախչել և այստեղ թագնուել է:

Ես վերստին դիմեցի նրան. նա մնում էր անձան, անշարժ, անհայցք:

Մէկը մեղանից հրեց նրան, և նա վայր ընկաւ. ընկաւ, ինչպէս մի փայտի կտոր, ինչպէս մի մեռած մարմին:

Մէնք շարժեցինք նրան ոտներով, յետոյ մեղնից երկուսը բարձրացրին նրան և նորից լենեցին պատին: Կա կենդանութեան նշոյլ չէր յայտնում: Նրա ականջին գոջում էին, նա մընում էր համբ, իբրև խուլ:

Սակայն մեր համբերութիւնը սպառվում էր, և զրգուումը սկսում էր նշմարվել երկիւղի միջից: Մէկը մեղնից ասաց ինձ.—Թրէք ճրագը նրա ծնօտի տակը: Ես մօտեցրի ճրագը բոլորովին նրա կղակին: Այդ ժամանակ նա բացեց իւր մի աչքը մինչև կէսր,—գատարկ, պըղոր, սարսափելի աչք, որը չէր նայում:

Ես յետ քաշեցի ճրագը և ասացի.—Ա, վերջապէս: Կը խօսես դու, արդեօք, վհուկ, ով ես դու:

Աչքը փակվեց, կարծես, ինքն իրան:

— Դէհ, այդ արդէն չափից անցաւ,—ասացին միւսները:—Թարձեալ ճրագը, մէկ էլ: Նա կը խօսի:

Ես վերստին մոմակալը մօտեցրի պառաւի մօրուքին:

Այդ ժամանակ նա անխապաղ բացեց երկու աչքերն էլ, նայեց մեզ ամեններիս մէկ-մէկ, յետոյ յանկարծ կռանալով, փչեց ճրագը սառցամին շնչով: Նոյն իսկ ըոպէին ես զգացի, թէ

ինչպէս երեք սուր սուր ատամներ խաւարի մէջ  
խրվեցին իմ ձեռիս:

Ես զարթնեցի, ամբողջ մարմնով դողալով  
և սուր քրտինքով պատած:

Բարի քահանան նստած էր մի մահճի մօտ  
և աղօթք էր կարգում:

—Երկար եմ քնել ես,—հարցը նրան:

—Որդեակ իմ,—պատասխանեց նա, —դուք  
քնել էք մէկ ժամ: Զեզ մօտ բերել են ձեր  
զաւակին. նա ձեզ սպասում է այնտեղ, կից  
սենեակում: Ես թոյլ չը տուեցի ձեզ զարթեցնեն:

—Ո՛, աղաղակեցի ես,—դուստր: Տուէք  
ինձ իմ աղջիկը:

### ՀԼԻՅ.

Նա այնպէս թարմ է, վարդագոյն է, նրա  
աչքերը այնպէս մեծ-մեծ են.—ամենասիրուն  
աղջիկ է:

Նրան հագցը էին այն զգեստը, որը նրան  
շատ սագ էր գալիս:

Ես բռնեցի նրան, զրկեցի և դրի ծունկե-  
րիս վերալ, համբուրում էի նրա աչքերը...

Ինչու նա մօր հետ չէ եկել: Մարը հե-  
տանդ է, մեծ մալրը՝ նոյնպէս: Այդ լաւ է:

Նա նացում էր ինձ զարմացած աչքերով:  
Նա թոյլ էր տալիս փայփայել իրան, և զըկել  
և՛ համբուրել. բայց երբեմն կասկածաւոր հա-  
յացք էր ձգում իւր գայեակի վերալ, որ լալիս  
էր անկիւնում:

—Մարիամ, —ասացի ես,—հոգեակ իմ,  
Մարիամ:

Ես պինդ սեղմեցի նրան կրծքիս, որը լի  
էր հեկեկանօք: Նա թոյլ ձայնով գոչեց:

—Ո՛, դուք ցուեցը ինձ, պարոն, —ա-  
սաց նա:

Պարոն: Ահա շուտով մի տաքի էր լինի,  
որ նա ինձ չէ տեսել, իմ թշուառ գաւակ:  
Պոռացել է նա ինձ, մոռացել է իմ գէմքը,  
բարբառը, ձախիս հնչիւնը. և ովկ էր ճանաչէր  
ինձ այս միտուքով, այս հագուստով և ալո-  
պէս գունաթափ: Եւ ահա ես ջնջված եմ այս  
միտկ լիշողութիւնից, որի մէջ դեռ էր ցան-  
կանալի ապրել: Ի՞նչ, ես այլևս հալր չեմ, ես  
դատապարտուած եմ այլ ես չը լսել մանկական  
խօսք, որը այնքան քաղցր է, որ չէ մնում չա-  
փահասների լեզում.—հայրէ՞:

Բայց սակայն մի անգամ ես այն լսել այդ  
բերանից, մի անգամ միայն—ահա բոլորը, ինչ  
որ ինդրում եմ փոխարէն կեանքիս քառա-

սուն տարիների, որ խլում են ինձանից:  
— Կսիր, Մարիամ, — ասացի ես նրան, ժո-  
ղովելով նրա փոքրիկ ձեռիկները իմ ձեռնե-  
րի մէջ. — միթէ դու ինձ չես ճանաչում:

Նա նայեց ինձ վերայ իւր գեղեցիկ աչքե-  
րով և պատասխանեց.

— Ի հարկ է, ոչ:

— Լաւ նայիր, — կրկնեցի ես. — միթէ դու<sup>1</sup>  
ճշմարիտ չը գիտես ես ով եմ:

— Գիտեմ, — պատասխանեց նա, — դուք  
պարոն էք:

Աւազ, սիրել ջերմացերմ միայն մի էակ  
այս աշխարհում, սիրել նրան բոլոր սիրով, տես-  
նել նրա առաջումդ, իմանալ, որ ձեզ վերայ  
նայում է, խօսում է ձեզ հետ, պատասխանում է  
ձեզ և չէ ճանաչում ձեզ: Միայն նրանից ցան-  
կալ միխթարութիւն և տեսնել, որ նա միայն  
չէ հասկանում, ինչպէս դուք կարիք էք դդում  
նրա մէջ մօտիկ մահուան առջեւ:

— Մարիամ, դու հայր ունես:

— Այն, ունեմ պարոն, — պատասխանեց  
աղջիկը:

— Ունես. ապա ո՞րտեղ է նա:

Նա բարձրացրեց իմ վերայ իւր զարմացած  
աղիկները. — Այս, դուք չէք իմանում: Կա մեռել է:

Այսուեղ նա ոկտեց լաց լինել, ես հազիւ  
վայր չի ձգեցի նրան:

— Մեռել է, — ասացի ես: — Գիտես դու,  
Մարիամ, ինչ է նշանակում այդ — մե-  
ռել է:

— Այն, — պատասխանեց նա: — Կա հողի  
մէջ է և երկնքումն:

Եւ ինտոյ ինքը աւելացրեց.

— Առաւոտները և երեկոները ես միշտ ա-  
ղօթք եմ անում ~~բ~~ նրա համար, մայրիկի ծունկ-  
ների վերայ:

Ես համբուրեցի նրա ճակատը: — Ապա ասա  
ինձ, Մարիամ, քո աղօթքը:

— Այդ չէ կարելի: Ցերեկով աղօթք չեն  
ասում: Եկէք այսօր երեկոյեան մեզ մօտ, ես ձեզ  
համար կասեմ այդ:

Ինձ հէրիք էք տանջվել: Ես ընդհա-  
տեցի նրան.

— Մարիամ, ես քո հայրն եմ:

— Ա, — ասաց նա:

— Կուղես, որ ես քո հայրիկը լինեմ, —  
աւելացրի ես:

Կա երեսը շուռ տուեց.

— Ոչ, իմ հայրիկը աւելի գեղեցիկ էք:  
Ես ծածկեցի նրան համբոյներով և ար-

տասուքով: Նա աշխատում էր ազատվել իմ  
ձեռներից և գոչում էր.

— Պուք ձեր միրուքով ծակծկում էք, ցա-  
ւում է երես:

Այն ժամանակ ես նորից նստեցրի նրան  
ծունկներիս վերայ, առանց աչքս նրանից հե-  
ռացնելու, և հարցրի.

— Մարիամ, կարողանո՞ւմ ես կարդալ:

— Կարողանում եմ, — պատասխանեց նա:  
Ես լաւ եմ կարգում: Մայրիկն ինձ ստիպում է  
կարդալ տառեր:

— Դէ, կարդա մի քիչ, — ասացի ես, ցոյց  
տալով թղթի վերայ, որը նա ճմլում էր իւր  
փոքրիկ ձեռիկներում:

Նա բարձրացրեց իւր սիրունիկ զլու-  
խը. — Ես կարողանում եմ կարդալ միայն ա-  
ռասպելներ:

— Այդ ոչինչ, փորձիր, կարդա:

Նա բացարեց թուղթը և սկսեց հեղել, ցոյց  
տալով մատիկով. — դ, ա, դա, տ, ա, տա,  
դատա, վ, ճ, ի, ո, վճիռ, դաստիւթիւն...

Ես խլեցի նրա ձեռից թուղթը: Նա կար-  
գում էր ինձ իմ դատավճիռը: Գայեակը այդ  
գնել էր ճանապարհին մէկ սուով: — Նա ինձ  
արժէ աւելի թանգ:

Զը կան բառեր՝ արտայախտելու այն, ինչ  
որ ես զգում էի:

Իմ ուժգնութիւնս վախեցրեց նրան. նա  
քիչ մնաց որ լացէր: Յանկարծ ասաց նա ինձ. —  
Կ'հ, տուէք ինձ իմ թուղթը: Ես նրանով խաղ  
եմ անելու:

Ես տուի երեխան գայեակին. — Տարէ՛ք դրան:  
Յետոյ ես նորից ընկայ աթօռուի վերայ, մը-  
ռայլ, անպաշտպան, անլոյս: Ահա երբ պէտք է  
նրանք գան, ես ոչինչ թանգագին բան չունեմ  
այլեւ. որտիս վերջին թելը կտրաւած է: Աժմ  
ես պիտանի եմ այն բանին, ինչ-որ նրանք  
կամենում են անել:

### ՀՀԱՎ.

Բարի մարդիկ են այդ քահանան և բան-  
գապետը: Ինձ այնպէս երեւաց, որ նրանք ար-  
տասվեցին, երբ ես ասացի, որ տանեն իմ երե-  
խալին:

Վերջացած է: Այժմ պէտք է, որ ինքս իմ  
մէջ ամրանամ և հաստատամտութեամբ մտածեմ  
դահճի մասին, սայլի մասին, ժանդարմների  
մասին, կամուրջի վերայ խովող ամբոխի մասին,  
դեմափի վերայ կանգնած ամբոխի մասին, պա-

տուշաններում հաւաքված ամբոխի մասին, բոլորի մասին, ինչ-որ դիտմամբ ինձ համար պատրաստված կը լինի այդ մռայլ հրապարակի վերայ, որը ամբողջապէս կարող է սալայատակ լինել մարդկալին այն գլուխներով, որ ընկել են նրա վերայ:

Կարծեմ, մի ժամ էլ ինձ մնում է դեռ, որպէսզի պատրաստվեմ այդ ամենի համար:

ՀՀԱ.

Ֆողովուրդը քրքջալու է, ծափահարելու է, քաջալերելու է, և այդ բոլորը աղատ և բանդապահներին անյայտ մարդկանց մէջ, մարդկանց, որոնք մի ինչ-որ ուրախութեամբ վագում են այժմ դէպի պատժարան, այդ գլուխների բազմութեան մէջ, որոնք պիտի ծածկեն հրապարակը, քիչ գլուխներ չեն նախասահմանված վաղ թէ ուշ հետևել իմնին՝ կարմիր արկղի մէջ: Եւ քիչերը չեն ինձ համար ալսուեղ եկողներից, որ երբ ևիցէ կը զան իրանց համար:

Նրանց համար, որոնց նախասահմանված է այդ վիճակը, կայ Գրեվի հրապարակի վերայ մի չարագուշակ վայր, կենտրոն, որ որոգալիթ է ձգում դէպի ինքը: Եւ այնքան պլոտում են

նրա շուրջը, մինչ որ կը ընկնեն նրա մէջ:

ՀՀԱ.

Անուշիկ Մարիամ: Նրան տարին էլի խաղալու. նա այժմ նայում է կառքի միջից ամբոխին, և այլեւ չէ մտածում այն պարհնի մասին: Կարելի է, գեռ ես ժամանակ ունենամ զրելու նրա համար մի քանի էջեր, նրա համար, որ երբ և իցէ, տարիներից յետով, նա կարդայ և լաց լինի ալսօրուայ վերայ:

Այո՛, անհրաժեշտ է, որ նա դարձեալ ինձանից իմանայ իմ պատմութիւնը, և ինչո՞ւ այն անունը, որը ես թողնում եմ նրան, արիւնալի անուն է:

ՀՀԱ.

ԻՄ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.

ՀՅԱՊՈՐԴՅՈՒՆԻՒՅՆ: Չեն կարողացել գեռ գտնել այն թերթիկները, որ հետևում են նախընթացներին: Գուցէ, ինչպէս և ըստ երեսութիւն հետևեալները հաստատում են, մահապարտը ժամանակ չէ ունեցել նրանց զրելու:

Արդէն ուշ է եղել, երբ այդ միտքը նրա գլխի  
մէջ ծագել է:

ՀՀ ՎԻԻ.

Բատուշայից... և այսուհետ:

Բատուշայից...—Եւ այդպէս, ես արդէն  
այստեղ եմ: Գարշելի անցքը կատարված է:  
Հրապարակը այստեղ է և իմ լուսամտիս տակ  
արիւնածարաւ ամբոխը աղաղակում է, սպասում  
է ինձ, հրհռում է:

Որքան էլ ամրացրի ինձ, որքան էլ կուճ  
եկալ, սիրտս ընկել էր: Երբ ես տեսայ գլուխ-  
ներից ի վեր այդ երկու կարմիր ձեռները, սև  
եռանկլինին ծայրում, որոնք բարձրանում էին  
գետափի երկու լաստերների մէջ, սիրտս թալ-  
կացաւ: Ես պահանջեցի թուլտութիւն՝ վերջին  
խոստովանքը անելու: Ինձ բերին այստեղ և  
գնացին պտրել միորեւ է թաղաւորական դա-  
տախազի: Այժմ ես սպասում եմ նրան. գէթ-  
ինչ և է շահած կը լինեմ:

Ահա այդ ինչպէս եղաւ:

Ժամը երեքը խփեց,—և ինձ յայտարարե-  
ցին, որ արդէն ժամանակ է: Ես դողում էի,  
իբր թէ սրա մասին չէի մտածում ես ամբողջ  
վեց ժամ, վեց շաբաթ, վեց ամիս: Ինձ վերայ

այդ գործեց մի ինչ-որ անսպասելի բանի տպա-  
ւորութիւն:

Դարձեալ տարիս ինձ զանազան միջանց-  
ներով և զանազան սանդուխքներով: Ներս հը-  
րեցին ինձ երկու պահականոցների մէջտեղով  
ստորին յարկում մի ինչ-որ դահլիճ, մութ, նեղ,  
հաղիւ լուսաւորված, անձրեալին և ամպա-  
մած ցերեկով:

Մէջտեղում դրած էր աթոռ: Ինձ հրա-  
մայեցին նստել. ես նստեցի:

Դոների մօտ և պատերի տակով կանգ-  
նած էին մի քանի մարդիկ, չը հաշուելով քա-  
հանալին և ժանդարմներին. բացի այդ, այն-  
տեղ կային էլի երեք մարդիկ:

Առաջինը, աւելի բարձր և աւելի մեծ տա-  
րիքով, մի ամբակազմ և կարմրագէմ տղամարդ  
էր: Հազին ունէր վերնազգեստ, զլիխն՝ ճմլած  
եռանկիւնի զլիսարկ: Այդ նա է:

Այդ դահլիճն է, զլիսահատի ծառան: Եր-  
կու միւսները նրա ծառաներն էին:

Չէնց որ նստեցի, երկու միւսները, իբրև  
կատուներ, զաղտաղողի մօտեցան ինձ, ետևիցս,  
յետոյ յանկարծ ես զգացի պողուատի սառնու-  
թիւնը մազերիս մէջ, և մկրատը չխէխիկաց  
ականջներիս մօտ:

Պազերս, որոնց կտրատում էին ինչպէս  
որ պատահում էր, փունջերով թափում էին ու-  
սերիս վերայ, իսկ եռանկիւնի գլխարկով մարդը  
Հանդարտօրէն իւր զեր ձեռներով թօթափում  
էր դէնը:

Ճուրջանակի շշնջում էին:

Իսկ զրառմ դողանջում էր սարսափելի աղ-  
մուկը, իբր թէ մի ինչ-որ սասանումն տատա-  
նում էր օդը: Ես առաջ կարծեցի, թէ այդ զե-  
տըն է. քըքինջից, որը թնդում էր, ես իմացայ,  
որ այդ ամբոխն էր:

Երիտասարդը, որ զրում էր պատուհանի  
մօտ, իւր տետրակում, հարցրեց բանդապահներից  
մէկին.—Ի՞նչպէս են նրանք կոչում այն, ինչ-  
որ հիմա անում են:—Պահապարտի պճու-  
մը, —պատասխանեց բանդապահը:

Ես հասկացայ, որ այդ ամենը կը լինի  
վաղուայ լրագիրներում:

Յանկարծ գահճի սպասաւորներից մէկը  
Հանեց իմ բաձկոնակը, իսկ միւսը բւնեց իմ  
քարշ ձգած ձեռները, ոլորեց դէպի մէջքս, և ես  
զգացի, թէ ինչպէս թուկի հանդուցը դանդաղ, մի  
քանի պտուտներով զուգաւորեց իմ բռունցքները:  
Մինչդեռ միւտը բացեց իմ փողպատը: Բեկեղեայ  
շապիկս, միակ շորը՝ որ մնացել էր իմ մօտ

նախկին կենցաղիցս, կարծես թէ; Նրան սախ-  
պեց մի քիչ տատանվել. բայց յետոյ նա սկսեց  
կտրել օձիքը:

Այդ հրէշափին նախազգուշութեան ժամա-  
նակ, իմ պարանոցին կպչող պողլատի շօշափու-  
մից, իմ արմունկներս ցնցուեցին, և ես խուլ  
կրծտեցի ատամներս. դահճի ձեռքը դողաց:

✓—Յարգելի պարոն,—ասաց նա ինձ.—Նե-  
րեցէք: Յաւ ըլ պատճառեցի ձեզ արգե՞օք:

Այդ գահիձները այդպիսի կակդասիրտ մար-  
դեկ են:

Ամբոխը մռնչում էր աւելի բարձր և բարձր:  
Կարմրագէմ հաստլիկը մօտեցը ինձ քա-  
ցախում թաթախած թաշկինակը:

—Ճնորհակալ եմ ձեզանից,—ասացի ես, որ-  
քան կարող էի բարձրաձայն.—Հարկաւոր չէ,  
ես ինձ լաւ եմ զգում:

Սպա նրանցից մէկը կուացաւ և բարակ թո-  
կով կապեց ոտներս, այնպէս որ ես կարող էի  
միայն փոքրիկ քայլեր անել: Այդ թուկի ծալըը  
միաւորվեց այն թուկի հետ, որ կապել էր ձեռ-  
ներս: Յետոյ հաստլիկը ձգեց մէջքիս բամկոնը  
և նրա թևերը կշկոեց ծնօտիս տակ: Բոլորը,  
ինչ-որ պէտք էր անել, արին:

Այստեղ քահանան մօտեցաւ ինձ խաչելու-

թիւնը ձեռլին:—Գնանք, որդեակ, —առաց նա ինձ:

Այն ժամանակ դահճի օգնականները բունեցին կոներս, ես վեր կացայ և գնացի. ես շատ թողլ էի և ալկում էի, կարծես թէ, իւրաքանչիւր ոտիս վերայ երկու ծունկն կալ:

Այդ ըսպէին դրսի դուռը բացվեցաւ բացարձակ: Վայրենի աղաղակները, սառն օդը և սպիտակ լոյսը, այդ բոլորը միասին թափվեցին ինձ վերայ: Մուլթ միջանցքի խորտվթիւնից ես տեսայ, բոլորը միանգամից, անձրեւ միջով հազարաւոր մռնչող գլուխներ, պալատի գլխաւոր սանդուխքի վերայ անկարգ խռնուած—դէպ աջ, փողոցի հաւասարութեամբ, ժանդարմների ձիերի շարքը, որոնք կանգնած էին ցած դարբասի ներքոյ, ուստի ինձ երկում էին միմիայն նըրանց լանջերը և ոտները. ուղիղ ինձ դէմուղէմ՝ զինուորների զօրաբաժինը, պատերազմական կարգով. դէպի ձախ—սալլի ետեւ մասը, որին յենած էր ուղղաբերձ սանդուխքը: Զգուելի պատկեր, շրջանակուած բանդալին դռնով:

Ահա այդ զարհուրելի բոպէի համար էի ժողովում իմ մէջ բոլոր արիութիւնս: Ես երեք քաղլ արի, և միջանցքի սեմումն էի:

—Ահա նա, ահա նա,—աղաղակեց ամբոխը:—Վերջապէս, նա դուրս է գալիս: Բոլորովին

Հէնց իսկ քթիս տակ ծափ էին տալիս: Ամենասիրելի թագաւորը—նա ևս անգամ, կարծեօք, ընդունել էր աւելի սառն, քան թէ ես:

Սալլը սովորական էր, մի նիշար ձի լծած, սալլապանը՝ կարմիր նաշխերով զարդարուն՝ կապոյտ բարեհնով, ինչպէս Բիսեթրի պարտիզաններինն է: Եռանկիւնի գլխարկով հաստիկիր առաջինը բարձրացաւ նրա վերայ:

—Ողջոյն ձեզ, պարոն Սանսօն, —դոչում էին վանդակաձև ցանկապատերից բռնած երեխաները: Նրան հետեւց իւր օգնականը:—Կեցէ, Վարդի, —նորից զոռացին երեխանները: Նրանք երկուսն էլ նստեցին առաջի նստարանի վերայ:

Հերթը հասաւ ինձ. ես բարձրացայ բաւական հաստատ տեսքով:

—Փառաւոր է գնում, —առաց ժանդարմների մօտ կանգնած մի կին:

Ալդ անցութ զովասանքը արխութիւն տուեց ինձ: Քահանան նստեց ինձ հետ մի շարքով: Ինձ նստեցրին, երեխ, նստարանի վերայ, մէջքու դէպի ձին: Սառսուռը պատեց ինձ այդ վերջին ուշաղլութիւնից:

Կարաղանում են և ալստեղ մարդասէր լինել: Ես նաև շուրջս... ժանդարմներ՝ առջեկց, ժանդարմներ՝ ետեւց. իսկ յետոյ՝ ամբոխ, ամբոխ

և դարձեալ ամբոխ. գլուխների մի ամբողջ ծով:

Զիաւոր ժանդարմների խմբակը սպասում էր ինձ պայտի վանդակաձև ցանկապատի մօտ:

Սպահ հրամացից: Սայլը իւր ուղեկիցներով միասին սկսեց շարժվել, կարծես, ամբոխի մըռնչմամբ հրուելով: Անցանք ցանկապատը: Երբ սայլը ծովեց դէպի սեղանաւորների կամուրջը (Pont-aux-Change), հրապարակը դրդաց աղաղակներով սալայատակից մինչ կտուրները, և կամուրջները ու ափերը պատասխանեցին նրան այնպէս, որպէս թէ երկրաշարժ էր պատահել:

Նոյն իսկ այդ տեղում խմբակը, որ սպասում էր մեզ, միացաւ գնացքին:

— Գլխարկներդ վերցրէք, գլխարկներդ, — գոչում էին միանդամից հազարաւոր բերաններ, ինչպէս մի թագաւորի համար:

Այն ժամանակ ես դառն կերպով ծիծաղի և ասացի քահանացին.

— Նրանց գլխարկները վերցնել, իսկ իմ գլուխս:

Գնում էինք քայլ առ քայլ:

Ժաղկեվաճառների ափը բուրում էր անուշահոտութեամբ. վաճառի օր էր: Վաճառականները ինձ համար թողել էին իրանց փունջերը:

Թէմ ու դէմ, քիչ մօտիկ քառանկիւնի աշ-

տարակին, որ կազմում է արքունիքի անկիւնը, կան պանդոկիներ, որոնց վերնաբաժինները լիքն էին — իրանց լաւ տեղերով չափազանց գոհ — հանդիսականներով: Այդ պանդոկապետների համար լաւ օր է: Վարձում էին աթոռներ, սեղաններ, տախտակամածներ, սալիկը: Ամեն ինչ հանդիսատեսների տակ կորանում էր: Մարդկային արեան վաճառողները խլացնում էին իրանց աղաղակներով: — Ո՞վ է տեղ ուզում: Կատաղութիւնը տիրեց ինձ: Ես կամենում էի գոչել: — Ո՞վ է ուզում իմը: Իսկ սայլը զնում էր ու գնում: Ամեն մի քայլում ամբոխը անջատվում էր նրա ետևում, և ես իմ պղտորխած աչքերովս տեսնում էի, թէ ինչպէս նա նորից կոյտ-կոյտ խմբվում էր իմ ճանապարհի միւս տեղերում:

Սեղանաւորի կամուրջը մտնելիս, ես պատահմամբ յետ նայեցի դէպի աջ կողմը: Իմ հայացքը կանգ առաւ՝ հանդիպակաց ափում՝ տներից վեր, աշտարակի վերայ, սե, միայնակ, քանդակագործ զարդարանքներով ծակծակոտված աշտարակի վերայ, որի գագաթին ես նըկատեցի կիսադէմ երկու քարեայ հրէշներ: Զը գիտեմ ինչու, ես քահանացին հարցրի.

— Այդ ինչ աշտարակ է:

— Saint-jacques la Boushevie — Սուրբ

Յակովի սպանդանոցը,—պատասխանեց դահիճը:

Զը գիտեմ ինչու, բայց, ըլ նայելով խաւարին և խիտ, սպիտակագոյն անձրևին, որը կանդնած էր օդի մէջ, ինչպէս մի հսկայական սարդոստայն, ոչինչ, ոչ մի մանրամասնութիւն ինձանից զերծ չեր մնում: Նրանցից իւրաքանչիւրը բերում էր ինձ նորանոր տանջանքներ: Խօսքերով չէ կարելի արտայալու իմ զգացումները: Իսկ և իսկ մէջտեղում՝ միւնոյն Սեղանաւորների կամքջի, —որը, ըլ նայելով իւր լայնութեան, այնպէս խոնուած էր մարդկանցով, որ մենք հազիւ ընթանում էինք, —սարսափը տիրեց ինձ: Ես սկսեցի վախենալ (սնափառութեան վերին աստիճանը), որ կը ուշաթափիվեմ:

Այն ժամանակ ես սկսեցի ինձ զբաղեցնել, որպէսզի կոր և համը լինեմ դէպի բոլորը, բացի քահանալից, որի խօսքերը բոպէ առ բոպէ ընդհատվելով աղմուկից, հազիւ լսելի էին:

Ես վերցրի խաչելութիւնը և համբուրեցի նրան: —Խղճա ինձ, ով Աստուած, —ասացի ես. և աշխատում էի բոլորովին անձնատուր լինել այդ մտքին:

Բայց երերուն սայի իւրաքանչիւր հարուածը զարթեցնում էր ինձ: Յետու յանկարծ ես զգացի սաստիկ ցուրտ: Անձրւը թափանցում էր

շորերս և թրջում էր գլուխս, կարճ-խուզած մազերիս միջով:

—Այդ դուք ցրտից էք դողում, իմ որդիք, —հարցրեց քահանան:

—Այս, —պատասխանեցի ես: Աւաղ, ոչ միայն ցրտից: Կամքջից ծռվելու ժամանակ, ինչոր կանաչք ափսոսացին ինձ իմ երիտասարդութեան համար:

Մենք զնացինք չարագուշակ ափով: Ես սկսել էի արդէն ոչինչ չը տեսնել, ոչինչ չը լըսել: Բոլոր այդ ձախները, այդ գլուխները պատուհաններում, դռներում, կրպակների վանդակապտերում, լապտերների վերայ, այդ ագահ և քարասիրտ հանդիսատեսները, այդ ամբոխը, որի մէջ ամենքը ինձ ճանաչում էին, իսկ ես ոչ ոքի չէի ճանաչում, այդ՝ մարդկալին երեսներով սալարկեալ և զարդարած՝ ճանապարհը... Ես հարբել էի, փալտացել էի, ցնորվել էի: Անտանելի է քեզ վերայ կանգ առած աչքերի այդքան բազմութեան ճանրութիւնը:

Ես օրօրվում էի նստարանի վերայ, ուշադրութիւն չը դարձնելով մինչև անդամ քահանալի և խաչելութեան վերայ: Ինձ շրջապատող աղմուկի մէջ ես ալես չէի ջոկում ցաւակցութեան աղաղակները ուրախութեան աղաղակնե-

թից. ծաղըլ՝ ավսոսանքից, ձայները՝ աղմկից—  
այդ բոլորը ինձ համար խառնվել էր ի մի ընդ-  
հանուր թնդիւն, որը դղբում էր իմ զլիսի մէջ,  
իբրև պղնձեայ արձագանք: Իմ աչքերս մեքե-  
նալաբար կարդում էին մակաղիրները: Մի ան-  
գամ ինձ կալաւ տարօրինակ հետաքրլքութիւն—  
շուռ գալ և նայել, թէ ինչին եմ ես մօտենում:  
Այդ հոդոյս վերջին քաջութիւնն էր: Բայց մար-  
մինս հրաժարվեց. պարանոցս որպէս թէ քա-  
րացաւ, կարծես, վաղօրօք մեռած լինէր:

Ես կարողացաւ միայն ջոկել ձախ կողմից,  
գետի այն երեսում, Նօտր-Գամեան աշտարակը,  
որը ծածկում էր իրանով մի այլը, Այդ այն էր,  
որի վերայ գրօշակ կայ: Նրա վերայ շատ մարդ  
կար և այնտեղից, հարկաւ, լաւ էր երեռում:

Իսկ սայլը գնում էր ու գնում, իսկ կըր-  
պակները անցնում էին, իսկ նաշխած, ոսկեզօ-  
ծած մակաղիրները նշողում էին, իսկ խաժա-  
մուժը քրքջում էր և տրոփտրոփում էր ցեխի մէջ,  
իսկ ես անձնատուր էի եղել ուրիշի կամքին,  
ինչպէս քնածը անձնատուր է լինում անուրջ-  
ներին: Յանկարծ իմ աչքերը պարապեցնող կըր-  
պակների շարքը հրապարակի անկիւնում վեր-  
ջացաւ. ամբոխի ձայնը դարձաւ տւելի բարձր,  
աւելի հատու, աւելի ուրսխալի. սայլը յան-

կարծ կանգ առաւ, և քիչ մնաց որ քիթս  
տախտակներին էր կպչում: Քահանան ինձ բըռ-  
նեց: — Քաջալերվեցէք, — շշնչաց նա: Այն ժամա-  
նակ սայլի ետևին կպցրին սանդուխքը. Քահանան  
տուեց ինձ իւր ձեռքը, ես իջայ, իտոյ արի  
մի քայլ: Յետոյ շուռ եկայ, որ միւսը անեմ և  
չը կարողացայ: Ափի երկու լապտերների մէջտե-  
ղում ես տեսայ սարսափելի բան: Օ՛, այդ իրա-  
կանութիւն էր: Ես կանգ առի, որպէս թէ  
արգէն հարուածով խլացած:

— Ես ուզում եմ անել վերջին խոստովա-  
նութիւնս, — գոչեցի ես թող ձայնով:

Եւ ինձ բերին այստեղ: Ես պահանջեցի, որ  
ինձ թողնեն՝ հոգեսոր կտակս գրելու: Նրանք  
բացարին իմ ձեռները, բայց թոկը այստեղ է,  
ի՞ պատրաստի, իսկ մնացեալը ցածում:

### ՀԱՅԱ.

Դատաւոր էր, թէ գործակալ, թէ որևէ է  
աստիճանաւոր, սրա նման մէկը, եկաւ ինձ  
մօտ: Ես սկսեցի նրանից ներումն ինդրել,  
պարզելով ձեռներս դէպի նա և փարելով նրա  
ոտներին: Նա հարցրեց ինձ չարագուշակ ժպի-  
տով, այդ էր յատկապէս այն, ինչ-որ ես կա-  
մենում էի նրան յայտնել:

— Ներեցէք ինձ, ներեցէք, — կը կնեցի ես:

Կամ ի սէր Աստուծոյ, գէթ հինգ րոպէ յէտու-  
չքէշէ: Ո՞վ զիտէ: Ներումն դեռ կարող է գալ:  
Սարսափելի է այդ կերպով իմ տարիքում: Ի  
նելլ: Ներումն եկել է և վերջին րոպէ  
յաճախ է պատահել:

— Իսկ ով պէտք է պարզեւէ ներ.  
ողորմած պարոն, եթէ ոչ ես:

Անիծեալ գահիճ: Նա մօտեցաւ դատաւ.  
ըին և ասաց նրան, որ վճիռը պէտք է կատար-  
վէ յայտնի ժամին, որ այդ ժամը յայտնի է, որ  
նա, վերջապէս, բոլորի համար պատասխանա-  
նատու է, որ, բացի այդ, անձրև է գալիս և  
առ կարող է ժանդուվել:

— Ո՞, ի սէր Աստուծոյ, միմիայն մի րոպէ:  
Ներումն դեռ կարելի է զալու է. կամ ես կը  
սկսեմ պաշտպանվել, կը կծոտեմ բոլորիդ...

Դատաւորը և դահիճը դռւրս եկան: Ես  
մնացի միայնակ: Միայնակ ժանդարմների հետ:

Ո՞հ, սարսափելի ժողովուրդ. բորենիներ:

— Ո՞վ զիտէ, ինձ գուցէ յաջողվի փախ-  
չել, փրկուել, եթէ որ ներումն... Անկարելի  
է որ ներումն չը լինի: Ա՛, դատարկապորտ-  
ներ, կարծեմ արդէն զալիս են սանդուխքով...

Զ ո ր ս ժ ա մ ն է.

2211

2013

